

ნანაკელ გემასთოებრივ և გურათ, ხმანალ გევანს ხანძარი

## Ասույթներ հայոց լեզվի մասին

Մեր շուրջը լեզուներ նոր ու հին, մեր շուրջը խոսում են այլորեն,  
Եկ խոսենք, եղբայր ին հայերեն: Կուլ չերթանք այս ահեղ լափումին  
Թուլի չտանք մեր լեզուն ավերեն, Եկ խոսենք, միշտ խոսենք հայերեն:

Խաչիկ Դաշտենց

Այս ժամանակ, երբ ֆրանսիա անունը  
նույնիսկ գոյություն չուներ, Հայաստանը  
մեծ դեր է խաղացել պատմության մեջ,  
այն ժամանակներում, երբ ֆրանսերենը  
դեռևս չէր տարբերվում լատիներենից,  
գոյություն ուներ հայերեն կարևոր գրակա-  
նություն:

Լեզուն ազդի հոգին է. կենդանի է  
այդ հոգին, կենդանի է ազգը, կենսունակ է  
առաջինը ուրեմն՝ կենսունակ է երկրորդը:

Վահան Տերլյան

## Ա.ՄԵՐ (Փրանսիացի հայագետ)

Խլեցեք ժողովրդից ամեն ինչ, նա կարող է վերականգնել. սակայն խլեցեք նրա լեզուն, և նա այլևս չի ստեղծի այն: Ժողովուրդը կարող է ստեղծել նույնիսկ նոր հայրենիք, բայց լեզու՝ երբեք. մահացավ լեզուն ժողովրդի շուրթերում՝ մահացավ և ժողովուրդը:

## Կոնստանին Ուշինսկի

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Լեզուն և նրա դերը հասարակության մեջ

Լեզուն մարդկանց հաղորդակցման հիմնական միջոցն է: Այն կազմված է լսելի և տեսանելի նշաններից, որոնց միջոցով մարդիկ արտահայտում են իրենց մտքերը, գզացմունքները, կամքը, դրանք հաղորդում ուրիշներին և իրար հասկանում:

Լեզուն հնարավորություն է տալիս միևնույն հատկանիշն ունեցող առարկաներ խմբավորել, այսինքն՝ ընդհանրացում կատարել, առանձնացնել առարկաների հատկանիշները և դրանց մասին խոսել առարկաներից անկախ: Լեզուն ձևավորում է մտածողությունը և զարգանում մտածողության զարգացման հետ միասին:

## Դայոց լեզուն և նրա տեղը աշխարհի լեզուների մեջ

Աշխարհում կա շուրջ երեք հազար լեզու: Ըստ խոսողների քվի՝ այդ լեզուները տարբեր տարածում ունեն: Կան լեզուներ, որոնցով խոսում են միայն մի քանի հազար կամ նույնիսկ մի քանի հարյուր մարդ: Դայերենը խոսողների քանակով միջին տարածման լեզու է. նրանով խոսում է ուրեմնի ավելի մարդ:

Աշխարհի լեզուները կազմում են ցեղակցական տարբեր խմբեր կամ, ինչպես ընդունված է կոչել, լեզվաընտանիքներ: Լեզվաընտանիքը ցեղակից, այսինքն միևնույն աղբյուրից ծագած լեզուների խումբ է: Լեզվաընտանիքներից ամենամեծը հնդեվրոպական է, որն իր մեջ ներառում է բազմաթիվ ճյուղեր և ենթաճյուղեր: Լեզվաընտանիքների մեջ մտնող լեզուները ցեղակցական տարբեր մերձավորություն ունեն: Ըստ ցեղակցության աստիճանի՝ լեզվաընտանիքի մեջ մտնող լեզուները կազմում են ճյուղեր, այդ ճյուղերը՝ ենթաճյուղերի: Դայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքում կազմում է առանձին ճյուղ:

Իր պատմության ընթացքում նա շփվել է շատ լեզուների հետ, ազդել նրանց վրա և ազդեցություն կրել, ունի 50-ից ավելի բարբառներ և խոսվածքներ: Դայերենի մեջ շատ բառեր են մտել պարսկերենից, հունարենից արաբեներենից և ուրիշ լեզուներից:

## Դայոց լեզվի գրավոր շրջանի զարգացման փուլերը

Աշխարհի ժողովուրդները խոսում են մոտ 3000 լեզուներով: Այս լեզուները ուսումնասիրության առարկա են դարձել XVII-XVIII դարերից սկսած: Գիտնականները լեզուները դասակարգել են խմբերի՝ անվանելով դրանք լեզվաընտանիքներ: Առավել ուսումնասիրված է հնդեվրոպական լեզվաընտանիքը, որի առանձին ճյուղն է կազմում հայերենը:

Դայերենը աշխարհի հնագույն լեզուներից է: Նրա բառապաշարը կազմում է մոտ 250.000 – 300.000 բառ: Խոսակցական բառապաշարը կարող է կազմել 3 – 8 հազար բառ: Դայերենում արմատական բառերը մոտ 1000-ն են:

Երեք տասնամյակ առաջ լույս տեսավ ոռւս և վրաց գիտնականներ իւվանովի և Գամկրելիձեի համատեղ աշխատությունը, որը համոզիչ փաստարկներով ամբողջ աշխարհին հայտարարեց, որ հնդեվրոպական ազգերի նախահայրենիքը Վանա լճի տարածքն է, իսկ լեզուն, որով նրանք խոսում են, նախահայրենն է:

Համեմատական լեզվաբանության միջոցով իւվանովը և Գամկրելիձեն ապացուցեցին հայոց լեզվի բնիկ լինելու փաստը:

Երկար ժամանակ վիճելի հարց է եղել, թե մինչև V դարը հայերը ինքնուրույն գիր ու գրականություն ունեցե՞լ են: Կարծիքները բաժանվում են երկու խմբի. մի մասը

հաստատում է ինքնուրույն գիր ու գրականության առկայությունը՝ վկայակոչելով հեթանոս շրջանիմենական մատյանները, գրավոր պատառիկները, նշանագրերով դրամները, թատրոնի գոյությունը: Մյուս մասը պնդում է, որ հայերը խոսում էին բնիկ (հայերեն) լեզվով, սակայն գրում էին հունարեն, պարսկերեն և ասորերեն տառերով: Գոյություն են ունեցել նաև Ղանիեւան գրեր, որոնցով Մաշտոցը ուսուցչական աշխատանք է տարել երկու տարի:

Դայոց լեզուն անցել է զարգացման երեք շրջան՝

I հին հայերեն (գրաբար) V-XIդդ.

II միջին հայերեն (կիլիկյան) XII-XVIդդ.

III նոր հայերեն (աշխարհաբար) XVII դ. ...

Աշխարհաբար լեզուն զարգացել է երկու ճյուղով՝ արևելահայերեն և արևմտահայերեն:

## Մեսրոպ Մաշտոց. գրերի ստեղծումը

(մոտ 362-440)

Ծնվեց նա՝ այր մի՝ Մաշտոց անունով...  
Եվ մենք՝ նրանով միշտ զինավառված,  
Սիասին եղանք ցիր ու ցան արված,  
Անվերջ կրելով զարկեր ու հարված...  
Դադրեցինք դաժան ժամանակներին...  
Մնացինք կանգուն:

Պ. Սևակ

Քրիստոնեության մուտքը բարդ և արունակի գործընթաց էր, որի արդյունքում վերացվեցին հեթանոսական ձեռագիր մատյանները, ոչնչացվեցին տաճարներն ու մեհյանները:

Քարոզը տարվում էր հունարեն կամ ասորերեն լեզուներով, որն անհասկանալի էր հասարակ ժողովրդին: Պետականությունը կորցրած ժողովուրդը կանգնած էր ոչնչացման եզրին, եթե հայոց իմաստուն այրերը ձեռնամուխ չլինեին գրերի ստեղծմանը: Զայ ժողովրդին սատարող հերոս էր պետք, բայց ոչ զենքի, այլ հոգու: Այդպիսին եղավ 5-րդ դարի մշակույթի հիմնադիր Մեսրոպ Մաշտոցը:

Մեսրոպ Մաշտոցը ծնվել է 361 թվականին, Դայաստանի Տարոն գավառի Դացեկաց գյուղում, ազատ շինականի ընտանիքում: Ստացել է փայլուն կրություն, տիրապետել է հունարեն, պարսկերեն, ասորերեն և վրացերեն լեզուներին: Լինելով ժամանակի կրթված անձնավորություններից մեկը՝ գիտակցում էր ինքնուրույն գիր ու գրականության անհրաժեշտությունը: Աշխատում էր արքունիքում որպես դպիր (գրագիր), շրջում էր Դայաստանի տարբեր գավառներում և հասկանում, որ հայերեն գրավոր լեզուն պետք էր քարոզը հայերեն կարդալու համար: Կրոնական գրերը հունարեն էին կամ ասորեն, ժամասացությունը նույնպես կատարվում էր ժողովրդին անհասկանալի այդ լեզուներով:

Շրջագայությունների ընթացքում Մաշտոցը տեսավ ու զգաց, որ իր ժողովուրդը կանգնած է ահավոր վտանգի առջև: Դա ծուլման, այսինքն՝ հայության վերացման վտանգն էր: Դրա դեմ կարելի էր կռվել հայերեն գիր ու գրականություն, հայկական դպրոց ունենալով, որոնք կմիավորեին երկու մասի բաժանված հայ ժողովրդին և կղառային նրա գոյատևման առհավատչյան:

Մաշտոցը կաթողիկոս Սահակ Պարթևի հետ միասին ձեռնամուխ Եղավ հայերեն գրերի ստեղծման գործին, որն էլ կատարեց այնքան փայլուն, որ նրա ստեղծած նշանագրերը կատարելապես համապատասխանեցին ժամանակի հայոց լեզվի հնչյունական համակարգին:

Երկարատև, իսոր գիտական հետազոտություններից հետո Մեսրոպ Մաշտոցը հանճարեղ ճշտությամբ որոշեց հայերենի հնչյունները, ամեն մի հնչյունի համար ստեղծեց մեկ տառ՝ յուրաքանչյուրին տալով թվային արժեք, սահմանեց գրության ուղղությունը՝ հորիզոնական, ձախից աջ: Հայերեն գրերի ստեղծումը բուռն ոգևորություն առաջացրեց հասարակության և մտավորականության մեջ: Սկսվեց գրական–ստեղծագործական և թարգմանական բուռն գործունեություն: Մաշտոցը և իր աշակերտները ձեռնամուխ Եղան Աստվածաշնչի և այլ գրքերի թարգմանությանը: Ծնունդ առավ հայոց թարգմանական գրականությունը: Վաղարշապատում Մաշտոցը հիմնեց հայկական առաջին դպրոցը և տվեց առաջին դասերը, այնուհետև դպրոցներ հիմնեց Հայաստանի տարբեր շրջաններում: Մ.Մաշտոցն իր աշակերտներին ուղարկեց արտասահման՝ ծանոթանալու ժամանակի մշակութային արժեքների հետ, կատարելագործվելու և հմտանալու: Մաշտոցն ու իր աշակերտները նաև ստեղծագործում էին. գրուն էին կրոնական, պատմական գրքեր:

Մեսրոպ Մաշտոցի մասին Մ. Խորենացին իրավամբ ասել է. «Տա հրեշտակի տեսք ուներ, բեղմնավոր միտք, պայծառ էր խոսքով, գործերով՝ ժուժկալ, մարմնով՝ փառահեռ, հավատով՝ ուղիղ, հույսով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, ուսուցանելիս՝ անձանձրույթ»:

Ըստ հայ պատմիչների՝ Մ.Մաշտոցը գործունեություն է ծավալում Վրաստանում, Աղվանքում և ստեղծում նրանց այբուբենը:

Մ.Մաշտոցը վախճանվել է 440 թվականի փետրվարի 17-ին: Նրա աճյունը ամփոփված է Օշականում, որը դարձել է ուխտատեղի:

Դայ ժողովուրդը երբեք չի մոռանա իր դպրության հիմնադիրներին, մատենագիրներին ու առաջին ուսուցչին: Նրանց դասել է սրբերի շարքում:

1962թ. Հայաստանում և սփյուռքում մեծ շուրջով նշվեց Մ. Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը:

Նրա անունով են կոչվում հասարակական հիմնարկներ, կազմակերպություններ, դպրոցներ, կա նրա անունով փողոց և պետական շքանշան:

Նրա ստեղծած կատարյալ այբուբենով է, որ մենք ուսանում ենք առ այսօր, ուսանելու ենք վաղը՝ երբեք չքաժանվելով նրանից և շարունակելու ենք կերտել մեր ինքնատիպ ու հարուստ մշակույթը:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ( 361-440 )

\*

\* \* \*

Վտանգիմ ի բազմութենէ մեղաց իմոց,  
Աստու՞ած խաղաղութեան, օգնեա' ինձ:

Ալեկոծիմ հողմով անօրենութեան իմոյ,  
Թագաւո՞ր խաղաղութեան, օգնե՞ա ինձ:

Ի խորըս մեղաց ծովու տարաբերեալ ծըփիմ  
Նաւապե՞տ բարի, փըրկեա' զիս:

\*  
\* \* \*

Մեղք իմ բազում են յոյժ,  
Ծանր են քան զաւագ ծովու,  
Քանզի քեզ միայնոյ մեղայ,  
Ողորմեա' ինձ, աստուած:

Բաց, տէ՛ր զդուան ողորմութեան,  
Որ ողբալով կարդամ առ քեզ,  
Քանզի քեզ միայնոյ մեղայ,  
Ողորմեա' ինձ, աստուած:

Յեղ իս զգթութիւնդ քո,  
Բազումողորմ և մարդասէր.  
Քանզի քեղ միայնոյ մեղայ,  
Ողորմեա' ինձ, աստուած:

## V ԴԱՐ. ԳՐԱԲԱՐՁԱՆ ՇՐՋԱՆ

### Թարգմանական գրականություն

Ինքնուրույն գիր ստեղծելուց հետո անհրաժեշտ էր հայացնել համշխարհային գրականության կարևոր նմուշները: Մ.Մաշտոցը և Սահակ Պարթևը իրենց աշակերտների հետ ձեռնամուխ են լինում թարգմանական գործին: Թարգմանվում են Աստվածաշնչից Սոլոմոնի առակները, և առաջին հայատառ նախադասությունը դառնում է «ճանաչել զիմաստությունն և զխրատ, իմանալ զբանս համճարոյ»: Անհրաժեշտ կրոնական գործերը հունարենից և ասորետենից թարգմանելուց հետո սկսում են թարգմանել փիլիսոփայական, բնագիտական, ճարտասանական, պատմական, քերականական գործեր: Կարևոր է, որ այդ ժամանակ թարգմանված գործերի մի մասը հայտնի են միայն հայերեն թարգմանությամբ, քանի որ դրանց բնագրերը չեն պահպանվել: Ուկեղարի թարգմանություններից մեզ են հասել «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը», որը աշխարհակալի կյանքի, նրա մղած պատերազմների և գործերի մասին է: Յետաքրքիր է «Խիլկար իմաստունի պատմությանը» թարգմանությունը, որը խրատանի և ուսուցողական գիրը է:

Իրենց բուռն թարգմանական գործունեությամբ, հայտնի են Մամբրե Վերժանողը, Ղավիթ Անհաղթը, Ղազար Փարպեցին, Մովսես Խորենացին և այլք: Առաքելական Եկեղեցին առաջին թարգմանիչներին դասել է սրբերի շարքը և տարին երկու անգամ նշում է Թարգմանչաց տոնը:

### Ինքնուրույն գրականություն

Իր ինքնությունը գտած, ազնվացած հայ միտքը պետք է տար սեփական արդյունքները, և կարծ ժամանակում ստեղծվեց ինքնուրույն գրականություն: ճարտասանակիլիսոփայական գրականությունը փայլեց Մաշտոցի ճառերով ու թղթերով, Ղավիթ Անհաղթի փիլիսոփայական երկերով: Պատմագրությունը՝ Խորենացու, Ազաթանգեղոսի. Բուզանդի, Եղիշեի «Պատմություններով»: Սահակ Պարթևն ու Մաշտոցը գրեցին հոգևոր երգեր՝ շարականներ: Եզնիկ Կողբացին գրեց «Եղծ աղանդոց»(աղանդների հերքում) երկը,

որն ուներ ճանաչողական մեծ արժեք: Այս գրքերով դասավանդվել են միջնադարի բարձրագույն դպրոցներում: Ծաղկեց քնարերգությունն ու առակագրությունը, բժշկությունը, խազագրերի համակարգը(նոտաներ): Բացվում են բարձրագույն դպրոցներ, ուր ուսուցանվում էին տարբեր առարկաներ (Տարեկի, Գլածորի համալսարաններ):

## Վահագնի ծնունդը

Երկներ երկին,  
Եկներ երկիր,  
Երկներ և ծովն ծիրանի.  
Երկն ի ծովուն ուներ  
Եվ զկարմրիկն եղեգնիկ:  
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելաներ,  
Ընդ եղեգան փող՝ բոց ելաներ,  
Եվ ի բոցոյն  
Վազեր խարտեաշ պատանեկիկ.  
Նա հուր հեր ուներ  
Բոց ուներ մորուս  
Եվ աչկունքն էին արեգակունք:

## Մովսես Խորենացի. «Հայոց պատմություն»

Վ դարի պատմիչ Մովսես Խորենացին ծնվել է 410 թ-ին Տարոնի գավառի Խորոն գյուղում: Նրա մասին կենսագրական տեղեկություններ քիչ կան: Կրթությունն ստացել է Սյունիքում՝ Մեսրոպ Մաշտոցի հիմնած դպրոցում: Շարունակել է կրթությունը Վաղարշապատում, սովորել է հունարեն և ասորերեն, պահլավերեն էլ գիտեր գործնականապես (հին պարսկերեն): Լեզուների իմացությունը օգնում է նրան ճանապարհորդելու Ալեքսանդրիայում և Ասորիքում, ուր նա առաջադեմ աշակերտների հետ ուսումնասիրում և կատարելագործում է իր գիտելիքները:

Չնայած տգետ հոգևորականների հալածանքներին՝ Խորենացին գրում էր, թարգմանում: Սահակ Բագրատունու պատվերով նա գրում է «Հայոց պատմություն» մատյանը, որը բաղկացած է 3 գրքից. Հայոց մեծերի ծննդաբանություննը, Հայոց միջին պատմություննը, Մեր հայրենիքի պատմության ավարտը: Մատյանը հայ ժողովրդի պատմության ամբողջական շարադրանքն է, ունի կուռ ժամանակագրական ցանկ: Խորենացին օգտվել է բազմաթիվ հայ և օտար պատմիչների ստեղծագործություններից (Մար-Աբաս Կատինա, Ագաթանգեղոս, Հոմերոս, Պլատոն և այլն):

Մատյանը ծառայել է որպես դասագիրք, փաստառատ տեղեկություններ է տալիս հարևան երկրների մասին: Մատյանի միջոցով մեզ են հասել ժողովրդական բանավոր ավանդությունները՝ Գողթան երգերը:

Մատյանն առաջին անգամ հրատարակվել է 1695թ. Ամստերդամում, իսկ աշխարհաբար թարգմանվել է 1889թ.:

«Հայոց պատմություն» մատյանը Մ.Խորենացու հայրենասիրական զգացումների խտացումն է. նա ուզում է իր հայրենիքը տեսնել փառավոր, անկախ, ապահով: Բայց ժողովուրդը գտնվում է թշվար ու ողորմելի վիճակում, որն էլ ցավ է պատճառում հեղինակին: Նա մատյանն ավարտում է «Ողբով», ուր ներկայացնում է ազգի անմիջական պարագաները:

Վիճակը, ողբում սիրելի ուսուցիչներին մահվան համար, քննադատում սոցիալական բոլոր խավերին և ազգի թշվառ վիճակի պատճառը համարում հավատքից հեռանալը:

## Ողբ ...

Ողբում եմ քեզ, Յայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսյին ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ և ուսուցանողդ. Վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը:

Ուսուցիչները՝ տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած և ոչ Աստծուց կոչված, փողով ընտրված և ոչ Սուլը Յոգով, ոսկեսեր, նախանձուտ, թողած հեզությունը, որի մեջ Աստված է բնակվում, և գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը:

Կրոնավորները՝ կեղծավոր, ցուցանոլ, սնափառ, պատվամոլ, քան թե աստվածասեր:

Աշակերտները սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ փութաջան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են:

Զինվորականները՝ անարի, պարծենկոտ, գենք ատող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմոլ, ելուզակ:

Իշխանները՝ ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, ժլատ, ազահ, հափշտակող, երկիր ավերող, աղտեղասեր:

Դատավորները՝ տմարդի, ստախոս, խաբող, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող, անհաստատ, հակառակող:

Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած:

## Յայոց լեզվի զարգացման միջնադարյան շրջան

Գրաբարյան շրջանին հաջորդում է միջնադարյան շրջանը, որը նշանավորվում է գեղարվեստական, պատմագրական գրականության զարգացմամբ: Ծաղկում է մանրանկարչությունը /Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ/, իրավագիտությունը /Մխիթար Գոշ «Դատաստանագիրը»/, բժշկագիտությունը /Ամիրովլաթ Ամասիացի, Մխիթար Յերացի/: Վերելք է ապրում եկեղեցական շինարարությունը, զարգանում է քաղաքաշինությունը:

Անիում, Յաղպատում, Սանահինում բացվում են համալսարաններ, որտեղ սովորում էին բնական գիտություններ /աստղագիտություն, տոմար/, գրչության արվեստ, մաթեմատիկա, ճարտասանություն և այլն: Միջնադարում ստեղծագործել է աստղագետ, մաթեմատիկոս Անանիա Շիրակացին, որն ընդունել է երկրի գնդաձևությունը և բացատրել աշխարհի տիեզերական երևույթները:

Ժամանակաշրջանը տվեց գրական շարժումը կողմնորոշող արտակարգ մեծություններ՝ Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Գրիգոր Մագիստրոս, Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի: Գրականությունը դարձավ աշխարհիկ նոտեցավ կյանքին: Ժամանակաշրջանի հիմնական ժամանական շարականը, խրատը, ողբը, ներբռողը, իսկ քնարերգության պսակը դարձան հայրենները (հայերեն): Դրանց ընդհանուր քանակը հասնում է մոտ հինգ հարյուրի, որոնցից շատերը վերագրվում են աշուղ նահապետ Քուչակին: Յայենները չորստողանի, տասնհինգ վանկանի փոքրածավալ գողտրիկ բանաստեղծություններ են:

Զգալի փոփոխություններ կրեց գրական հայերենը՝ իր մեջ ներառնելով ժողովրդական կենդանի խոսքի արտահայտություններ:

\* \* \*

Հոգի՛, թե հոգիս ուզես,  
Թէ չասեմ. հանեմ տամ ի քեզ.  
Ապա թե աչերս ուզես,  
Ես ինչո՞վ նայիմ դեպ ի քեզ:

\* \* \*

Ես աչք ու դու՝ լոյս, հոգի՛,  
Առանց լոյս՝ աչքն խավարի.  
Ես ձուկ ու դու ջուր, հոգի՛,  
Առանց ջուր՝ ձուկն մեռանի.  
Երբ զձուկն ի ջրեն հանեն,  
Ալվի<sup>1</sup> ջուր ձգեն, նայ ապրի.  
Երբ զիս ի քենե զատեն,  
Քան զմեռնելն այլ ճար չի լինի:

\* \* \*

Երեկ ցորեկով բարով  
Տանէին մեկ եար մի ճորով.  
Ըզնա ճորով է տարած  
Կամ խաբած է զինքն դրամով.  
Խերնոր դրամով լինի,  
Զինքն երել պիտի կրակով.  
Խերն խնծորո՞վ պիտի  
Ու դրա՞մ-դրա՞մ շեքերով:

\* \* \*

Եկին ու խապար բերին,  
Թե քո եարն եղեր հաբեղայ.  
ճուշ արմացքըն զիս պատեց,  
Թե նա ո՞նց եղաւ հաբեղայ.  
Բերնիկն եր շաքրի սովոր,  
Աճապ ո՞նց կերաւ նա բակլայ.  
Անձիկն եր շապկի սովոր,  
Աճապ ո՞նց հագաւ նա վալայ<sup>1</sup>:

Միջնադարյան շրջանը եզրափակում է սիրո մեծ երգիչ Սայաթ – Նովան:

<sup>1</sup> ալվի – նորից, կրկին, վերստին  
<sup>1</sup> վալայ – կոպիտ զգեստ

## «Սասնա ծռեր» էպոսը

VII-XI դարերում լայնորեն զարգանում էր գուսանական քնարերգերգությունը: Այս ժամանակ էլ ձևավորվել է «Սասնա ծռեր» էպոսը, որը պատկերում է արար բռնակալների դեմ հայ ժողովրոի երկարատև պայքարը: Էպոսը բաղկացած է 4 հիմնական ճյուղերից, որոնք կապակցված են գլխավոր հերոսների սերնդակցությամբ. «Սանասար և Բաղդասար», «Մեծ Միեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Միեր»: Եպոսն ունի հիսուն պատում և կազմում է երկուսուկես հազար էջ:

Իր սիրելի հերոսներին ժողովուրդը անվանել է «ծռեր», այսինքն՝ խենթեր: Բոլոր հերոսներն աչքի են ընկնում գեղեցկությամբ, դյուցազնական ուժով: Նրանք իրենց ուժն ու զորությունը ստանում են մայր հողից ու ջրից: Ինչան Կաթնաղբյուրի ծնունդ են Սանասարն ու Բաղդասարը, այնպես էլ Վանա ծովի հատակից են դուրս եկել երկրի ուժը մարմնավորող քուռկիկ Զալալի անհաղթ նժույգը և Թուր Կեծակին: Եպոսի հերոսները պարզաբնիտ են, համառ, ազատասեր, սակայն անմիտ ու անգետ չեն: Սասնա քաջերը կառուցող շինարաներ են: Սանասարն ու Բաղդասարը կառուցում են Սասունը; Մեծ Միերը՝ Մարութա Աստվածածնի վանքը: Յերոսներին խորթ են նենգությունը և խորամանկությունը: Ժողովրոի բարօրության համար նրանք գենք են վերցնում, պատրաստ են իրենց հողի համար զոհվել: Սասնա ծռերի առաջինությունները կատարելության են հասել Դավիթի կերպարում, որին ժողովուրդը իդեալականացրել է: Նա չափազանց սիրառատ է, ունի ջերս և սիրառատ սիրտ, ազնիվ է, սիրանք է գործում ի բարօրություն իր ժողովրոի և հայրենիքի:

Էպոսում հատուկ հնայքով ներկայացված են հայ կանայք, որոնք պատրաստ են զոհելու իրենց հայրենիքի, ընտանիքի, զավակների համար:


Էպոսում հանդես է գալիս ժողովուրդը՝ իր անսասան ուժով, իմաստնությամբ, ստեղծարար աշխատանքով, լավատեսությամբ: Ժողովուրդը փորձով, խրատներով օգնում է Սասնա քաջերին, կանխում սխալները, ճիշտ ուղի ցույց տալիս: Եվ քաջերը լսում են ժողովրոի իմաստուն խոսքը:

Էպոսը ասվել-պատմվել է, իսկ որոշ հատվածներ երգվել են: «Սասնա ծռեր» էպոսում արտահայտված են ժողովրոի իդեալը՝ Սասնա տունը՝ Յայաստանը, տեսնել ազատ ու երջանիկ, խաղաղ ու ստեղծարար աշխատանքի լծված:

«Սասնա ծռեր» էպոսը բանասացների միջոցով սերնդեսերունդ հասել է մինչև մեր օրերը: Այն առաջին անգամ գրի է առել Գարեգին Սրվանձտյանը և հրատարակել 1874թ: Մի ուրիշ տարբերակ գրի է առել և հրատարակել Մանուկ Աբեղյանը 1889թ-ին: 1939թ-ին, էպոսի ստեղծնան հազարամյակի առիթով կազմվել է մի համահավաք բնագիր, որը 1964թ-ին մասնակցել է աշխարհի էպոսների միջազգային մրցույթին և շահել առաջին մրցանակ:

Իր գաղափարներով, հորինվածքով էպոսը լավագույններից է աշխարհում: Այն թարգմանված է չինարեն, պարսկերեն, անգլերեն, վրացերեն, լեհերեն լեզուներով: Էպոսի ամենահաջողված մշակումն է Հ.Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմը: Յիշենք նաև եր. Քոչարի «Սասունցի Դավիթ» հոյակերտ արձանը, որը ազատության համար հայ ժողովրոի մղած պայքարի խորհրդանշիշն է:

## Եպոսի տոհմածառը



### Գրական արևելահայերեն. զարգացման աբովյանական ուղղությունը

Արևելահայերենի մշակման և տարածման գործում մեծ է հայ նոր գրականության հիմնադիր, լուսավորիչ Խաչատոր Աբովյանի դերը: Նա իր հասարակական, քաղաքական գործունեությամբ դարձավ աշխարհաբարի մշակման, XIX դարի մշակույթի զարգացման սկզբանավորող:

Դորպատի համալսարանից վերադառնալով կայուն գիտելիքներ ստացած (այնտեղ ուսումնասիրել էր տարբեր լեզուների զարգացման ընթացքը), համարում էր, որ գրաբարը մնում է «գրքի լեզու, այն պատճեց է, անհասկանալի ժողովրդի համար»:

Աբովյանական ուղղության կողմնակիցներն էին Ավ. Խաչակյանը, Յ. Թումանյանը, որոնք համարում էին, որ պետք է ստեղծագործել ժողովրդին հասկանալի լեզվով: Այս ուղղությանը հատուկ էր հարազատությունը ժողովրդական բարբառին, մտածողությանը, քերականական ձևերին: Ինքը՝ Խ. Աբովյանը, «Վերք Յայաստանին» գրել է Քանաքեռի բարբառով:

Ժողովրդին հասկանալի և նրա բախտի մասին Յ. Թումանյանը հյուսել է իր հիասքանչ պատմությունները և խոհական քառյակները այս ուղղությանը բնորոշ լեզվով: Նա երազում էր, որ մարդը լինի գեղեցիկ ու հավերժական, ինչպես բնությունը: Կյանքի վերջին օրերին Յ. Թումանյանը ամբողջացնում է կյանքից ստացած իր տպավորությունները, խոհերը, կենսափորձը, որից էլ ծնվում են նրա քառյակները՝ հոգու փոքրիկ պատմությունները:

## Քառյակներ

\*

\* \* \*

Ինչքա՞ն ցավ եմ տեսել ես,  
Նենգ ու դավ եմ տեսել ես,  
Տարել, ներել ու սիրել, -  
Վատը՝ լավ եմ տեսել ես:

\*

\* \* \*

Քանի՞ ձեռքից եմ վառվել,  
Վառվել ու հուր եմ դառել,  
Հուր եմ դառել՝ լույս տըվել,  
Լույս տալով եմ ըսպառվել:

\*

\* \* \*

Լինե՞ր հեռու մի անկյուն,  
Լինե՞ր մանկան արդար քուն,  
Երազի մեջ երջանիկ,  
Հաշտ ու խաղաղ մանկություն:

\*

\* \* \*

Աղբյուրները հնչում են ու անց կենում,  
Ծարավները տենչում են ու անց կենում,  
Ու երջանիկ ակունքներին երազուն՝  
Պոետները կանչում են ու անց կենում:

\*

\* \* \*

- Ես է, որ կա... ճիշտ ես ասում. թասըդ բե՛ր:  
Ես էլ կերպա՝ հանց երազում, թասըդ բե՛ր:  
Կյանքն հոսում է տիեզերքում զընգալեն,  
Մեկն ապրում է, մյուսն ըսպասում. թասըդ բե՛ր

\*

\* \* \*

Յիմի բացե՞լ են հանդես  
Երգիչները իմ անտես  
Զա՞ն, հայրենի՞ ծղրիդներ,  
Ո՞վ է լսում հիմի ձեզ:

\*  
\* \*  
ՀԵ՞յ ճամփաներ, ճամփանե՛ր.  
Անդարձ ու հին ճամփաներ,  
Ովքե՞՞ր անցան ձեզանով,  
Ո՞ւր գընացին, ճամփաներ:

\*  
\* \*  
Յին աշխարհը ամեն օր  
Յազար մարդ է մըտնում նոր,  
Յազար տարվան փորձըն ու գործ  
Ըսկսվում է ամեն օր:

## Յայոց վիշտը

Յայոց վիշտը անհուն մի ծով,  
Խավար մի ծով ահագին  
Էն սև ծովում տառապելով  
Լող է տալիս իմ հոգին:

Մերթ զայրացկոտ ծառս է լինում  
Մինչև երկինք կապուտակ  
Ու մերթ հոգնած սուզվում, իջնում  
Ղեպի խորքերն անհատակ:

Ու հատակն է գտնում անվերջ  
Ու ոչ հասնում երկնքին...  
Յայոց վշտի մեծ ծովի մեջ  
Տառապում է իմ հոգին:

/Բովի. Թումանյան/

\*  
\* \*

- Սիրտս երկինք է...  
Ամեն արարած  
Աստղ ունի այնտեղ –  
Գահ ունի այնտեղ:

- Սիրտս երկինք է...  
Բույր կուտա ծաղկին  
Սեր կուտա կույսին

Կյանք կուտա անկյանք,  
Չոր անապատին –  
Անայի սրտին...  
- Սիրտս երկինք է...

/Ավ. Իսահակյան/

## Գրական արևելահայերենի զարգացման հյուսիսափայլան ուղղությունը

Իր դարավոր գոյության ընթացքում հայերենը չնայած շփվել է բազմաթիվ լեզուների հետ, սակայն պահպանել է իր ինքնուրույնությունը: XIX դարում սկսվում է աշխարհաբարի տիրապետության շրջանը: Ստեղծվում են երկու խոշոր հայագիտական կենտրոնները՝ Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանը, Թիֆլիսում՝ Ներսիսյան դպրոցը: Աշխարհաբարի ձևավորման գործում, լեզվի մշակման և կանոնավորման առումով, նշանակալից է «Հյուսիսափայլ» ամսագրի դերը, որը լույս է տեսել 1859թ. Մոսկվայում Ստեփանոս Նազարյանցի խմբագրությամբ, որը հանդիսանում էր լուսավորական շարժման կենտրոն:

IX դարի I կեսին ավարտվում է գրապայքարը՝ նոր գրական լեզվի կատարյալ հաղթանակով: XIX դարի II կեսին ստեղծագործող մի շարք անհատականությունների շնորհիվ՝ Մ. Խալբանյան, Րաֆֆի, Ռ. Պատկանյան, գրական լեզուն նորմավորվում է, դուրս է մղվում բարբառայնությունը, հնաբանությունները, կանոնավորվում է քերականությունը: Ամսագրում թարգմանաբար ույս են տեսնում ռուս և եվրոպական հեղինակների ստեղծագործությունները (Մ. Լերմոնտով, Յայնե, Կարամզին):

1908թ. Վ. Տերյանը հրատարակեց իր «Մթնշաղի անուրջներ» ժողովածում, որի լեզուն դարձավ 2 ուղղությունների յուրօրինակ սինթեզը՝ իրենով կանխորոշելով գրական արևելա- հայերենի հեռանկարները:

XX դարասկզբին գրական արևելահայերենը զարգացած ու շրեղ լեզու էր: Գրական ասպարեզում էին մեր նոր գրականության 4 գագաթները՝ Յ. Թումանյան, Իվ. Իսահակյան, Վ. Տերյան, Եղ. Զարենց: Ծաղկում էր արձակի ժանրը՝ Րաֆֆի, Ծերենց, Մուրացան, Նար-Դոս, Շիրվանզադե, Ստ. Զորյան, Դ. Դեմիճյան, Ակսել Բակունց:

XX դարի I քառորդից սկսած գրական ասպարեզ իջան գուրգեն Մահարին, Վահան Թորովենցը, Խաչիրի Զարյանը, Յ. Շիրազը, Գևորգ Էմինը, Սիլվա Կապուտիկյանը, Յամ Սիյանը, Պարույր Սևակը, Ռազմիկ Դավոյանը, Յրանտ Մաթևոսյանը:

Գրական արևելահայերենը բացառիկ երջանիկ ճակատագիր ունեցավ. 1918թ. մինչև օրս այն Յայաստանի I, II, III հանրապետությունների պետական լեզուն է՝ դրանից բխող իրավասություններով: Լեզուն զարգանում է գործառական բոլոր ոճերի մեջ՝ վարչական, գեղարվեստական-հրապարակախոսական, գիտական: Պետական լեզուն պարտադիր հաղորդակցման միջոց է պետական, պաշտոնական բոլոր կառույցներում, ուսուցման լեզու՝ կրթական ողջ համակարգում:

\*  
\* \*

Այնպես անխինդ են և նըման լացին  
Երգերն իմ երկրի, այնպես տիսրագին.  
Մեզ չի հասկանա օտարերկրացին:  
Մեզ չի հասկանա սառն օտարուիին:

Այն մելամաղձիկ, լացող միալար  
Ելևճները ներդաշնակ այնպես  
Եվ հարազատ են սրտին մեր մոլար,  
Դոգուն մեր բեկված, ավերված, հրկեզ...

Տեսնում եմ ահա օյուղերը մեր խեղճ  
Եվ թուխ դեմքերն այն տիխության սովոր,  
Իմ ժողովուրդը անել վշտի մեջ,  
Երկիրն իմ անբախտ և աղետավոր:

Թող ինչե երգն այդ դառն ու ցավածին,  
Երգը հայրենի, ցավագար ու հին,  
Մեզ չի հասկանա օտարերկրացին:  
Մեզ չի հասկանա սառն օտարուիին...

/Վ.Տերյան/

## Գրական արևմտահայերեն

Դեռևս 387թ-ից Հայաստանը բաժանվել էր երկու մասի՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Այս բաժանումը ճակատագրական եղավ նաև լեզվական առումով: Աստիճանաբար խորացան տարբերությունները **արևելահայերենի** և **արևմտահայերենի** միջև: Արդյունքում աշխարհաբար լեզուն ծնունդ տվեց գրական արևելահայերեն և արևմտահայերեն լեզուներին:

Գրական արևմտահայերենը առաջացել է Թուրքահայաստանում, Պոլսի խոսակցական լեզվի հիման վրա և պատկանում է կ ճյուղին, իսկ արևելահայերենը՝ ում ճյուղին: Այսինքն սահմանական եղանակը արևելահայերենում կազմվում է օժանդակ բայով. օրինակ՝ գրում եմ, արևմտահայերենում՝ կգրեմ, գնում եմ – կերթամ:

Երկու հայերենները իրենց վրա կրում են գրաբարի ազդեցությունը: Այն հատկապես ակնհայտ է արևմտահայերենում:

1918թ. արևելահայերենը դարձավ պետական լեզու, իսկ արևմտահայերենը ունեցավ դաժան ճակատագիր: 1915թ. եղեռնը արմատախիլ արեց ողջ հայությանը իր դարավոր բնօրբանից, սփռեց ամբողջ աշխարհով մեկ և առաջացավ սփյուռքը, իսկ լեզուն գրկեց իր տոհմիկ արմատներից և կորցրեց զարգացման հեռանկարը: Այժմ էլ հայակական գաղթօջախներում ճիգեր են գործադրվում երիտասարդությանը հայեցի դաստիարակելու և կրթելու ուղղությամբ:

XIX դարի կեսերից և XX դարակզբին փայլեցին բազմաթիվ արևմտահայ բանաստեղծներ՝ Եր.Օտյան, Մ.Մեծարենց, Ղ.Ալիշան, Պ.Դուրյան, Գ.Զոհրապ, Ռ.Սևակ, Սիամանթո, Վ.Թեքեյան, Շ.Շահնուր:

## Չոն

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.  
- Քեզի ընծա՝, իմ հայրենիք –  
Սոսյաց անտառեն էի զայն կտրեր...  
- Քեզի ընծա՝, իին հայրենիք –  
Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր.  
Ընդ եղեգան փող լույս ելաներ:

Եղեգնյա գրչով երգեցի կարոտ,  
- Չեզի ընծա՝, հայ պանդուխտներ -  
Ան տարաշխարհիկ բույսի մ'էր ծղոտ...  
- Չեզի ընծա՝, հեք պանդուխտներ -  
Եղեգնյա գրչով երգեցի հարսեր.  
Ընդ եղեգան փող ո՞յք ելաներ:

Եղեգնյա գրչով երգեցի արյուն.  
- Չեզի ընծա՝, սուրի զոհեր –  
Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կնյուն...<sup>1</sup>  
- Չեզի ընծա՝, կրակի զոհեր –  
Եղեգնյա գրչով երգեցի վերթեր.  
Ընդ եղեգան փող սիրտս ելաներ:

Եղեգնյա գրչով որբ տունս երգեցի.  
- Քեզի ընծա՝, հայր ալեհեր -  
Ցանքած աղբյուրեն մեր օայն հոտեցի<sup>2</sup>...  
- Քեզի ընծա՝, մայր կարեվեր<sup>3</sup> -  
Եղեգնյա գրչով օջախս երգեցի.  
Ընդ եղեգան փող ծուխ ելաներ:

Ու պայքա՞ր, պայքա՞ր, պայքա՞ր երգեցի.  
- Չեզի ընծա՝, հայ մարտիկներ -  
Գրիչս եղավ անթրոց<sup>4</sup> սըրտերու հնոցի...  
- Չեզի ընծա՝, քաջ մարտիկներ -  
Եղեգնյա գրչով վրեժ երգեցի  
Ընդ եղեգան փող բոց ելաներ:

/Դ.Վարուժան/

## Քրիստոնեության մուտքը Հայաստան

Հայաստանում քրիստոնեության առաջին քարոզիչները հանդիսացան Յիսուսի 12 աշակերտներից Թադևոս և Բարդուղիմեոս առաքյալները, որոնք հանդիսանում են հայ եկեղեցու հիմնադիրները: Այստեղից էլ եկեղեցու անվանումը՝ Առաքելական:Ավանդության համաձայն, նրանք Հայաստան են բերել Տիրամոր պատկերը և Սուրբ գեղարդը:

Եթեանոս հայերը հալածում ու սպանում էին քրիստոնյաներին, սրանք էլ, իրենց իերքին,բարբարոսաբար ոչնչացնում էին իեթանոսական տաճարներն ու մեհենական գրքերը: Տրդատ Երրորդ թագավորը քրիստոնյաների պարագլուխ Գրիգորին նետում է Արտաշատի Խոր Վիրապ արգելոցը: Շուտով նա համոզվում է, որ Յոռմը Հայաստանի նկատմամբ վարում է զավթողական քաղաքականություն և դադարեցնում է քրիստոնյաների հալածանքը:

<sup>1</sup> Կնյուն- Եղեգնախոտ, ուղիղ և ճկումբույս

<sup>2</sup> հոտել-կտորել

<sup>3</sup> կարեվեր-ծանր վերը ունեցող

<sup>4</sup> անթրոց- հնոցի կրակը խառնելու ձող

301թ. քրիստոնեությունը ընդունվեց որպես պետական կրոն և տարածվեց ժողովրդի մեջ:Գրիգորը օծվեց կաթողիկոս և ստացավ Լուսավորիչ անունը: 303 թ. նա կառուցեց Սուրբ Էջմիածնի վանքը, իսկ Արցախում՝ Ամարասի վանքը:

Եկեղեցին դարձավ այն համազգային հաստատությունը, որը դարեր շարունակ իրականացրեց պետական և քաղաքական մեծ գործունեություն, մասնակցեց ազգային-ազատագրական պայքարին, գիտության ու մշակույթի զարգացմանը,կատարեց ազգապահան դեր: Եկեղեցականները բանավոր քարոզության կողքին ստեղծել են հարուստ գիր ու գրականություն:

Դինգերորդ դարի պատմիչ Ագաթանգեղոսի «Յայոց պատմություն» մատյանուն մեծարժեք տեղեկություններ կան կրոնի ընդունման և տարածման մասին:  
Քրիստոնեության հիմքում ընկած է Մերձավոր արևելքի որոշ ժողովուրդների (հրեաների) և անտիկ փիլիսոփաների ուսմունքը: «Աստվածաշունչը» տարբեր ժամանակներուն ստեղծված մեծարժեք գիրք է, որը թարգմանվեց Մեսրոպ Մաշտոցի և նրա աշակերտների կողմից և կոչվեց «թարգմանությունների թագուհի»:

## Եկեղեցին Յայկական

Եկեղեցին Յայկական ծննդավայրն է հոգւոյս  
Ինչպես քարայր մ'ընդարձակ, պարզ ու խորունկ, մութ ու լույս...  
Իր գալիքով հիւրընկալ, իր լայն բեմով ու հեռուն  
Կանգնած իր լուռ խորանով, որ կարծես նաւ մ'է ծըփուն...

Եկեղեցին Յայկական ես աչքս գոց կը տեսնեմ  
Ու կը շնչեմ, կը լսեմ՝ իր Յիսուսով մանկադեմ  
Իր սեղանեն մըխացող գուլայ-գուլայ խնկերով  
Եւ իր պատերը ցնցող աղօթքներով ալեխոով...

Եկեղեցին Յայկական բարձր բերդն է հավատքին  
Իմ պապերուս, որ հողեն զայն քար առ քար հանեցին  
Եւ երկինքեն իջուցին զայն ցող առ ցող, ամպ առ ամպ  
Ու թաղլեցան անոր մեջ հանդարտությամբ, հեզությամբ:

Եկեղեցին Յայկական մեծ վարագույր մ'է բանուած,  
Որուն ետեւ, ըսկիհին մեջ կիշճն ինքը Աստուած  
Որուն առջեւ գլխահակ կու գայ իմ ազգս ամբողջ  
Յաղորդվիլ Անցեալին հաց ու գինով կենսառողջ...

Եկեղեցին Յայկական ծովուն դիմաց ալեկոծ  
Նաւանհանգիստ մ'է խաղաղ, ցուրտ գիշերին՝ հուր եւ բոց  
Ու տօթակեզ ցերեկին անտառ մըն է ըստուերոտ  
Ու շուշաններ կը ծաղկին Շարականի գետին մոտ...

Եկեղեցին Յայկական մեն մի քարին տակ գետնի  
Ղեպի երկինք բարձրացող զաղտնի ճամբայ մը ունի...  
Եկեղեցին Յայկական հայ Յոգիին եւ Մարմնոյն  
Զըրահանդերձն է փայլուն, մինչ իր խաչերն են դաշոյն  
Եւ զանգակներն են բոնքիւն, եւ երգն է միշտ յաղթութիւն...

/Վահան Թեքեյան/

գալիք-Եկեղեցու նախամուտք  
գոց-փակ  
գուլայ-գուլայ-քուլա-քուլա  
սկիհ-արժաթյա զավաթ սուրբ գինու համար  
բոնքյուն-հզոր,ուժեղ  
խորան- կամարակապ որմնախորշ  
բանված-ասեղնագործված  
զայն-այն  
անոր-նրա

## Օլիմպիական խաղերի պատմությունից

Օլիմպիական խաղերի վերաբերյալ հյուսվել են բազմաթիվ լեգենդներ: Դրանցից մեկում ասվում է, որ օլիմպիական խաղերը հիմնադրել է Յերակլեսը ի նշան Յելլադայի թագավոր Ավգիասի դեմ տարած հաղթանակի: Այն պատմում է, որ Յերակլեսը վազքի մրցումներ է կազմակերպում իր և եղբայրների միջև և հաղթողին պարգևատրում ձիթապտղի ճյուղով:

Մի ուրիշ լեգենդում ասվում է, որ օլիմպիական խաղերը հիմնադրել է Զևսը՝ աշխարհը տիրելու և իր հոր՝ Քրոնոսի նկատմամբ հաղթանակ տանելու առիթով:

Մի ուրիշ լեգենդում պատմվում է, որ օլիմպիական խաղերը կապվում են Պելոպսի անվան հետ, որ սիրահարված էր պատերազմի աստված՝ Արեսի որդի Ենոմայոսի դստերը՝ գեղեցկուիի Յիպոդամիային:

Չատերն այն կարծիքին են, թե օլիմպիական խաղերը կայացել են Օլիմպոս լեռան շրջակայքում: Իրականում խաղերը տեղի են ունեցել Յունաստանի հարավում, Պելոպոնեսի արևմտյան մասում, Օլիմպոս փոքրիկ ավանում: Խաղերին մասնակցելու իրավունքը վերապահվում էր միայն Պելոպոնեսում բնակվողներին, ինտագայում խաղերին սկսեցին մասնակցել հունական այլ ցեղեր, ավելի ուշ՝ Հռոդոսի, Սիցիլիացի, Կրետեի բնակիչները, Իտալիայի հուները, ապա Եգիպտոսի, Փոքր Ասիայի մարզիկները: Խաղերին մասնակցել են նաև հայերը:

Ղեռս 281թ. 265-րդ Օլիմպիական խաղերին հաղթող է հռչակվել, հետագայում հայոց թագավոր օծված Տրդատ Արշակունին:

104 տարի անց, 285թ. 291-րդ Օլիմպիական խաղերին հաղթել է Արշակունյաց տոհմի մեկ այլ ներկայացուցիչ՝ Վարագդատ Արշակունին:

Առաջին Օլիմպիական խաղերում, որոնք համարակալվել են մ.թ.ա. 776թ. մարզիկները մրցել են մեկ մարզաձևում՝ վազքում: Մինչև 14-րդ Օլիմպիական խաղերը (724 մ.թ.ա.) մրցում էին միայն վազքաձևից, որը կոչվում էր ստադոլոն:

Օլիմպիական խաղերի ծրագիրը ընդլայնվում էր, վազքին գումարվում են սկավառակի, նիզակի, ընթամարտի, հեռացատկի, բռնցկամարտի մարզաձևերը:

Մ.թ.ա. 708թ. 18-րդ Օլիմպիական խաղերի ժրագիրը կազմված էր հնգամարտից և ըմբշամարտից: Խաղերը կազմակերպվում էին մեկ օրում, ապա երեք օրում, իսկ տոնախմբությունների հետ՝ հինգ օրում:

Առաջին օրը հանդիսավոր արարողություններն էին՝ Զևսին նվիրված զոհարերությունը, ապա երդման արարողությունը, վիճակահանությունը, ընտրվում էին մրցող զույգերը և այլն:

Երկար ժամանակ խաղերին մասնակցում էին միայն տղամարդիկ, սակայն կա մի պատմություն, երբ 376թ. անցկացված 96-րդ Օլիմպիական խաղերին տղամարդու հագուստով ծափված, ներկա է գտնվել Յոռդոս քաղաքի բնակչութիւն Կալլիպատրիան: Երբ նրա որդին հաղթող է դառնում, նա չի կարողանում զսպել իր ուրախությունը, առաջ է նետվում, համբուրում է որդուն, որով և մատնում է իր կին լինելը: Յաշվի առնելով, որ նրա հայրը, ամուսինը և որդին օլիմպիական հաղթողներ էին, նրան ներում է շնորհվում:

Օլիմպիական առաջին չեմպիոնը եղել է Յելլադա քաղաքի բնակիչ, խոհարար Կորերո Եղիոնացին: Յաղթողների անունները գրանցվում էին Օլիմպիա պատվո գրքում: Օլիմպիական խաղերը նպաստում են մարզիկների համակողմանի զարգացման և տարբեր քաղաքների և ազգերի միջև բարեկամության ամրապնդմանը: Մ.թ. ա. 9-րդ դարում Յելլադայի թագավոր Իֆիտը և Սպարտայի թագավոր Լիկուրգոսը պայման կապեցին օինառուի անձեռնմխելիթյունը: Այն համարվեց սրբավայր: Օլիմպիական խաղաղությունը տևում էր 3 ամիս, և կոչվում «սուլը հաշտություն»: Այդ օրերին իրավունք չունեին զենք գործադրելու: Մունետիկները ողջ Յունաստանում հայտարարում էին խաղերի սկիզբը: Յունեական կայսրության քրիստոնեությունը ընդունելուց հետո խաղերը դիտվեցին հեթանոսական և 394թ. Յունի կայսեր Թեոդոս 1-ը արգելեց Օլիմպիական խաղերի անցկացումը: Սակայն 1896թ. 1503 տարի ընդմիջումից հետո, Պիեռ դը Կուբերտենի ջանքերով խաղերը ստացան իրենց երկրորդ ծնունդը:

Օլիմպիական խաղերի նշանաբանն է՝

արագ, բարձր և ուժեղ:

Օլիմպիական օլակները խորհրդանշում են հինգ աշխարհամասերը՝

## Յայկական սպորտի նվիրյալները

### Օլակների արքան

Յայկական սպորտի փառապանծ դեմքերից մեկը Ալբերտ Ազարյանն է: 45 ոսկե, 42 արձարե և 10 բրոնզե մեդալները չեն տեղափորվում նրա լայնահուն կրծքին: Նա փայլուն անհատականություն է, տաղանդավոր մարզիկ, Օլիմպիական խաղերի չեմպիոն:

Ալբերտ Ազարյանը ծնվել է 1929թ. Գանձակ քաղաքում: Երբ Ալբերտը դառնում է 11 տարեկան, նրանց ընտանիքը տեղափոխվում է Վանաձոր: Յոր մահից հետո Ալբերտ Ազարյանը աշխատում է որպես դարբին և սկսում է զբաղվել ծանրամարտով, ըմբշամարտով և բռնցքամարտով: Այնուհետև Ազարյանը հրապուրվում է մարմնամարզությամբ և 1949թ. ընդունվում է Ֆիզիկական կուլտուրայի տեխնիկում: Նրան սկսում է մարզել նշանավոր մարզիչ Սեմյոն Ղարագյուղյանը: Մեկ տարի անց նա դառնում է Յայաստանի հավաքականի անդամ: 1952թ. արդեն ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ուսանող Ա. Ազարյանը Սվերդլովսկ քաղաքում օլակների մրցումներում դառնում է Խորհրդային միության չեմպիոն:

Յավաքականի կազմում մշտական տեղ գրավելու համար դեռ շատ անելիքներ կային: Ցուցադրական ելույթների ծրագրում նախատեսված էր նոր ու շատ բարդ վարժություն օլակների վրա: Ամենավճռական պահին, երբ մեծ արագությամբ շրջադարձ էր կատարել ու գլխիվայր կախված՝ փորձում էր նորից բռնել օլակները, երբ դահլիճը քարացած հետևում

Էր մարզիկի յուրաքանչյուր շարժումին, պոկվեց... ու գլխիվայր, ուժգնորեն տապալվեց գետնին...

Դահլիճը հառաչեց:

Յանդիսականներն ամենասարսափելին էին մտածում: Լավագույն դեպքում, եթե ողջ մնա, ընդմիշտ հրաժեշտ կտա սպորտին:

Իսկ կուլիսներում այլ պատկեր էր: Ալբերտ Ազարյանը մոլեգնած ոտքի էր կանգնել ու մարզիչի թույլտվությունն էր խնդրում՝ վարժությունը նորից կատարելու համար: Մարզիչը զարմացած նայում էր իր սանին. մարզական ու մարզչական կյանքում այդպիսի բան չէր տեսել: Յոզու խորքում ուրախանալով, որ չքողեց-չեռացավ, նա թույլ տվեց:

Երբ Ալբերտ Ազարյանը նորից մոտեցավ օղակներին՝ դահլիճը որոտաց ծափերից: Այս անգամ նա վարժությունը կատարեց շատ վստահ, առանց կաշկանդվածության և մեծ հաջողությամբ:

Իսկ «Ազարյանական խաչ» վարժությունը ունի այսպիսի պատմություն:

1952թ. մայիսին, Լենինգրադում Յայաստանի հավաքականը մասնակցում էր համամիութենական մրցումներին: Դատավորներն առաջնորդվում էին այն ժամանակ գործող դաժան օրենքով. «Խաչի» կատարման ժամանակ հաշվում էին մինչև սահմանված թիվը և, եթե մարզիկը չէր կարողանում պահպանել նույն դիրքը, գրանցվում էր թերապահում և հեռացվում մրցումներից: Բոլոր թիմերն էլ, այդ թվում և Յայաստանի թիվը ծանր կորուստներ էին կրում: Բոլորը հուզված, զայրացած էին: Վերջում, թիմի կրած անհաջողությունից դառնացած, օղակներին է մոտենում Ազարյանը: Օղակների վրա «Խաչ» դիրքն անուր պահպանելով, չարացած շրջվում է դեպի աջ կողմում նստած դատավորին ու հարցնում. «Կարելի՞ չ շարունակել...»: Բայց քանի որ մյուս դատավորը չէր երևում, այս անգամ իրանի շրջադարձով թերքում է դեպի ձախ ու նույն չարությամբ շպրտում՝ «Կարելի՞ չ...»: Նույն ճակատագրին է արժանանում նաև դիմացի դատավորը:

Դատավորներին անարգելու համար ցանկանում են թիմին ընդհանրապես գրկել այդ մրցումներից, իսկ հանդուգն Ազարյանին՝ ավելի խիստ պատժել և գրկել առաջիկա մի քանի խոշոր մրցումներից:

Ընդհանուր հիացմունքը մեղմացնում է խստասիրտ դատավորներին, և նրանք բավարարվում են նկատողությամբ:

Այդպես «Ազարյանական խաչ» տերմինը մտավ մարմնամարզության պատմության մեջ:

1954թ. Հռոմում կայացած աշխարհի առաջնությունում Ալբերտ Ազարյանը ոսկե մեդալ է շահում՝ ցույց տալով 9,95 արդյունք: 1956թ. Մելքոնի 16-րդ Օլիմպիական խաղերում նա նվաճում է 2 ոսկե մեդալ: 1960թ. Հռոմի 17-րդ Օլիմպիական խաղերում նվաճում է ևս 1 ոսկե մեդալ:

Այսօր Ալբերտ Ազարյանը երևանի պատանի մարմնամարզիկների դպրոցի տնօրենն է: 1999 թ-ին Յայաստանը մեծ շուքով նշեց Ալբերտ Ազարյանի 70--ամյակը:

## Յայկական սպորտի մեծ նահապետը

Յայկական մարզաշխարհի նահապետը՝ Յրանտ Յամազասափի Շահինյանը, ծնվել է 1923թ. Լոռվա Գյուլագարակ գյուղում: Կազմությամբ վտիտ երեխա էր: 7 տարեկան հասակում ընտանիքը տեղափոխվելուն է Երևան, և Յրանտը հաճախում է Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը և զբաղվում երաժշտությամբ: Երրորդ դասարանից սկսում է հաճախել մարմնամարզության խմբակի պարապմունքներին:

1935թ. դպրոց են գալիս մի խումբ մարզաշխատողներ՝ Լուսավորության նախարարությունից Յայկ Փարսադանյանը (հետագայում՝ ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի առաջին ռեկտորը), մարզադպրոցի տնօրեն Մուշեղ

Մամիկոնյանը և մարզիչ Յարություն Գարգալոյանը: Նրանք իսկույն նկատեցին շնորհալի երեխային և տեղափոխեցին մարզադպրոց:

Մեկ տարի անց Շահինյանը դարձավ հանրապետության չեմպիոն: 1939թ. Լենինգրադում կայացած 15-16տարեկան պատանիների առաջնությունում նվաճեց չեմպիոնի կոչումը:

1942թ. նա մեկնում է գործող ռազմաճակատ, ուր վիրավորվում է ոտքից և վերադառնում տուն: համար մարզումներից հետո 1948 թ-ին նա դառնում է ԽՍՀՄ չեմպիոն: Սկսվում է Յանտ Շահինյան հաղթարշավը 1952թ-ին Յելսինկիում կայացած 15-րդ Օլիմպիական խաղերին նա նվաճում չեմպիոնի կոչումը և վերադառնում 2 ոսկե, 2 արծաթե մեդալներով:

1954թ. Յռունում կայացած աշխարհի առաջնությանը նվաճում է մեկ ոսկե մեդալ:

Յանտ Շահինյանի մասին գրում են աշխարհիբազմաթիվ երկրների թերթերում, «Ֆիզկուլտուրա և սպորտ» ամսագրում:

35 տարեկանում նա թողնում է մեծ սպորտը և անցնում մանկավարժական գործունեության: Նրա դեկավարած դպրոցում են մարզվել և հայտնի մարմնամարզիկներ են դարձել մի քանի սերունդ:

Շահինյանը վախճանվ է 1996թ.:

Այսօր նրա անունով է կոչվում Երևանի փողոցներից մեկը, մեր ինստիտուտի մարմնամարզության ամբիոնը, լավագույն ուսանողներն արժանանում են Դ.Շահինյանի անվան կրթաթոշակին:

## Յայերենի բառապաշարը

Բառապաշարը որևէ լեզվի բառերի ամբողջությունն է: Այն տրոհվում է երկու հիմնական մասի:

**Առաջինը** կոչվում է բառային հիմնական ֆոնդ, որը կազմում են տվյալ լեզվով խոսող անհատների ամենօրյա հաղորդակցման անհրաժեշտ բառերը (հաց, ուտել, ես դու...), որոնք թեպետ քանակապես քիչ են, բայց խիստ դիմացկուն են:

**Երկրորդը** մասի մեջ մտնում են մնացած բոլոր բառերը, որոնք անընդհատ լրացվում են նորանոր բառերով:

Բառապաշարն արտացոլում է հասարակական կյանքի բոլոր փոփոխությունները, այդ պատճառով էլ ինքը ևս շարունակ փոփոխվում է ու զարգանում:

Լեզուների բառային կազմը համալրվում, հարստանում է համապատասխան բառակազմական (ածանցում, բառաբարդում) միջոցներով ու փոփոխությունների ճանապարհով:

Յուրաքանչյուր լեզվում բառապաշարն ըստ ծագման բաժանվում է բառային շերտերի: Յայերենում բուն բառաշերտերից բացի կան պարսկերենից, հունարենից, ասորերենից, արաբերենից և այլ լեզուներից փոխառնված բազմաթիվ բառեր:

Բառապաշարը կարող է բաժանվել նաև ըստ լեզվի պատմական շրջանների ու ճյուղավորումների. օրինակ՝ գրաբարի, միջին հայերենի, աշխարհաբարի: Բառապաշարի անվան տակ հասկացվում են նաև կենցաղային, գիտական, ռազմական, բարբառային, բանաստեղծական ստեղծագործություններում գործածված գրական, գրքային, հնացած, նորացված և այլ բառերի ամբողջությունը:

Բառապաշարի հարստությունը պայմանավորված է տվյալ լեզուն կրող ժողովողի տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի, մշակույթի զարգացման աստիճանում:

Մեզանում ամեն մեկն ունի իր բառապաշարը, բայց ոչ միանման ու միատարր, ոչ էլ հավասարապես հարուստ: Դա պայմանավորված է հազար ու մի հանգամանքով՝ մարդու

կրթության, ընտանեկան ու դպրոցական դաստիարակության աստիճանով, ապրած միջավայրով, մասնագիտության բնույթով և այլն, և այլն: Ինչ խոսք, կարդացած ու զարգացած մարդու բառապաշտարն ավելի հարուստ կլինի:

Գոյություն ունի ակտիվ և պասիվ բառապաշտար: Ակտիվ բառապաշտարում տեղ ունեն այն բոլոր բառերը, որոնք մենք մշտապես գործածում ենք՝ ընկալելով դրանց իմաստը: Իսկ պասիվ բառապաշտարի բառերը կարդալիս ու լսելիս լավ հասկանում ենք, բայց չենք գործադրում:

## Բառարաններ, տեսակները

**Բառարանագրությունը** լեզվաբանության բաժին է, որը զբաղվում է բառարանների կազմնամբ և ուսումնասիրությամբ: Սերտորեն կապված է բառագիտության հետ և նույնպես ուսումնասիրում է լեզվի բառապաշտարը: Սկզբնավորվել է հնագույն ժամանակներում, գործարյան ստեղծման ու զարգացման գուգընթաց, Միջագետքում՝ շումերների մոտ (մ.թ.ա III հազարամյակ):

**Բառարանները** մեկ կամ մեկից ավելի լեզուների ժողովածու է, որ կազմվում է հիմնականում այբբենական, երբեմն էլ՝ այլ եղանակով:

Բառարանները լինում են երկու տեսակ՝ **հանրագիտական** և **լեզվաբանական**:

**Հանրագիտական բառարաններում** (հանրագիտարաններում) նկարագրվում, պարզաբանվում են ոչ թե բառերը, այլ նրանցով նշանակվող առարկաները, երևույթնորը, դեպքերը, հասկացությունները: Հանրագիտական բառարաններից են «Սովետական մեծ հանրագիտարանը» (50 հատորով), «Հայկական սովետական հանրագիտարանը» (12 հատորով+1), մանկական «Ո՞վ է, ի՞նչ է» հանրագիտարանը (4 հատորով), «Ուկեփորիկը» (4 հատորով) և այլն:

Աշխարհում բազմահատոր է ճանաչվել չինական հանրագիտարանը, որը ստեղծվել է 60 տարում, բաղկացած է 5130 հատորից: Այն անվանվում է «Տու – շու – ցի – չեն»:

## Ոճաբանություն

Հայերեն **ոճ** բառը համպատակախանում է հունարեն **ստիլοս** բառին, որը շատ լեզուների մեջ մտել է **ստիլ** ձևով: Հունարեն և հայերեն բառերն ունեցել են իմաստային գրեթե միևնույն զարգացումը: **Ոճ** բառը նախապես նշանակել է **ծղոտ,** **ցողուն:** Հին ժամանակներում իբրև գրիչ ծառայում էին ծղոտե սրածայր ձողիկներ, որոնցով գրում էին մոնապատ տախտակների վրա: Քանի որ տարբեր մարդիկ և տարբեր ձողիկներ միևնույն նշաններն արտահայտում էին իրարից փոքր-ինչ տարբեր ձևով, **ոճ** ասելով սկսեցին հասկանալ նախ գրության, ապա նաև ընդհանրապես խոսքի մի որոշակի ձև, տեսակ՝ տվյալ մարդուն, տվյալ բնագավառին, հատուկ արտահայտության եղանակների մի որոշակի ամբողջություն:

**Ոճը** մտքերն արտահայտելու համար ընտրվող լեզվական միջոցների ու եղանակների տարրերությունն է:

Լեզվաբանության այն ճյուղը, որն զբաղվում է ոճի ուսումնասիրությամբ, կոչվում է ոճաբանություն:

Ոճերը լինում են երեք տեսակ՝ գոծառական, իրադրական և անհատական:

**Գործառական ոճերը** գրական լեզվի տարատեսակներ են, որոնք կապված են հասարակական կյանքի առանձին բնագավառների հետ:

Գործառական ոճերը լինում են՝ առօրյա, խոսակցական, վարչագործարարական, գիտական, հրապարակախոսական, գեղարվեստական:

**Առօրյա խոսակցական ոճը** հանդես է գալիս առօրյա կյանքում՝ սովորական խոսակցության մեջ, կենցաղային ոլորտում, առևտուր անելիս:

Առօրյա խոսակցական ոճի դրսնորման ձևը երկխոսությունն է: Այդ ոճին հատուկ են հուզականությունը, պատկերավորությունը, անմիջականությունը: Նրանում մեծ թիվ են կազմում հարցական, պատմողական և բացականչական նախադասությունները:

**Վարչագործարարական ոճը** հանդես է գալիս պետական գործունեության ոլորտում, պաշտոնական գրագրության մեջ և գործնական գրություններում՝ դիվանագիտական փաստաթղթերում, օրենքներում, հրամանագրերում, արձանագրություններում, դիմումներում:

Վարչագործարարական ոճն իր բնույթով գրեթե հակադրվում է առօրյա խոսակցականին: Այն զուրկ է հուզականությունից և պատկերավորությունից: բառերը գործածվում են ուղղակի իմաստով: Խոսքը հակիրծ է ձևակերպումները՝ ճշգրիտ: Յաճախաղեալ են գրաբարյան նախդիրները՝ ի, առ, ընդ (համապատասխան կառույցներով հանդերձ), ինչպես նաև ենթարկվել, ունենալ, առնել, բայերով կապակցությունները (պատասխանատվության ենթարկել, նկատի ունենալ, հաշվի առնել), վերո-, ներքո- կազմիչներով բաղադրությունները:

**Գիտական ոճը** հանդես է գալիս գիտական աշխատություններում, դասախոսություններում, զեկուցումներում և ելույթներում:

Գիտական ոճին հատուկ են վարչագործարարական ոճի այն բոլոր էական հատկությունները, որոնք վերջինս տարբերում են առօրյա խոսակցականից՝ հուզարտահայտչական միջոցների բացակայությունը, խոսքի հակիրճությունն ու կանոնավորությունը, ձևակերպումների ճգրտությունը: Սակայն գիտական ոճին բնորոշ է ավելի շատ դատողական, քան նկարագրական խոսքը:

Գիտական ոճին հատուկ են դատողական տիպի բառերն ու շաղկապներ՝ այսպիսով հետևաբար, ուրեմն, որովհետև, քանի որ, այսինքն, սրանով իսկ (դրանով իսկ):

**Յրապարակախոսական ոճը** հանդես է գալիս պարբերական մանուլում ու հրապարակյին ելույթներում:

Յրապարակախոսական ոճը համատեղում է գիտական և գեղարվեստական խոսքի առանձնահատկությունները: Նրա նպատակն է ազդել ընթերցողի կամ ունկնդրի ոչ միայն մտքի ու դատողության, այլև կամքի, զգացումների և երևակայության վրա, նրան գործի մղել, հուզել:

**Գեղարվեստական ոճը** հանդես է գալիս գեղարվեստական գրականության մեջ՝ ինչպես արձակ, այնպես էլ չափածո խոսքում:

Գեղարվեստական ոճին հատուկ են պատկերավորությունը և հուզականությունը: Այս տեսակետից այն մոտենում է առօրյա խոսակցական ոճին և հակադրվում վարչագործարարական ու գիտական ոճերին:

## Տերմին, տերմինաշխնություն

Վ դարը հայ մատենագրության պատմության մեջ նշանավորվել է որպես մշակութային աննախընթաց ծաղկման, թարգմանչական ու ստեղծագործական բեղմնավոր աշխատանքի ժամանակաշրջան: Այդ բուռն վերելքը պայմանավորված էր V դարում Յայստանի արտաքին քաղաքական և ներքին սոցիալական իրադրությամբ: Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը խորապես գիտակցեցին, որ արևելքից պարսկական գրադաշտականության և արևմուտքից գերիշխանության ձգտող հունական քրիստոնեական ազդեցության դեմ պայաքարելու միակ միջոցը ինքնուրույն գիր ու գրականություն ստեղծելն է:

Գրերի գյուտը հանդիսացավ այն հիմնական կովանը, որը ծավալեց կրթական ու թարգմանչական մեծ գործունեություն: Մեծ ոգևորությամբ թարգմանվեցին հունարենից

թերականների, ճարտասանների, փիլիսոփաների արժեքավոր երկերը, որոնց թվում էին Դիոնիսոս Թրակացու, Փիլոն Եբրայեցու, Արիստոտելի. Պլատոնի, Պորֆիրի և այլոց երկերը: Թարգմանչական աշխատանքի ընթացքում թարգմանիչները նկատեցին, որ գիտական գրականությունը պահանջում է համապատասխան լեզու և գիտական կայուն տերմինաբանություն: Այս հանգամանքը ստիպեց նրանց հայերենը հարստացնել գիտական հասկացություններով ու տերմիններով, իսկ տերմինաբանության ստեղծման համար լեզուն հարստացնել նոր միջոցներով, կատարել բառակազմական անհրաժեշտ նորամուծություններ: Ստեղծեցին բազմաթիվ ածանցներ, որոնք հեշտացրին հայերենի տերմինաբանության մշակումը և հարստացրին մեր բառապաշարը:

Դունաբան դպրոցի դերը մեծ է եղել հայ մշակույթի պատմության մեջ: Դիոնիսոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատության թարգմանությունը գործածվել է որպես դասագիրք:

Բազմավաստակ հայագետ Յր.Աճառյանը գրադարձել է հունաբան հայերենի լեզվական առանձնահատկությունների հետազոտմամբ և կարևոր կողմը համարել՝

ա/ հունարենից կերտված նախածանցները և նրանցով կազմված նոր բառերը;

բ/ բարդ բառերի կազմության նոր ձևերը՝ բառապատճենումներ, հայերենի կանոններից շեղվող բառեր և այլն: Օրինակ՝ տելեֆօն (հեռու + խոս), վելօսիպեդ (հեծնել+անիվ):

Դ.Թրակացու (170-90թ.թ. մ.թ.ա) «Քերականության» հայերեն թարգմանությունը հրատարակվել է 1830թ. Փարիզում, Յակոբ Շահան Զրպետյանի կողմից՝ հունարեն, հայերեն, ֆրանսերեն լեզուներով: Թարգմանության հեղինակը համարվում է մեկնիչ Դավիթ փիլիսոփան (Դ.Անհաղթը):

Տերմինաբանությունը բառային կազմի այն մասն է, որն ընդգրկում է մասնագիտական որոշակի բառապաշար:

Տերմինը բառից տարբերվում է իր դերով ու իմաստային առանձնահատկությամբ:

Հայերենի տերմինաշինության սկիզբը պետք է որոնել V դարում մաշտոցյան գրերի գյուտից անմիջապես հետո, երբ հսկայածավալ թարգմանչական գործունեություն էր սկսվել: Բազմաթիվ հունական, ասորական և եբրայական անվանումների դիմաց հարկ եղավ ստեղծել հայերեն անվանումներով տերմիններ, իսկ անհրաժեշտության դեպքում դրանք փոխարինել նորերով:

V դարում թարգմանվեցին հետևյալ տերմիններ՝ ալգեբրա - հանրահաշիվ, արիֆմետիկա - թվաբանություն, գեոմետրիա - երկրաչափություն, բուտանիկա - բուսաբանություն, գրամատիկա - քերականություն, մորֆոլոգիա - ձևաբանություն:

Միջին դարերում մեր լեզու մտան և թարգմանվեցին ֆիզիկա, ֆիզկուլտուրա, քիմիա, ալքիմիա տերմինները:

Գիտության և տեխնիկայի, մշակույթի և սպորտի բուռն զարգացման ներկա փուլում ստեղծվել և ստեղծվում են նորանոր հայկական տերմիններ, ինչպես օրինակ՝ ծայներիգ, տեսաերիգ, սկավառակ, ծայնասկավառակ, հեռակառավարման վահանակ, բջջային հեռախոս, համակարգիչ, հաշվիչ կենտրոն, խոսափող, գերնոր աստղեր և այլն:

Ֆիզկուլտուրայի և սպորտի բուռն զարգացման ներկա փուլում հայտնի են հետևյալ մարզական տերմիններ՝ մաքրավազք, պարանամագլցում, վազեվազք, մեկնարկ, հեռացատկ, բարձրացատկ, մարզադաշտ, սկզբնահարված, մատուցում, կեցվածք, հանդբոլ, մրցակից, վազքուղի, ֆուտբոլ, աթլետիկա, բաղմինքոն և այլն:

Այնքան շատ են մարզական տերմինները, որ 1985թ. Կ.Բարայանի կողմից ստեղծվել է «Մարմնամարզական տերմինների տեղեկատու բառարան»:

## Մարզական տերմինաբանության ստեղծման պատմությունից

Մարզական տերմինաբանությունն ունի գարգացման շատ մեծ պատմություն, որը սերտորեն կապված է Եվրոպայում մարզական ազգային սիստեմների ստեղծման և զարգացման հետ (գերմանական, շվեյցալիական, ֆրանսիական, չեխական, ռուսական): Սկզբնական շրջանում մարզական վարժություններն անվանվում էին, դրանք ննանեցնելով առարկաններին, նույնիսկ կենդանու շարժումներին: Օրինակ՝ գերմանական մարմնամարդության մեջ կիրառվում էին այնպիսի տերմիններ, ինչպես «առյուծի քայլ», «արջի գլուխկոնծի», «ոչխարի ցատկ» և այլն: Հետագայում (XIX դարի երկրորդ կեսին) չեխական սիստեմի հիմնադիրները ստեղծեցին տերմինաբանություն նոր սկզբունք՝ օգտագործելով միայն մայրենի լեզվի բառերը: Սակայն ստացվեց նի արհեստական տերմինաբանության, որը չէր ինաստավորում վարժության բովանդակությանն ու բնույթը: Օրինակ՝ մեկ բառի (տերմինի)միջոցով նշվում էր շարժման անունը, մարմնի շարժվող մասը և նրա ուղղությունը («ոտնել», «ձեռնել», «առաջոտնել», «ետձեռնել» և այլն): Տերմինաբանության ստեղծման ննան սկզբունքը չէր կարող օրինակ ծառայել այլ ազգային սիստեմների համար, և այդ իսկ պատճառով թարգմանության փորձերը Ռուսաստանում հաջողություն չունեցավ: Այդ տերմինաբանությունը ևս գոյատևեց շատ կարճ:

Նման տարատեսակ և անսիստեմ տերմինաբանությունը խոչընդոտում էր մարզական համընդանուր զարգացմանը:

Եկավ հունվար ամիսը: Սամվելի հրավերքով նրանք միասին գնացին որսի: Արձակուրդների ընթացքում ազատ լինելով անքիոնի պարապունքներից՝ նրանք ճամպրուկները կապեցին, առան ատրճանակ ու փամփուշտ և ճամփա ընկան դեպի անտառ: Մեկ-երկու նապաստակ խփեցին, հետո համբերատար կերպով կրակ վառեցին ու ճյուղերից շամփուրներ պատրաստեցին: Սամվելն անվարժ ու անփույթ էր խորոված անելու գործում, ուստի Համբարձումն ինքը միսը կտրատեց, շամփրեց ու խորովեց:

## Զ - Ս

**Վարժություն 46:** Կետերի փոխարեն գրեցեք զ կամ ս:

Կենտրոնախույ..., քննախույ..., ալեհույ..., ծաղկահյու..., մտասույ..., խելակորույ..., պար...կա, պար...կական, Թիֆլի..., Թավրի..., Տավրո..., մար...ել, մար...վել, մար...պան, հար...նացու, համհար..., արևակե..., բա...կաթոռ, բա..կետքոլ, բա...կերակ, բա...պան, որպե...զի, որպի...ի, գույն...գույն, ինչպի...ի, հետ...հետե, տոթակե..., Վարդե..., հիպնո..., երկնասույ..., ընկույ..., ողկույ..., հրկի...ված, բ...կտել, ավտոբու..., մ...կիթ, մ...եղեն, ֆի...կուլտուրա, իշիա..., վա...ք, երա...կոտ, երա...խ, հիպնո..., նարգի..., հազիվիա..., հանկարծահա..., գ...վոտոց, Հա...կերտ, փրփրադե..., սիրակե..., բնա...դաբար, Մար...պետունի, տրոլեյբու..., ծխնելույ..., Զինգի... խան, Սանա..., Սանա...կերտ (տեղանուն), վ...կապ, սի...ավետ, սի...ախոտ:

## Ժ – Շ

**Վարժություն 47:** Կետերի փոխարեն գրեցեք ժ, շ կամ ժշ:

Յու...կու, բու...քույր, դ...խոյական, դ...խեմ, ճ...գրիտ, ժու...կալ, գու...կան, գու...ակ, գ...տվել, ն...ար, ն...տար (վիրահատական սուր դանակ), պագ...ոտ (վավաշոտ, ցանկասեր) ու...գնորեն, ա...դահա, ա...տե (երկար կոթով նիզակ), վրե...խնդիր, հրե...ավոր, հրա...եշտ, հրա...եկ, հրու...ակագործ, հույ..., հու...արար, երա...տահակ, երա.....տություն, գույ..., գահավե..., ապառա..., ատամնաբույ..., բու...ֆակ, անախոր..., խոր..., որմնախոր..., օ...տված, դ...խուիի, դ...կան, հավեր..., պատ...գամբ, չարագույ..., ձիավար..., տույ..., մ...տնջենական, դ...բախտ, ն...խար, նաժի...տ, թե..., ախոր...ել, խոր...ել, խոր...ակ:

**Վարժություն 48:** Տեքստից դուրս գրեցեք ուղղագրական բարդություն ունեցող բառերը, տվեք դրանց բացատրությունը, գտեք հոմանիշները:

Վարդգեսի մեջքը ցավում էր: Առավոտյան նա վազքի մրցումների էր մասնակցել, հետո էլ՝ շատ էր վազվել ֆուտբոլի գնդակի հետևից, քրտնել էր, տրոլեյբուսով տուն վերադառնալուց հետո թաց-թաց դուրս էր եկել պատշգամբ ու մրսել էր: Երեկոյան կողմ ջերմությունը սկսել էր բարձրանալ: Բազկաթորի միջից նրան տեղափոխեցին տաք անկողին: Ոչինչ չօգնեց: Վարդգեսը անկողնում զառանցում էր տենդի մեջ, ասես հիպնոսի տակ լիներ: Վարդգեսի հուժկու ու հաղթանամ մարմինը թուլացել, կծկվել էր: Ու հիմա, չգիտես ինչու շարունակ միկնույն բառերն էր զառանցագին արտաքերում. «Մարզպան, Յազկերտ, Վարդան Մամիկոնյան, դշխուհի, գումար, կենտրոնախույս ուժեր...»: Մայրը դժկամությամբ ձեռքն առավ «Վարդանանքի» երկրորդ հատորը, որի շապիկին գույնզգույն տառերով դրոշմված էր Դերենիկ Դեմիրճյանի անունը: Նա հիշեց, որ նախորդ օրը, երբ որդին պատշգամբում պառկած, ողջ գիշերը կլանված ընթերցում էր վեպը, ինքը չկարողացավ ազդել նրա վրա, որպեսզի կտրվի ընթերցանությունից կամ գոնե խոհանոցում նստի, որովհետև դրսում սաստիկ քամի էր, օդն էլ՝ խոնավ: Ահա և հետևանքը:

### Իսկ դուք գիտե՞ք, որ

Արարատ լեռան տարիքը:

Գիտնականների հաշվառումներով Արարատ լեռը մոտավորապես երեքուկես միլիոն տարեկան է: Մեծ ու Փոքր Մասիսները իրարից բաժանվում են երկրաբանական մի ամբողջ դարաշրջանով: Մեծ Մասիսը 3,5 միլիոն տարեկան է, իսկ Փոքր Մասիսը՝ ընդամենը 200 հազար տարեկան: Յետևաբար, Մեծ Մասիսը հազարամյակներ շարունակ եղել է միայնակ:

## Բառագիրություն Մենիմաստ բառեր

**Վարժություն 49:** Յետևայլ մարզական տերմինները գործածեցեք նահադասությունների մեջ:

Կրոս, մատ, բիատլոն, պատ, դրիբլինգ, սալտո, ռևանշ, ստադիոն, պիուլետ, աթլետ, գոլ, օբերկոտ, ֆլեշ:

**Վարժություն 50:** Բերեք մասնագիտական տարբեր ոլորտների վերաբերող տերմինների օրնակներ ( մարզական, գրականագիտական, լեզվաբանական, երաժշտական, բժշկական, մաթեմատիկական, քիմիական, գյուղատնտեսական և այլն):

**Վարժություն 51:** Տեքստից դուրս գրեցեք մարզական տերմիններ՝ տալով դրանց իմաստային բացատրությունները:

## Բազմիմաստ բառեր

Վարժություն 52: Յետևալ օրինակներում գտե՛ք փոխաբերական իմաստով գործածված բառերը:

Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում,  
Իրիկնաժամին նստում եմ մենակ  
Կանաչ առվի մոտ, ուռիների տակ,  
Ու հոգնած սիրտս էլ չի դժգոհում:  
Անցած օրերի հուշերն եմ թերթում,  
Եվ խաղաղ սրտով, անխռով, մենակ  
Քնքուշ երգերից հյուսում եմ մանյակ  
Որ պճնեմ սիրով պատկերդ տրտում:

### Վ. Տերյան

Վարժություն 53: Յետևալ բանաստեղծություններում տեղադրեցե՛ք փոխաբերական իմաստ ունեցող բառերը:

Աստղերն են ..... լուսեղեն նազով,  
Խաղաղ դաշտերը մութն է ..... :  
/իջնել, համբուրել, լուսավորել, ժայռալ, պատմել/:

Այս գիշեր նորից ..... էր քամին,  
Ին դռան առաջ, ին պատերի տակ.....  
/փչել, քշել, լալ/:  
Կյանքը կրում է, աղմուկը.....,  
Մի անձանոթ ձեռք նուրբ մթնշաղում  
Անցյալն ու ներկան իրար են խառնում,  
Ին սրտում..... անձոն է .....: / Վ. Տ./  
/լռել, մեռնել, աշնան, ոսկե, թափվել, մաղել/  
Զրե՞րն են այսքան ..... ու մոլեգին,  
Թ՞ե գարնանային երկինքն է բաց  
..... բարձրաբերձ լեռների գլխին  
Եվ թափալվելով գալիս է ցած /Ր.Ս./:  
/ահարկու, խենթ, փլվել, փռվել/:

## Արմատ և ածանց

Վարժություն 54: Գտե՛ք հետևյալ բառերի արմատները և ածանցները:

Մերձարևադային, միլիոնանոց, դամբարան, Վարդանանք, անգրագետ, ներշնչել, ընդիմադրություն, միավորում, արտասահման, հյուրանոց, սրճարան, արդյունաբերություն, տարածություն, նախատեսել, գերակատարել, ավտոմոբիլային, նախադպրոցական, արտապլանային, համամիութենական, հրաշալի, հեռավոր, վերանայել, համալսարան, վերապաց, անհաղորդիչ, դիրք, տատանողական, առաձգական, մագնիսացում:

**Վարժություն 55:** Հետևյալ ածանցներով կազմեցեք նոր բառեր՝ օգտագործելով փակագծերում դրված բառերը. նկատի՝ ունեցեք, որ նախածանցների և վերջածանցների մեջ մասը արմատին կարող են միանալ ա ձայնավորով (հոդակապով):

առ – (հավետ, ծեռն, անձնահատուկ, անձնապես, երես, երևույթ)  
արտ - (գաղթ, հոսք, սահման, զատել, մղել, հանել)  
բաց - (արձակ, երես, կանչել, ասել, կա, հայտ)  
հակ – (ազդել, ատոմային, գրոհ, հարված, կշիռ, դարձ, ճառել)  
Տար – (ժամ, բախտ, օրինակ, անցում, ձայն)  
անք – (աշխատել, տանջել, տառապել, վիրավորել, արհամարհել)  
արք – (գործ, ստուգել, լուծել)  
ված – (վածք) – (խոսել, պահել, կառուցել, շարել, հյուսել)  
ույթ – (ավանդ, ասել, տիրել, նոր, սովոր, հանել, շահ)  
ություն – (ուսանող, բարեկամ, երջանիկ, հայրենասեր)

**Վարժություն 56:** Տրված բառերով կազմեցեք երկուական նախադասություններ և բացատրեցեք նրանց գործունեության տարրերությունները:

Պատճառով – շնորհիվ  
ցուցում – ցուցմունք  
հրատարակություն – հրատարակչություն  
կարկաչուն – կարկաչյուն  
լուծել – լուծարել  
հիմնել – հիմնավորել  
հասկացություն – հասկացողություն  
տեղի տալ – տեղիք տալ  
ապահովել - ապահովագրել  
հնչուն – հնչյուն  
հանձին – հանձինս  
պատրաստականություն – պատրաստականություն  
ընդմիջել – կասեցնել  
ծանր – ծանրակշիռ  
շառաչուն – շառաչյուն  
փոխարինել - փոխարկել  
մեկնել – մեկնարկել  
հանձն առնել – հանձնարարել  
սովորույթ – սովորություն  
ի դեմս – ի հեճուկս  
պաշտպանել – պահպանել  
ներմուծում - արտահանում  
բռնագանձել - բռնագրավել:

**Վարժություն 57:** Հետևյալ բառերը տեղաբաշխեցեք ըստ կազմության:

Ավան, ջերմաէլեկտրակայան, ճարտարապետություն, ընկերակցություն, բնակարանային, աշակերտուիհի, դեղատուն, հաց, մանկապարտեզ, երկաթուղային, հասցե, ընտանի, ժողովրդական, ազգամիջյան, հաղորդակցություն, մթերային, բնակարանամուտ, երիտասարդական, գիտահանրամատչելի, շրջան, մշակութային, ռադիոկայան, ծով, հայրանուն, ուղեծրային, իրավահավասարություն, ծննդյան, կենտրոնական, անտառ, տեղաբաշխում,

մարզ, հեռուստատեսային, աշխատավորություն, առաղջապահություն, գյուղ, ստուգա-  
տես, կրկես, հեռագրական, հյուրանոց, գիտատեխնիկական, ամսագիր:

**Վարժություն 58:** Արտագրեցե՛ք՝ կետերի փոխարեն ա հոդակապը գրելով կամ  
չգրելով:

Աչք...լույս, երկր...չափություն, աչք...բաց, խել...միտ, հանր...օգուտ, հանր...հաշիվ,  
ջր...հոր, աշխատ...վարձ, իր...ծիգ, քար...տաշ, դաս...գիրք, դաս...ընթաց, քար...հատ,  
սր...ընթած, պատվ...րժան, արժ...նպատիվ, մանր...ծախ, գյուղ...քաղաք, գր...տախ- տակ,  
օրին...չափություն, գծ...գրություն, պարտ...վճար, հող...գործ, սև...հող, քառ...ն- կյունի,  
մայր...ուղի, արագ...ցուցիչ, արագ...ընթաց, գագաթն...կետ, երկաթ..ուղի, լուս...մփոփ,  
խճ...նկար, խճ...ուղի, չորս...հարկանի, քառ...հարկ:

**Վարժություն 59:** Յետևյալ բառերից կազմեցեք կրկնավոր բարդություններ, իսկ դրան-  
ցով՝ նախադասություններ:

Բյուր, հազար, շտապ, նոր, չար, շերտ, մերթ, ժամանակ:

**Վարժություն 60:** Յետևյալ ընդգծված բառերով կազմեցե՛ք հարադրավոր բարդութ-  
յուններ՝ օգտագործելով փակագծերում դրված բառերը:

առաջ – (նայել, վազել, անցնել, խաղալ, գնալ, ընկնել)  
հետ – (մնալ, քաշել, բերել, դարձնել)  
վրա - (հասնել, բերել, պրօնել)  
մոտ – (գալ, բերել, քաշել, տանել)  
մեջ – (ընկնել, առնել, բերել, մտնել)  
դեմ – (առնել, գնալ, ընկնել)  
ներս – (մտնել, տանել, բերել)  
դուրս – (գալ, վազել, ցցվել, քաշել)

**Վարժություն 61:** Առանձին սյունակներում գրեցե՛ք կրկնավոր, հարադրավոր և  
կցական բարդությունները:

Լեփ-լեցուն, առևտուր, խաղ անել, կալվածատեր, օրեցօր, պար գալ, ելսէջ, պարապ-  
սարապ, մեկընդմեջ, մինուճար, շարք-շարք, հայր ու մայր, երթևերան, քսանյոթ,  
երբեմն-երբեմն, աչքով տալ, գունդ-գունդ, ճեփ-ճերմակ, տող առ տող, շիփ-շիտակ, օրըստ-  
օրե, փշուր-փշուր, տուն առ տուն, մի-մի, նիստ ու կաց, մեկ առ մեկ, վա՛յ-վա՛յ, ձեն-ձուն, թև  
ու թիկունք:

## **Բառակազմություն Հապավում, համառոտագրություն**

**Վարժություն 62:** Յամառոտագրեցե՛ք հետևյալ բառերը:

Կիլոգրամ, ակադեմիկոս, դոցենտ, վայրկյան, հեկտար, դեցիմետր, միլիմետր, լիտր,  
միլիլիտր, գրամ, կիլոմետր, օրիորդ, դոկտոր, կոպեկ, ճարտարապետություն, քիմիա,

Ֆիզիկա, մաթեմատիկա, երկրաչափություն, փիլիսոփայություն, արվեստ, Արամ Խաչատրյան, Մարտիրոս Սարյան, Հովհաննես Թումանյան, Վիկտոր Շամբարձումյան:

#### Վարժություն 63: Հետևյալ բառերից կազմեցեք հապավումներ:

Երևանի պետական համալսարան, բարձրագույն ուսումնական հաստատություն, Գիտությունների ազգային ակադեմիա, Լեռնային Դարաբաղի Հանրապետություն, հակաօդային պաշտպանություն, ներքին գործերի նախարարություն, էլեկտրոնային հաշվիչ մեքենա, ուսանողական գիտական ընկերություն, ֆիզիկական պատրաստություն, զինվորական ուժ:

#### Վարժություն 64: Հետևյալ բառերից կազմեցեք վաճային հապավումներ:

Առողջապահության բաժնի վարիչ, ուսումնական մասի վարիչ, աշխատանքի ղեկավար, զինված ուժեր, կուրսի ղեկավար, մարզային կոմիտե, զինվորական կոմիսար, Հայաստանի ճանապարհային տրանսպորտ, տնտեսական մասի վարիչ, սոցիալական ապահովագրություն:

#### Վարժություն 65: Հետևյալ բառերից կազմեցեք խառը տիպի հապավումներ:

Պետական համալսարան, Երևանի քաղաքային խորհուրդ, բնակարանային վարձ, բանվորական ավան, ժողովրդական դատարան, առևտորի բաժին, գիտական աշխատող, պետական բանկ, քաղաքական բյուրո, ֆիզիկական կուլտուրա, գիտական խորհուրդ, քիմիական մաքրում, քննական շրջան, Մոսկվայի ֆիլմ, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում, ֆիզիկական պատրաստություն:

#### Վարժություն 66: Հետևյալ հապավումները գրեցեք ամբողջական բառերով:

1. Սպորտային հապավումներ.  
ՖԻՍԱ, ՖԿՐԴԻ, ՄՕԿ:
2. Միջազգային կազմակերպություններ.  
ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵԲ, ԵԽ, ԵԿԲ, ԵՏՄ, ԱՄՀ, ՀԲ, ՎԶԵԲ, ՄԾՏՀԲ:
3. Բուհերի անվանումներ.  
ԵՊՃ, ԵԲՀ /ԵՊԲՀ/, ՀՊՀՄ, ԵՏՊԻ, ԵԵԾՊՀ, ԵՊԿ, ՀՊՃՀ, ԵՕԼՊԻ, ԵԳՊԻ, ՀԱՅ, ՍՅ, ՎՊՄԻ, ԳՊՄԻ, ՀԳԱ, ԵԳԹԻ, ԵԹԱՊԻ:
4. Կուսակցություններ.  
ԱԺՄ, ԱԻՄ, ԱԺԴ, ԺԱԿ, ՀԴԿ, ՀԺԿ, ՀՅԴ, ՀՇԸԿ /ԼՂ/, ՀՔԴՄ, ՍԻՄ, ՔԺԿ, ԱՄԿ, ՕԵԿ, ԵԿՄ:

### Հոմանիշ, Հականիշ, Համանուն

#### Վարժություն 67: Գրեցեք հետևյալ բառերի հոմանիշները:

Պատրանք, կասեցնել, նահատակ, ասուա, աննախադեպ, սատար, առաքինի, դեռատի, ամոքել, աներկրա, անշեց, իրազեկ, անաղարտ, վտիտ, ըմբոստ, նզովել, անթաքույց:

**Վարժություն 68:** Բերված հոմանիշներով կազմեցեք նախադասություններ, բացատրեցեք նրանց ոճական տարրերությունները:

Ծիծաղել-խնդալ-հոհոալ-քրջալ  
մեռնել-վախճանվել-զոհվել-նահատկվել-սատկել  
թախծել-տրտմել-վշտանալ-սրտնեղել  
խնել-ըմպել-կոնծել

**Վարժություն 69:** Տրված բնագրում գտեք ընգծված բառերի հոմանիշները:

Գիշերային խավարը բոլորովին թանձրացել էր:

Բանքերը զգուշորեն դուրս եկավ մի նեղ շավիղ՝ չիմանալով, թե ուր էր տանում այն: Խորանալով թափուտի մեջ՝ նա կանգ առավ, գոտու ոսկեզօծ ճարմանդն արձակեց, համեց դաշույնը և չարչարված մարմնին, հատկապես ընդարձագած՝ ոտքերին հանգստություն տալու համարպառեց հութքի կանաչի վրա. մի քանի րոպե ոհակի պես անշարժ պառկած մնաց՝ ջանալով քուն բերել հոգնատանց աչքերին: Ամբողջ օրը թափառել էր, չեր գտել յուրայիններին, և հիմա հայտնի չէր, թե ուր էր բերել նրան դժինեմ բախտը: Նա հայացքը հառեց աստղերով լեփի-լեցուն երկնքին:

... նրան տիրեց սահմոկեցուցիչ երկյուղը, որից սարսուաց մարմինը, արյունը սառեց երակներում: Յոգեկան տանջանքների մեջ դողէրոցքով հիվանդի նման նա երկար չարչարվում էր:

**Վարժություն 70:** Ընգծված բառերը փոխարինեցեք հոմանիշներով:

ա/ Առանց հավատի կյանքում դյուրին չէ մեռնելը:

Իսկ ապրելն արդեն անկառելի :

Գեղեցիկը և կատարյալը քո արարածների մեջ է:

Եվ հիազած ու նորից հիազած՝ նայում էր իր պատկերին և չէր հազենում:

Սղամը, անկարող լինելով խավարի մեջ գտնել դարձի արահետները, հոգնած քնեց մի ծառի տակ:

Եվ զամբյուղը քողնելով աղբյուրի մոտ, ուր Լիլիթի տաղավարն էր, գնաց որոնելու:

Սպասեց, մինչև Լիլիթը, ծաղիկներով աճմված, հազար նազանքներով երևաց:

- Ոչ, հոգի՞ս, ես գիտեմ Եղեմում այնահի վայրեր, ուր ստեղծողն անգամ տակավին ոտք չի դրել:

Ստեղծեց նրան, որ սրանչանա իր վեհ գործերի վրա և փառավորի աստվածային անունը:

Եվ բռնվեց դեպի վեր սուրացող կրակը և նրա բեկրեկուն, ճախրուն բոցերից ստեղծեց անդրանիկ կնոջը՝ Լիլիթին:

Փա՛ռք քեզ, Աստված, դու ստեղծեցիր ամենագեղեցիկը և կատարյալը քո արարածների մեջ:

Եվ փորձեց նորից գտնել Լիլիթին՝ մի անգամ էլ առերսելու, որ իրեն չըրի:

Լիլիթը գոգել էր աչքերը, և հեզ էր, և խոնարի ինչպես վիթերը, որ եռկնչում են ծաղիկների սոսափյունից:

Արդեն հասել էր դրախտի սահմաններին, որտեղից այն կողմ ծավալվում էր ամայի ու խոպան երկիրը:

բ/ Աշնան արևո քերմազնում էր նրան. ձորի խաղաղությունը դուրեկան էր: Ծառերին փաթաթված վագերն օռորվում էին քամուց: Դիլան դայու միտքն էլ տարութեր էր լինում, ինչպես քամինների բերանն ընկած չոր տերևն:

Եթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ, նա առանց իոգմության երկար կմնար այդ դիրքով և չէր հագենա մրգերը քաղած ու արդեն դեղնող ծառերի սոսափիզ:

Ներսը՝ քարե տաշտի մեջ, Դիլան դային ճմլում էր խաղողը, և արմագույն շիրան քարե տաշտից ծորում էր կավե կարասը:

Մի անհուն դառնություն ու կսկիծ ավերեց նրա չընադ օրը:

Երբ առավոտյան արևի շողը հնձանի դռնակի ճեղքով փայլեց ներսում, Դիլան դային զարթնեց, տրորեց աչքերը և աչքի տակ ցավ զգաց: Ուռուզքը չէր անցել:

**Վարժություն 71: Գտե՛ք հետևյալ բառերի հականիշները և տրված բառերով կազմեցեք նախադասություններ:**

Կանխիկ, մանրածախ, կարճաժամկետ, մեծաքանակ, վճարունակ, արտահանում, իրական, հնարավոր, կանխատեսել:

**Վարժություն 72: Գրեցե՛ք տրված բառերի նույնարմատ հականիշները:**

Համակրել, պատեհ, համաձայն, գեղեցիկ, որոշ, համակարծիք, շնչավոր, վեհերոտ, շատակեր, ժպտադեմ, երերուն, դյուրամարս, անփույթ, բացակա, արևածագ, ամրակազմ, այլաձև, մերձակա, հնառու, անհրապույր, անաչառ, փոքրոգի, թևավոր, պոչավոր, շքեղ, զորեղ, դեռահաս:

**Վարժություն 73: Գրեցե՛ք տրված բառերի նույնարմատ և տարարմատ հականիշները:**

Գիտուն, երջանիկ, կուշտ, աղմկոտ, անխնա, վճարովի, զորեղ, մեծահոգի, վախկոտ, իրապուրիչ, կայուն, անվարժ, իրական, անշուք, ունեոր, բթամիտ, անստույգ, պտղաբեր, պարկեշտ, հնազանդ, անդուր, շտապ, կիզիչ, մեծատուն:

Օրինակ՝ խելոք - անխելք – իիմար:

**Վարժություն 74: Խմբավորեցե՛ք հականիշները:**

Գաղտնի, կողմնակի, ծավալուն, փոքրոգի, կեղտոտ, արտասվել, նպաստել, մաքուր, անհրապույր, խրթին, բարի, ուրախանալ, անգութ, ցնծալ, անբիծ, նահանջել, անարատ, անսիրտ, գրոհել, չար, բացեիբաց, հրճվել, հակիրճ, դաժան, հարձակվել, ի լուր ամենքի, ծիծաղելի, բացահայտ, անագորույն, վեհանձն, գեղատեսիլ, անաղարտ, դյուրին, վաստակել, ինքնական, հետ քաշվել, բռնի, վատնել, ուղղակի, սեղմ, ընդարձակ, խոչընդոտել:

**Վարժություն 75: Գրեցե՛ք տրված բառերին իմաստով մոտ /հոմանիշ/ և հակառակ /հականիշ/ երկուական բառ:**

1. Պատեհ, գովասանք, կորով, ըստ, խիտ:
2. Տկարանալ, քնքշանալ, ավերել, գովել, երևալ:
3. Նին, շիտակ, մռայլ, ուրախ, գիտուն:
4. Առատ, կայուն, համեստ, խելոք:
5. Լեցուն, ծածուկ, հիանալի, աչառու, խրթին:
6. Երբեմն, արգավանդ, փողձկալ, ջլատել, ցնծալ:

## **Վարժություն 76: Գրեցե՛ք տրված բառերին իմաստով հակառակ /հականիշ/ բառեր:**

Ազգային, ակնհայտ, ավերել, արդիական, անտեղյակ, առատաձեռն, ազգայնացում, աղքատացում, առավելագույն, առկա, արդյունավետ, բազմատարր, բազմարժեք, գործադրելի, գնորդ, գերակշռել, երախտագետ, իրագործելի, խնայել, կեննտրոնաձիգ, հարկառու, հավասարակշիռ, շահախնդիր, շահութաբեր, տնտեսել, կամավոր, կարճատև, կուտակել, հապաղել, ձեռքբերում, օրինաչափ:

## **Վարժություն 77: Յետևյալ համանուններով կազմեցե՛ք նախադասություններ:**

Պարեն, դատել, այր, թռուցիկ, հանդերձ, մթնոլորտ, ավելացնել:

## **Վարժություն 78: Տեքստում գտե՛ք համանունները և դուքս գրեցեք դրանք:**

Խաղաղ օր էր սպասվում. եղանակը հանդարտ էր: Գետի վրա անարգել օրորվում էր կամուրջը: Գետի աջ ափին բարձրացել էր բազմահարկ շենքը, որտեղ և գտնվում էր մեր տունը: Սենյակներից մեկում լսվում էր երաժշտության ծանոթ եղանակը, որը վաղուց այդ վայրի մարդկանց մեջ էր: Մի մարդ ուզեց վերիիշել երգի առաջին տունը, բայց չստացվեց: Դիմում էր հարկը հատկացված էր շենքի կանանց, որտեղ նրանք ամռան ընթացքում իրենց չիրն էին փրում՝ պատրաստված վայրի տանձից ու խնձորից և զանազան մրգերից:

Սենյակներից մեկի բաց պատուհանի մոտ կանգնել էր մեկը: Մարդը կարուտակեզ հայացքը հառել էր դիմացի լեռներին և մերթ ընդ մերթ նայում ձախ ձեռքի ափին, որն ամբողջովին վնասված էր:

Դարկ է նշել, որ շենքի բնակիչները ոգևորված էին այդ հրաշք կառույցով:

## **Վարժություն 79: Գտե՛ք այն բառերը, որոնք համանուն ունեն և այդ համանուններով նախադասություններ կազմեցեք:**

Փողային նվազախումբը կատարեց Հայաստանի Հանրապետության օրիներգը:

Ցուցարարներն անարգել հասան Ազատության իրապարակ:

Մեր սուրբ փառքով դրեցինք պատյան:

Օրենքի վերջին կետը բազմաթիվ տարածայնությունների և շահարկումների տեղիք տվեց:

Փողն այն ամենն է, ինչ ծառայում է որպես հանրորեն ընդունված փոխանակման միջոց կամ վճարամիջոց:

Եթե իր վարկն ընկել է օրիորդի աչքում, մի՞թե վարկաբեկված պիտի մնա:

Բանբիոն էր հնչում Գողթան գավառի մարտ ու սեր երգող ձայնեղ գուսանների:

Անփորձ ու անգետ մի ծուտ հիմարիկ

Կոցահարում է, հա կոցահարում...

## **Վարժություն 80: Յետևյալ համանուններով կազմեցե՛ք նախադասություններ և բացատրեցեք նրանց գործածության տարրերությունները:**

աթոռակից - աթոռակից

ական - ական

աղոտ - աղոտ

անարգել - անարգել

այր - այր

այրի - այրի

անձուկ -անձուկ  
անցավ - անցավ  
բազուկ - բազուկ  
բյուրակն - բյուրակն  
բռնի - բռնի  
բութ -բութ  
բուն - բուն  
գիտակից - գիտակից  
գնային - գնային  
գնում - գնում  
գրավատուն - գրավատուն  
դատել - դատել  
դրամային - դրամային  
եղանակ - եաղանակ  
դաս - դաս  
դոդ - դոդ  
խմբավորում – խմբավորում  
կար – կար  
կետ – կետ  
հարկ – հարկ  
հանդերձ – հանդերձ  
հարել – հարել  
մասնատեր – մասնատեր  
մեկնել – մեկնել  
ոսկրացավ – ոսկրացավ  
վայրի – վայրի  
վարել –վարել  
վճարում – վճարում  
տարեկան – տարեկան  
փողային - փողային

## Դարձվածքներ

**Վարժություն 81: Հետևյալ դարձվածքներով կազմեցեք նախադասություններ:**

Երեսին ասել, ձեռք մեկնել, ոսկի ձեռքեր, ոտքերն ընկնել, ոտքի վրա, բերանը ջուր առնել, գլուխ բերել, թևաթափ լինել, սիրտ տալ, կրակի հետ խաղալ, ցավոտ տեղին դիպչել, ձեռք բերել, սիրտ առնել, երկու քարի արանքում մնալ:

**Վարժություն 82: Կազմել հետևյալ դարձվածքների հոմանիշ դարձվածքները:**

Ականջի ետևը գցել, բախտի քնահաճույքին մնալ, աշխարհով մեկ լինել, բերանը ծռել, բոլորն էլ մի խնորից են հունցած, գլխին նստեցնել, ընկած-ելած նարդ, լեզուն բռնվել, պատի գույն ստանալ, սիրտ գրավել, դարմանի տակ ջուր, երեսը պինդ:

### **Վարժություն 83: Կազմեցեք հետևյալ դարձվածքների հականիշ դարձվածքները:**

Աչքը կուշտ, աչքի լույս, աչքի վրա տեղ ունենալ, աչքը տանը, աստծո գառ, լեզուն կապ ընկնել, գործը գլուխ բերել, երկինք հանել, հացը կտրել, ոտքը թերև, ջրի գինը, գրպանը լիքը, ձեռքը բաց, թև առնել, աստղը դուրս գալ, բարի աչքով նայել, լեզուն երկար, կրակի վրա յուղ լցնել, շունչը կտրել, թամկ նստել, ծուռ նստել:

### **Վարժություն 84: Հետևյալ բառերի իմաստները արտահայտեցեք դարձվածքներով:**

Լռել, խաբել, շփոթվել, համառել, հուզել, թափառել, հեղինակազրկվել, աղաչել, ներքուստ, վշտացնել, արագ:

### **Վարժություն 85: Հետևյալ դարձվածքների իմաստն արտահայտեցեք մեկ բառով:**

Յույսեր փայփայել, լեզվին ազատություն տալ, անկողնուն գամվել, անարգանքի սյունին գամել, աչքերը կապել, խելքին մոտ, երկու ոտքը մի մաշիկուն դնել, ասեղի ծակից անցնել, ծաղիկ հասակ, ականջի հետևը գցել, սուր ճոճել, քարը քարին չթողնել, ոտքի վրա, աչքի ընկնել, ականջը գցել, սրտի խորքից, աչքը լիանալ, քամուն տալ, Աղամի զգեստով, ականջը կախ, աշխարհ բերել, արյունը պղտորել, բաց ճակատով, բուրդը քամուն տալ, աստղը խավարել:

### **Վարժություն 86: Կազմեցեք դարձվածքներ մարմնի մաս ցույց տվող բառերով:**

Աչք, ականջ, սիրտ, ձեռք, բերան:

### **Վարժություն 87: Նշել հետևյալ դարձվածքների առաջացման աղբյուրները և կազմել նախադասություններ:**

Ավետյաց երկիր, Նոյի ագռավ, անառակ որդի, բարելոնյան աշտարակաշինություն, արգելված պտուղ, Սողոմ-Գոմոր, աստծո գառ, երեսուն արծաթ, Յուդայի համբույր, Գողգոթայի ճանապարհ, ձեռքերը լվանալ, փշե պսակ:


### **Վարժություն 88: Որոշեցեք հետևյալ դարձվածքների ոճական նշանակությունները:**

Գլխին նստել, լուն ուղտ շինել, աքիլլեսյան գարշապար, ոտքին տեղ անել, գլուխը պտտել, ավագի վրա տուն շինել, բարելոնյան աշտարակաշինություն, կերածը քթից բերել, չվանին այսուր փոքը, սատանայից յոթ օր առաջ ծնված, Ամերիկա հայտնաբերել, փոթորիկի մի բաժակ ջրուն, պոչ խաղացնել, ակն ընդ ակն, ատամն ընդ ատաման, առյուծի բաժին, աչքի գրող, սևն ու սահտակը ջոկել, անկողին ընկնել, խելքի ծով, խոսքը կտուրը գցել, մեջք մեջքի տալ, աչքին թող փչել, քթի տակ, ձախորդ Փանոս, աչքը ծակ, բարձիթողի անել:

### **Վարժություն 89: Տրված դարձվածքներով կազմեցեք նախադասություններ՝ ուշադրություն դարձնելով նրանց ոճական կիրառություններին:**

Պարտքը սառեցնել, թափանցիկ ընտրություններ, թիվ կրակել, կլորիկ գումար, թամկ հաճույք, անմեղ գառնուկ, թանձր ստվերում թաքնվել, անարյուն ընտրվել, ուժի դիրքերից հանդես գալ, ժողովրդի վզին փաթաթել:

## ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ



## Հայոց տոհմիկ անունների խորհուրդը

Ականավոր հայագետ Յրազյա Աճառյանն ասել է. «Ոչ մի բան այնքան հավատարին կերպով չի ներկայացնում մեր պատմական կյանքի ելեզները և մեր ներքին ձգտումները, որքան հատուկ անունները»: Յայ անձնանունները, իրոք լինելով մեր ազգային արժեքների անբաժանելի մասը, մեծ խորհուրդ ունեն իրենց մեջ, քանզի ճշտորեն արտացոլում են մեր ժողովրդի անցած պատմական երկար ժանապարհի անցուղարձը, նրա բոլոր սրբություններն ու հիշատակները...»

Եզնիկ, Գառնիկ, Այծեմնիկ, Արծվիկ, Տեղնար, Վարուժան, Սոսե... Անուններ, որոնց արմատները գալիս են կենդանիների ու բույսերի պաշտամունքի վաղնջական ժամանակներից:

Արեգ, Լույս, Յրայր, Յրանուշ, Յրարփի, Արևիատ, Արևշատ, Արշալույս... Կրակին, լույսին և արևին երկրպագող մեր նախնիների հին հավատքի նշխարներ:

Արամազդ, Անահիտ, Աստղիկ, Նանե, Վահագն, Տիրան, Տրդատ, Միրիան, Միհրդատ, Մերուժան, Նար, Նարե, Նարինե.... Յայոց հեթանոսական դիցանուններ և նրանցից ծնված անձնանուններ:

Թորգոն, Յայկ, Արմենակ, Գեղամ, Արամ, Արա, Շավարշ, Պերճ, Պարույր, Յրայա... Մեր նախահայրերի ու մեծերի նվիրական անունները:

Արարատ, Մասիս, Սիս, Արաքս, Սիփան, Վան, Սասուն, Տարոն, Վարագ, Անի... Մեր սրբազան լեռների ու գետերի, հնամյա քաղաքների անունները:

Մովսես, Եղիշե, Կորյուն, Ղևոնդ, Անանիա, Գրիգոր, Միսիթար... Մեր հնամյա պատմությունն անմահացնողների սրբություն դարձած անունները...

Եվ անունների այս աստղաբույլերի մեջ առավել շողջողուն ու հզոր՝ Յայկ, Տիգրան, Մեսրոպ, Վարդան, Դավիթ, Անդրանիկ... Ամեն մի անուն՝ իմաստավորված մեր ժողովրդի մի սքանչելի զավակի սխրանքով, մեր հնամյա պատմության հերոսական մի դրվագով, սրբագործված դարերի խորհրդով, ամեն մի անուն՝ հույզերի ու հույսերի թարգման ու խորհրդանիշ...

Իսկ որո՞նք են հայկական անձնանունները: Դրանք պայմանականորեն կարելի է երեք խմբի բաժանել.

ա) Բուն հայկական անձնանուններ, որոնք մեր ժողովուրդը կրել է անհիշելի ժամանակներից՝ Յայկ, Յայկանուշ, Պարույր, Գեղամ, Գառնիկ, Եզնիկ, Տաճատ, Վրույր և այլն: Նրանք հիմնականում կամ ստուգաբանվում են հին հայերենով, կամ էլ ընդհանրապես չեն ստուգաբանվում:

բ) Յին շրջանում, հիմնականում կրոնի ընդհանրության պատճառով, մեր հարևան ժողովուրդներից փոխառնված և վաղուց ի վեր հայացած անձնանուններ: Նրանցից են հունական ծագումով Գրիգոր (արքուն), Եվգինե (բարեծնունդ), Արսեն (առնական) անձնանունները, եբրայական ծագումով Աննա (շնորհալի, ողորմած), Սամվել (աստված լսեց), Թամար (արմավենի), իրանական ծագումով Բագրատ (աստվածատուր), Արշան (արջի ուժ ունեցող), Խոսրով (բարեհամբավ), Խորեն (արևիկ) և այլ անձնանուններ: Ի դեպ, փոխառյալ որոշ անձնանուններ հեռավոր աղերսներ ունեն հայոց հնագույն անունների հետ: Օրինակ՝ եբրայական ծագումով Եսրեր անձնանունը, որ բխում է ասորա-բարելական իշտար աստվածուհու անունից, փաստորեն մեր Աստղիկ անձնանվան մի տարբերակն է, քանի որ հայոց հեթանոսական Աստղիկ դիցուիին իշտարի գուգահեռներից մեկն է Եղել: Նվարդ անձնանունը համարվում է պարսկական փոխառություն՝ «նոր վարդ» նշանակությամբ, սակայն բացառված չեն այս անձնանվան և մեր հնագույն առասպելի հերոսուհի Նուարդ անվան ուղղակի կապը: Կարեն անձնանունը նույնպես համարվում է պարսկական փոխառություն, սակայն հավանական է նաև նրա և Յայկական լեռնաշխարհի Յայասա հնագույն երկրի արքաներից մեկի՝ Կարաննիսի կամ Կարաննինի անվանությունը:

գ) Ուշ շրջանում հայերենի բառապաշտով և լեզվամտածողության օրենքներով ստեղծված անձնանունները՝ Լուսվարդ, Արփինե, Սիրարփի, Սերինե, Յայարփի, Նարինե, Արմինե, Նախուիկի և այլն:

Ցանկանք, որ դարերի խորքից եկող հայոց տոհմիկ անձնանունները հարատևեն ամեն մի հայ ընտանիքում:

/նամուլից/

#### Վարժություն 90: Արտագրեցե՛ք՝ գրելով մեծատառերը:

Եղուարդաս մեժելայտիսը կրկին այցելեց հայաստան: Բանաստեղծը եղավ գառնիում, գեղարդում, էջմիածնում, սարդարապատում: Թունանյանի շրջանում հանդիպումներ ունեցավ բանվոր - ծառայողների, արվեստագետների, գրողների, լրագրողների, ուսանողների հետ: Նրա հեղինակային երեկոնները կազմակերպվեցին հայաստանի գրողների միության տանը, երևանի համալսարանում, խնկո-ապոր անվան գրադարանում:

Բանաստեղծի համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հատկապես լոռիում՝ դեբեի աջ ափին գտնվող անտառամերձ տնակում: Երևանում առաջին անգամ նա եղավ մատենադարանում: «Յայաստանը գրքի ու դպրության պաշտամունքի երկիր է, ես խոնարհվեցի մեսրոպ մաշտոցի գերեզմանի և մատենադարանի դիմաց դրված նրա արձանի առջև», - գրում է նա:

«Ինձ վրա անջնջելի տպավորություն թողեցին հաղպատը, սանահինը, սարդարապատը: Իսկ գեղարդը... Եթե աշխարհը ժամանակին ինանար, այն յոթ հրաշալիքներից մեկը կիամարեր»:

Եղուարդաս մեժելայտիսը լիտվիայի ընթերցողների սեղանի գիրքն է դարձել նարեկացու, նահապետ քուչակի, թունանյանի, ավ. իսահակյանի, եղիշե չարենցի, պարույր սևակի ստեղծագործությունները:

/նամուլից/

#### Վարժություն 91: Կազմեցե՛ք նախադասություններ հետևյալ բառերով ու բառակապակցություններով:

Կովկաս, օգտակար հանածոներ, Յայոց համագգային շարժում, Յայաստանի Յանրապետության ազգային ժողով, ազգային մշակույթ, կրկես, խոսքի ազատություն:

#### Վարժություն 92: Պատասխանե՛լ հետևյալ հարցերին:

1.Ի՞նչ բատրոններ, կինոթատրոններ, համերգասրահներ գիտեք Երևանում: 2.Յայ ո՞ր գրողների արձանները կան Երևանում: 3.Յայաստանի ո՞ր քաղաքներում ու շրջաններում եք եղել: 4.Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործություններն են ձեզ ավելի դուր գալիս:

#### Վարժություն 93: Թվարկեցե՛ք եվրոպական պետությունները՝ նշելով յուրաքանչյուրի մայրաքաղաքը:

#### Վարժություն 94: Կազմեցե՛ք բառերի հոգմակին, բացատրեցեք, թե ինչու են -եր կամ -ներ վերջավորություն ստանում:

Սարք, սահնակ, գնդակ, գիպս, գոլորշի, մարզիկ, հեռագիր, դասախոս, լուսաշերտ, ծառուղի, խողովակաշար, գիտափորձ, ծածկագիր, փորձակայան, մատիտ, լուր, շուրթ, երկիր, կայծ, արև, քար, արջ, օձ, ընկեր, բարեկամ, լիճ, ձմեռ, գետ, գետակ, ափ, հոնք, ոտք, առու, վանք, եկեղեցի, վանական, կոճ, կոճակ, կող, գյուղացի, թշնամի, թռո, նուռ,

դուռ, վարդ, լեռ, սագ, փողոց, բարդի, պայթյուն, առյուծ, կառք, կարգ, միավոր, բուրգ, բազմություն, սալոր, քառակուսի, հավասարում:

**Վարժություն 95: Առանձին սյունակներում գրեցե՛ք հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերը՝ փակագծերում գրելով եզակին:**

Դասագրքեր, մատենագիրներ, գրիչներ, անձրևաջրեր, մեծասիրտներ, արջամկներ, ժամացույցներ, ընդունակություններ, գրեր, լուրեր, ծիեր, գնդեր, գնդակներ, նյութեր, հետազոտություններ, միջուկներ, լճեր, ունկնդիրներ, խոճիրներ, վրձիններ, կղզիններ, ստեր, մտքեր, հանդիպումներ, բներ, թփեր, հիմքեր, գներ, ծկներ, տներ, կիրճեր, անուններ:

**Վարժություն 96: Առանձնացրե՛ք անեզական և անհոգնակի գոյականները:**

Երիտասարդություն, մանկություն, Բալկաններ, ջրեր, լիմոնադ, Գրիգորենք, կոչկեղեն, Ուսում, մեղր, ստրկություն, կաթ, միս, ճերմակություն, Կարպատներ, խմորեղեն:

**Վարժություն 97: Կազմեցե՛ք հետևյալ գոյականների որոշյալ առումը:**

Ուսուցուիի, դերասան, մասնագետ, պատանի, փայտ, քլոր, թթվածին, գրքույկ, եռանկյունի, անկյուն, դաշնամուր, հանրահաշիվ, մեթոդ, օճագիր, նախագիծ, աշխատանք, երեխա, տարի, երեկո, մատանի, արքա, բազե, սար, տուն, տղա, աղջիկ, քամի, սասունցի, լորի, Լաուրա, Տիգրան, Արա, Ռուզան, Լիանա, օպերա, կենտրոն, որդի, որսորդ, ոզնի, ջուր, ակադեմիա:

**Վարժություն 98: Կազմեցե՛ք նախադասություններ՝ հետևյալ գոյականները գործածելով ուղղական, սեռական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով:**

Քար, դարբին, գիտնական, ոսկերիչ, արծաթագործ, հուր, նախագահ, գոհար, մայր, օրիորդ, տիկին, պարոն, դաշտ, վազքուղի, մերսում, ամիս, տարի, այգի, սիրտ, երկինք, շաբաթ, լողորդ:

**Վարժություն 99: Գրեցե՛ք բաղադրյալ հատուկ անուններ:**

- ա/ որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով,
- բ/ որոնց բաղադրիչներից միայն մեկն է գրվում մեծատառով:

**Վարժություն 100: Գրեցե՛ք հատուկ անուններ /հայկական անձնանուններ/, որոնք առա- ջացել են՝**

- ա/ հասարակ անուններից,
- բ/ ածականներից:

**Վարժություն 101: Գրեցե՛ք թերթերի, մարզական ակումբների, թիմերի բաղադրյալ հատուկ անուններ:**

**Վարժություն 102: Արտագրեցե՛ք գրելով մեծատառերը:**

Ա/ արաբական միացյալ եմիրություններ, լեհական ժողովրդական հանրապետություն, մեծ բրիտանիայի միացյալ թագավորություն, բիրմայական միություն, փոքր

ասիա, արևմտյան բեռլին, տիգրան երկրորդ, նոր արեշ, պետրոս առաջին, վերին արտաշատ, ատլանտյան օվկիանոս, մեծ քարե կամուրջ, «խաչագողի հիշատակարան», «հուշարձան մայրիկիս», «նոր կյանք»;

թ/ «սուրբ մեսրոպ մաշտոց» շքանշան, հայրենական մեծ պատերազմ, հաղթանակի պողոտա, «մովսես խորենացի» շքանշան, սասունցի դավիթ, «անուշ» կարի արտադրական միավորուն, «հայաստան» համահայկական հիմնադրամ, «օրինաց երկիր» կուսակցություն, «հաղթանակ» սպորտային կազմակերպություն, «ողինամո» մարզական ակումբ, «երկրապահ» կամավորական ջոկատ, «աշխատանք» սպորտային ընկերություն, «կանաչ աշխարհ» միջազգային կազմակերպություն, «առողջ ապրելակերպ» միջազգային կազմակերպություն, «զատիկ» մանկան տուն:

#### Վարժություն 103: Անհրաժեշտ տեղում գրեցե՛ք մեծատառով:

«սկան» մարզական կամավոր ընկերություն, «ողինամո» մարզական ակումբ, «հայկական ֆուտբոլ» պարբերական, մերձավոր արևելք, հյուսիսային սառուցյալ օվկիանոս, հայկական բարձրավանդակ, իրո երկիր, երևանի պետական համալսարան, փոքր մասիս, «գիտություն և տեխնիկա» ամսագիր, փոքր ասիա, մեծ արջի համաստեղություն, վերին թալին, պետական դումա, ֆրանսիայի ազգային ժողով, գյուղատնտեսական ակադեմիա, գիտության և կրթության նախարարություն, «գրական թերթ» լրագիր, լեռնարդո դա վինչի, հայկական պար լեռնաշղթա, ասեղի հրվանդան, իվան ահեղ, աշուտ երկաթ, լուդվիգ վան բեթհովեն, հայաստանի հանրապետություն, անվտանգության խորհուրդ, փարիզյան կոմունա, միավորված ազգերի կազմակերպություն, «մայրական փառք» շքանշան, անգլիայի համայնքի պալատ, հայաստանի ազգային ժողով, աշուտ սայաթ-նովա:

#### Վարժություն 104: Բաց թողած բառերը լրացրեցե՛ք համապատասխան գոյականներով:

Սարսօռում եմ  
Հալվող-հալվող քո ...  
Ու պաղ ...  
Եվ այն ...  
Թե կարող եմ քեզ կորցնել:

/միտք, հպում, քամի/

Թղթորում եմ  
Բաց աչքերով ...  
Փակ ...  
Եվ այն ...  
Որ կարող եմ շատ շոյելուց  
... պես քեզ մեռցնել:

/թշնամի, խարիսափում, թոշնակ, միտք/

#### Վարժություն 105: Ջետկյալ անհոգնակի գոյականներով կազմեցե՛ք նախադասություններ:

Թթվածին, գինի, բենզին, մեղր, մածուն, շաքարավագ, օդ:

**Վարժություն 106: Հետևյալ հավաքական գոյականներով կազմեցեք նախադասություններ:**

Ազգ, ժողովուրդ, երամակ, ուսանողություն, մտավորականություն, ավագանի, ընտրանի, խմորեղեն, բանակ:

**Վարժություն 107: Տրված բայերից կազմեցեք գոյականներ:**

Գանձել, գնել, ժառանգել, գործել, հոսել, տնտեսել, վարել, հարվածել, ծրագրավորել, վաճառել, որոշել, կառուցել, ազդել, փորձել, անցնել, կանխատեսել, լճանալ, առաջադրել, շահարկել, ուղեկցել, ծագել, բարեմաղթել, չարաշահել, ապրել, ձեռք բերել, ձեռք սեղմել, մեջ բերել, թռչկոտել:

**Վարժություն 108: Հետևյալ նախադասություններից դուքս գրեցեք գոյականները, որոշեցեք դրանց թիվը, հոլովը, հոլովումը:**

1. Անտառում բարձրաբերձ ժայռեր կային, որոնց անմատչելի բարձունքներում արժվի ու բազեի բներ էին:
2. Հարևան սենյակում հավաքված մերձավորները փսփսութքով խոսում էին միմյանց հետ՝ աշխատելով չաղմկել, պահպանել լարված ու խորախորհուրդ անդորրը:
3. Նա հանդարտվում է, պղտոր հայացքով նայում եկեղեցու կողմը, հետո կարծես ելելով ընդարձացումից՝ քայլերն ուղղում դեպի գյուղ:
4. Թվում է կենդանի հեքիաթ, ինքնակերպ ռիթմով շնչում են նրանք, խոսում միալար, մեղմորեն ժպտում միմյանց հոգու գալտնաթաքույց թրթիռով, ցոլցլում են անշեղ, և նրանց լույս դողանջումնը տարրալուծվում է անպարփակ տիեզերքում:
5. Կապուտակ բարձունքից զմայլված նայում էին ուղևորներ, թուխաբերի արանքում որոնում հարազատ հողը, նայում լուցկու տուփերի նմանվող շենքերին:
6. Օդում զգացվում էր գարնան բույրը, դաշտը հազարավոր ժայտներով կանչում էր հացավանցիներին:

**Վարժություն 109: Տրված գոյականները խմբավորեցեք ըստ հոլովումների:**


Պետություն, մենատեր, կնքահայր, տաճտիկին, ծագում, շարասյուն, դար, մահ, դրամատուն, առավոտ, տարի, գործընկեր, շաբաթ, տնտեսություն, լուծում, սպառող, աշխատուժ, գոլորշի, առաջարկ, րոպե, նրգակցություն, հարկ, կենդանի, ազարակ, մարդիկ, աշուն, ներդրում, հոգի, գին, հանգիստ, անուն, բյուջե, այգի, բանալի, օր, ժամ, պահանջարկ, տղամարդ, դուռ, Աստված:

**Իսկ գիտե՞ք, որ...**

Հայտնի են դեպքեր, երբ մարդիկ անսպասելի «նվերներ» են ստացել երկնքից: Դրանք նատուցել են ուժեղ քամիները, փոթորիկներն ու մրրիկները: Նորվեգիայի և Շոտլանդիայի բնակիչները, օրինակ, մեկ անգամ չեն, որ ականատես են եղել «ծովատառեխների անձրևի»:

Իսպանական մի գյուղի վրա 1904 թ. ամպերից հանկարծ հացահատիկ թափվեց: Պարզվեց, որ մրրիկն այն բերել է Միջերկրական ծովի վրայով, Մարոկկոյից, ուր ավերել են ցորենի պահեստները: Դեպքեր են եղել, երբ երկնքից վայր են ընկել նաև նարինջներ:

## ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ



## Բարելոնի կախովի պարտեզները

Մեր թվարկությունից առաջ՝ 6-րդ դարում Միջագետքում տարածվում էր Բարելոնը՝ բարձր բերդապարհապներով, բրոնզագույն ութ դարպասներով, քաղաքը կիսող ոլոր-մոլոր Եփրատով, որի պաղապաջուն ջրերում խայտում էին կարմրախայտի վտառները, վառ փիրուզագույն ու մուգ Վարդագույն ջնարակված հախճասալավոր ուղղաձիգ փողոցներով, գլխավոր դարպասի առջև՝ դեղին կամ կարմրաշագանակագույն բաշերով այսուժների երթով, որոնք ասես ողջունում էին քաղաք մտնողներին: Եփրատի ափերին ձգվում էին փյունիկյան արմավենիների՝ քաղաքին հեքիաթային տեսք պարզուղ հուռքի պուրակները: Դարպասից ներս՝ գետի բարձրադիր ափին, արքայական ուղղանկյուն պալատի՝ քաղաքի բոլոր կողմերից տեսանելի պարսպապատերն էին վեր կարկառում՝ գմբեթարդ աշտարակներով ասես իշխելով շրջակայքի վրա: Սակայն Բարելոնի զարդը կախովի պարտեզներն էին, որ, ըստ հույն պատմիչ Յերողոտոսի, հիմնվել էր Նաբուգոդոնոսոր թագավորի սիրելի կնոջ՝ մեդիացի թագուհու համար: Սովոր լինելով իր հայրենիքի կանաչագարդ լեռներին, փթթուն անտառներին, սառնորակ ջրերին ու շնկշնկան գեփյուրին՝ մեդիացի դշխուհին շոգ, տոթակեզ Բարելոնում թախտում էր՝ կարոտելով ծննդավայրի՝ իր հոգուն այնքան սիրելի բնաշխարհը: Զգտելով փարատել կնոջ թախտից՝ Նաբուգոդոնոսորը որոշեց նրան անակնկալ մատուցել՝ նվիրելով մի բերրի օազիս՝ նման Մեդիայի ծառաստաններին:

Պարտեզներն ուղղակիորեն կախված էին օդում՝ տեղափորված լինելով չորս հարկաշերտերից քաղկացած աշտարակի վրա: Յուրաքանչյուր հարկ նստած էր աղյուսե կորնթարդ կամարներին, որոնք հենվում էին քառանկյուն մույթերին: Յարկաշարքերի հարթակները կառուցված էին խոշոր քարերով՝ ծածկված նախ՝ եղեգնի շերտով, ապա՝

ասֆալտի լցոնով, հետո՝ գիպսով շաղկապված աղյուսներով, վերջապես անագե թիթեղներով՝ վրան՝ բերրի հողի շերտ՝ այնքան հաստ, որ նրա մեջ արմատակալեին և աճեին անգամ հաստաբույն ծառերը: Պարտեզի հարկերը մինյանց կապում էին սանդուղքները՝ սարքված հարթ, հղկված սալերից, կողքերին՝ փայտյա դրվագազարդ ճաղեր:

Մեդիայի պատրանք ստեղծելու նպատակով թագավորը բերել տվեց հազվագյուտ տնկիներ: Բաղեղապատ սանդղահարթակից ուղեգորդի նման ճեմուղու եզրերին բուրում էին դրախտավարդը, խոլորձը, խորդենին, բրաբիոնը, երիցուկները, հիրիկները, կուսածաղիկները, շքանարգիզը, եղրևանին: Քիչ այն կողմ հապալասի և հավամրգի թիերն էին, դրանց հետևում՝ խնկեղեգն ու գինեղեգը, ցախկեռասն ու քամու մեղմօրեր խշշյունի տակ մեղմորեն տարութերվող վարսաթափ ծփիները: Այնքան զով էր արբեցնող բույրերով հազեցած տարաշխարհիկ բույսերի ու ծառերի այդ աշխարհում, որ միջօրեի կիզիչ տապին մինչևսկ կարելի էր սրբարթալ սարսորուն օդից: Անցան հարյուրամյակներ, և երբեմնի աշխույժ Բաբելոնը՝ որպես ասուապ, ժամանակի հետ անհետացավ պատմության զիգզագ կեռմաններուն: Զրիեղեղը քանդեց Նաբուգոդոնոսորի՝ կավից կառուցված պալատը (ի դեպ, Բաբելոնում բոլոր կառույցները կավից էին), աստիճանաբար՝ նաև պարտեզները: Անեացավ հեքիաթը՝ որպես հուշ ապրելով լոկ պատմության էջերում:

**Վարժություն 110: Արտագրեցե՛ք հետևյալ առածներն ու ասացվածքները և ընդգծեցե՛ք որակական ածականները մեկ գծով, հարաբերականները՝ երկու գծով: Որոշեցե՛ք դրանց պաշտոնները նախադասության մեջ:**

Անբանը հաց ուտելիս առողջ է, աշխատելիս՝ հիվանդ:

Անպտուղ ծառը կստրեն, պտղատու ծառին քար կգցեն:

Անտեր ոչխարը գայլ կուտի:

Բաց բերանը ճանճ կմտնի:

Գիտուն աղվեսը երկու ոտքով է թակարդ ընկնում:

Ընկերովի մահը հարսանիք է:

Խելքը ոսկե թագ է, ամեն մարդու գլխին չի լինում:

Յերոսը մեկ անգամ է մեռնում, վախկոտը՝ հազար:

Սև հավն էլ է սպիտակ ծու ածում:

Արագ եմ քայլում, ասուն են ծուռ է, կամաց եմ քայլում, ասուն են՝ կույր է:

**Վարժություն 111: Կազմեցե՛ք հետևյալ որակական ածականների հականիշները:**

Լավ, բարի, մեծ, երկար, գեղեցիկ, հեշտ, տաք, ուժեղ, բարձր, բաց, դալար, քաղցր, հին, լայն, խոնավ, խիտ, վախկոտ, ծանր, կարծր, համեղ, հարթ, գլխավոր, մաքուր, մեղավոր, պարզ, սուր:

**Վարժություն 112: Կազմեցե՛ք նախադասություններ՝ հետևյալ ածականների հետ գոյականներ գործածելով:**

Առատ, ծովային, կարճ, երկարե, սպորտային, տուֆակերտ, հարթ, թերև, կարմիր հարաբերական:

**Վարժություն 113: Կազմեցե՛ք նախադասություններ՝ հետևյալ գոյականների հետ գործածելով ածականներ:**

Գնդակ, մեծություն, մարմին, ալիք, շղթա, մարզիչ, վիճակ, հարված:

**Վարժություն 114:** Կազմեցե՛ք հետևյալ ածականների բաղդատական և գերադրական աստիճանները՝ դրանք գործածելով նախադասության մեջ:

Գեղեցիկ, հզոր, խիստ, հանգիստ, բարձր, լավ, սիրելի, մեծ, արժանի, հավատարիմ, բարի, հուզիչ, ծանր:

**Վարժություն 115:** Դուքս գործեք որակական և հարաբերական ածականները, կազմեցե՛ք որակական ածականների համեմատության աստիճանները:

### Մորս համար գազել

Հիշում եմ դեմքը ծեր, մայր իմ անուշ ու անգին,  
Լույս խորշումներ ու գծեր, մայր իմ անուշ ու անգին:

Ահա նստած ես տան դեմ ու կանաչած թթենին  
Ղեմքիդ ստվեր է զցել, մայր իմ անուշ ու անգին:

Նստել ես լուռ ու տխուր, իին օրերն ես հիշում այն,  
Որ եկել են ու անցել, մայր իմ անուշ ու անգին:

Եվ հիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց, -  
Ո՞ւր է արդյոք հեռացել, մայր իմ անուշ ու անգին:

Ո՞ւր է արդյոք հիմա նա, ո՞ղջ է արդյոք թե մեռած,  
Եվ ի՞նչ դռներ է ծեծել, մայր իմ անուշ ու անգին:

Եվ երբ հոգնած է եղել, և երբ խարվել է սիրուց –  
Ո՞ւմ գրկում է հեծեծել, մայր իմ անուշ ու անգին:

Մտորում ես դու տխուր, և օրորում է թթենին  
Տխրությունը քո անծիր, մայր իմ անուշ ու անգին:

Եվ արցունքներ դառնաղի ահա ընկնում են մեկ-մեկ  
Քո ձեռքերի վրա ծեր, մայր իմ անուշ ու անգին...

/Ե. Չարենց/

**Վարժություն 116:** Հետևյալ գոյականների հետ գործածեցե՛ք համապատսխան ածականներ և բարձրաձայն կարդացե՛ք ստացված բառակապակցությունները. դրանցով կազմեցե՛ք նախադասություններ:

... մարդ, ... կայարան, ... կյանք, ... աշխատանք, ... գիրք, ... աշխատող, ...  
մասնագետ, ... միացում, ... եռանկյունի, ... գետ, ... տուֆ, ... ճաշ, ... կատու, ... ծառ, ...  
խնդիր, ... օվկիանոս, ... մեծություն, ... երևույթ, ... պատմվածք:

**Վարժություն 117: Դուրս գրեցե՛ք բաղդատական և գերադրական աստիճան ունեցող ածականները, բացատրեցե՛ք դրանց կազմությունը:**

1. Լինում են բոպեներ, որ մարդ թշվառության, վտանգի և դաշն պատահմունքների ամենասաստիկ հարվածների տակ ավելի քաջանում, ավելի տոկուն, անխորտակելի սիրտ է ստանում և ավելի հանգստանում: 2. Հայաստանի աստվածը տեսնում էր չարությունը, ավել վատքար, քան Սոդոմի մեջ անպատիծ էր թողնում չարագործին: 3. Մեր լեռներից ավելի շատ օգուտ են քաղել օտարները, քան մենք ինքներս: 4. Այդ կարելի է տեսնել ամենահասարակ մանրամասնությունների մեջ անգամ: 5. Սպահանի պաշարման ժամանակ ավելի սարսափելի վիճակի ենթակվեցին Նոր Զուղայի հայերը: 6. Ամենահին ժամանակներում այս կղզին Ոշտունյաց հզոր նախարարառության գլխավոր ամրոցներից մեկն էր: 7. Մանվել ճարտարապետը սպառեց իր բոլոր արարչագործ տաղանդը այդ տաճարը ավելի մեծաշուրջ, ավելի փառավոր կառուցելու համար, քան մինչ այնօր եղածները Ոշտունյաց աշխարհում: 8. Շատ և շատ անգամ անտանելի նեղության մեջ չարչարված քրիստոնյաների լացը և բողոքը հասել են բարձրագույն կառավարությանը: - Այդ մարդիկ Վանի ամենահարուստ վաճառականներից էին: 9. Ավանց գյուղի այգիները ամենագեղեցիկներն են Վանի շրջակայքում: 10. Գիշերը ես քնեցի սովորականից ավելի վաղ, որովհետև սաստիկ հոգնած էի: 11. ճառասիրության ցանկությունը ավելի զորեղ էր նրա մեջ, քան որդեսիրության զգացմունքը: 12. Այդ խայտառուկությունը ավելի սպանիչ էր, քան թե մահը այն մարդու համար, որ սովորել էր հեծնել ամենաշնտիր նժույգների վրա... 13. Այդ ամենաթամնկագին վարձատրությունն էր, որ ստացավ նա իր գիշերային այցելության համար: 14. Մերը ավելի բարձր է, քան հասարակության նախապաշարմունքը: 15. Եվ այդ սերը ավելի մեծ արժեք ուներ նրա համար գլխավորապես այն պատճառվ, որ նազելի, իշխանական օրիորդը սիրեց նրան իր վիճակի ամենաթշվառ ժամանակում: 16. Նա կրում էր իր քրոջ սև, վառվուն աչքերը, որոնք ուրախությունից ավելի անհանգիստ և ավելի շարժուն էին այժմ: 17. Մի ուրիշը կրացեր նրա առջև իր հոգու ամենաաջերմ զգացմունքները և մարդկային լեզվի ամենաբարձր, ամենավսեմ խոսքերով կիայտներ իր սրտի անսահման ուրախությունը... 18. Երբեմն մի ամենահասարակ հակադիպություն փարատում է մեր սրտից ամենածանր տարակուսանքներ: 19. Արևը նոր էր ծագել. նրա արշալույսը ավելի գեղեցիկ էր, քան վերջալույսը:

**Վարժություն 118: Նշված բանաստեղծությունից գտե՛ք ածականները և առանձնացրե՛ք ըստ տեսակների:**

Ա/ Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,  
Երբ ամեն ինչ երազում է հոգու հետ,  
Երբ ամեն ինչ, խորհրդավոր ու խոհուն,  
Ցնորում է կապույտ մութի աշխարհում...  
Չկա ոչ մի սահման դնող պայծառ շող,  
Աղմուկի բեռ, մարդկային դեմք սիրտ մաշող  
Յիվանդ սիրտդ չի տրտնջում, չի ցավում,  
Որպես երազ մոռացումի անձավում.  
Եվ թվում է, որ անեզր է ամեն ինչ,  
Որ ողջ կյանքը է մի անսահման քաղցր նինչ:

Բ/ Քո մազերի ցնորական փայլը պայծառ, 4  
Ժայռից իջնող ջրվեժի պես առատահոս.  
Քո աչքերի խորությունը ոսկ,

Որ վառված են մութ ցանկության ջահեր անխոս.  
Քո ժպիտը թունոտ ծաղկանց բույրի նման,  
Որ տիրաբար արբեցնելով մահ է բերում,  
Քո խենք մարմնի սարսուները երջանկության  
Տիրաբորբոք արևներ են բոցավառում...  
Թույլ տուր սուզվում են քո աչքերի անդունդը մութ,  
Բորբոքի՛ր ինձ քո հույզերով քաղցր ու անգութ,  
Մարի՛ր իմ մեջ, մարի՛ր իմ մեջ ցնորք ու հուշ...

**Վարժություն 119: Հետևյալ արմատներով կազմեցե՛ք ածականներ՝**

ազն, ազատ, անձն, արդար, միտ(ք), գութ, խոսել

**Վարժություն 120: Կազմեցե՛ք մարզական բառեր (ածականներ) հետևյալ ածանցներով՝**

ային, ական, ավոր, ովի, եղեն, ուն, յալ, ելի, գեր

**Վարժություն 121: Հետևյալ տեղանուններից -ական ածանցով կազմեցե՛ք ածականներ:**

Աբխազ, Յայաստան, Կորեա, Բավարիա, Ալբանիա, Վրաստան, Անատոլիա, Եգիպտոս, Ֆրանսիա, Ֆինլանդիա, Բենգալիա, Կանադա, Պանամա, Ասիա, Եվրոպա, Լատվիա, Էստոնիա, Ավստրալիա, Յնդկաստան, Անգլիա, Աջարիա, Բյուզանդիա, Իռլանդիա, Լեհաստան, Յունաստան, Սիրիա, Ուրուգվայ, Շվեյցարիա:

**Վարժություն 122: Կազմեցե՛ք ածականներ և գոյականներ հետևյալ ածանցներով՝ ական, ենի, իկ, իչ, ու, եղեն:**

**Վարժություն 123: Հետևյալ հատուկ անուններից ածականներ կազմեցե՛ք:**

Արցախ, Յայաստան, Եգիպտոս, Նոյ, Արարատ, Ամերիկա, Կիլիկիա, Սյունիք, Շվեյցարիա, Ալպեր, Երևան, Բաբելոն, Յունոս, Սլովակիա, Ղնեպր, Խաղաղ օվկիանոս, Սև ծով, Յեռավոր Արևելք, Նոր Զելանդիա, Լու Անժելես, Թուրքիա, Խորայել, Պաղեստին, Բեյրութ, Աֆրիկա, Փարիզ, Թրիլիսի, Զապորոժիե, Նահրի, Սիրիր, Դամոկլես, Դայանոս, Տրոյա, Արևմտյան Եվրոպա:

**Վարժություն 124: Հետևյալ բառակապակցություններից կազմեցե՛ք ածականներ և դրանք գործածել նախադասությունների մեջ:**

Երախտիք մոռացող, տիեզերքը ցնցող, միշտ դալար, տիրոջը դավող, տոթից կիզված, մշտապես վառվող, ուխտը դրժող, հոգ տանող, վեհ ու պանծալի, եկամուտ բերող, հնում տպագրված, բազում շնորհներ ունեցող, մեղքերով լի, կյանքով խնդացող, ձեռքով կերտված, զարդերով նախշված, սյուներով զարդարված, մարդկանցից խուսափող, շահ բերող, սեր տենչացող, երկնքի մեջ սուզված, ահավոր ու զարհուրավոր, նրբահյուս:

**Վարժություն 125: Հետևյալ արմատներով կազմել ածականներ և դրանցով՝ բառակապակցություններ:**

Ազգ, բան, ամբողջ, անուն, իր, ուղիղ, հարկ, դաս, սահման, կանոն, շահ, հիմն, մաս, մեջ, գին, կանուխ, գլուխ, որակ, վստահ, դրամ, տեղ, վճար, ապրանք, շուկա:

**Վարժություն 126: Հետևյալ բառերով կազմեցեք ածականներ:**

Ակնթարթ, ածանց, դրամատուն, հեռանկար, ժամկետ, տնտես, մենաշնորհ, խմբաշնորհ, մրցակից, տնօրեն, կառավարել, եկամուտ, շրջան:

**Վարժություն 127: Կազմեցեք ածականներ հետևյալ նախածանցներով /յուրաքանչյուրով չորս հատ/:**

Ընդ, արտ/ա/, գեր, բաց, համ, հակ, ներ, վեր, ենթ, ստոր:

**Վարժություն 128: Տվյալ բառերի վրա ավելացնելով ային, ենի, ավոր ածանցները՝ կազմեցեք ածականներ:**

Դրամ, առևտուր, տուն, գանձարան, փող, դաշտ, մրցակից, գին, եկամուտ, մենաշնորհ, խնձոր, մայր, քաղաք, բալ, տանձ, վայր, գույն, լույս, միտք, գոգ, հոչակ, հոգի, պատգամ, ուղի, հազար, հարյուր, բյուր, եղջերու, ձի, վանդակ, նշան, գլուխ, արժեք, գիր, հիմք:

**Վարժություն 129: Որոշեցեք հետևյալ ածականների կազմությունը /բարո, ածանցավոր, պարզ/:**

Ինքնարուխ, շահամոլ, արամանդե, նրբին, հեռանկարային, բազմահմուտ, բրոնզյա, ծիրանավոր, երեք հազարամյա, ստորգետնյա, սառուցյալ, վերահաս, ծախսածին, ինքնաշխատ, երկողմանի, արդյունավետ, հարյուրհազարանց, ապերախտ, մասնավոր, թափուր, խոնարի, համեստ, հավասարաչափ, հավաստի, լուսավոր, հոյակապ, հանրային, աղյուսե, մրցակցային, համաժամանակյա, արտասվախառն, հակիրճ, հարմարավետ, օտարերկրյա, շռայլ:

**Վարժություն 130: Կազմեցեք հետևյալ ածականների հականիշները:**

Կանխիկ, մեծածախ, շահաբեր, թերևամիտ, այլախոհ, կողմնակալ, կայուն, կարճաժամկետ, ազգադավ, տխնար, երկչուտ, ծանր, գլխավոր:

**Վարժություն 131: Կազմեցեք հետևյալ ածականների նույնարմատ հականիշները:**

Յասուն, կարճատև, ազգային, անաչառ, ոյուրընբօնելի, երախտագետ, տարա- բախտ, հոգատար, հեռանկարային, արդյունավետ, միատարր, ամրակազմ, օգտակար, բնական, զինյալ, շահավետ, պիտանի:

**Վարժություն 132: Գրեցե՛ք որակական ածականներ /հնարավորին չափ շատ/, որոնք արտահայտում են՝**

- ա/ առարկանների ներքին ու արտաքին հատկանիշներ,
- բ/ մարդկանց ու կենդանիների բարոյական ու հոգեկան հատկանիշներ,
- գ/ գույներ:

**Վարժություն 133: Գրեցե՛ք հարաբերական ածականներ /հնարավորին չափ շատ/, որոնք արտահայտում են՝**

- ա/ տարածական հատկանիշ,
- բ/ նյութի ինչից լինելը ցույց տվող հատկանիշ,
- գ/ ժամանակային հատկանիշ
- դ/ վերաբերություն ցույց տվող:

**Վարժություն 134: Տեքստում ընդգծված ածականները փոխարինեցե՛ք համապատասխան հոմանիշներով:**

Արեգակը ծագեց, և նրա հրակարմիո շողերի տակ փայլվեցին եղյամով պատաժ  
ընդարձակ դաշտերը:

Յալվում էին արծաթափայլ եղյամն ու մերկասառույցը, բուսազուրկ բլուրները պսպղում էին հազարերանգ. կարծես ջարդված ապակիների միլիոնավոր կտորտանքներ էին շաղ տված հուլոթի դաշտերի վրա ու փայլվում էին գույնզգույն ծիածանի նուրբ գույներով:


Լսվեց գումարտակի հրամանատարի որոտրնդոստ կանչը՝ օդանավե՛ր, օդանավե՛ր: Յոզնաբեկ մարտիկները վայրկենապես ձուլվեցին գետնին: Զոհրապ Մեսրոպյանն առաջինը նկատեց դեղին, պսուտանման ծուխը և հողի վեր-վեր խոյացող սև շատրվանները: Յետո լսվեցին երկրորդ, երրորդ, չորրորդ պայթյունները՝ մեկը մյուսից խոյական, մեկը մյուսից ահասարսութ, ու հանկարծ տիրեց մի անսովոր լռություն:

**Իսկ գիտե՞ք, որ...**

Յամաշխարհային կերպարվեստի ո՞ր ստեղծագործությունն է ամենաթանկը. այդ հարցին պատասխանելը անհնարին է, քանի որ պատկերասրահի ամենահայտնի կտավները դժվար թե աճուրդով վաճառվեն: Սակայն կողմնակի գնահատումներ կարելի է անել: Լեռնարդո դա Վինչիի նշանավոր «Ձոկոնդան» Նյու-Յորքում և Վաշինգտոնում ցուցադրելու համար Լուվրից ժամանակավորապես տեղափոխելու կապակցությամբ, 1963թ., երբ որոշվեց այն ապահովագրել, այդ գլուխգործոցը գնահատվեց 100 մլն դոլար:

Յիշեցնենք, որ «Ձոկոնդան» Վերածնության դարաշրջանի մեջ նկարչի կողմից ավարտվել է 1507 թվականին և ֆրանսիական Ֆրանցիսկ Առաջին թագավորի կողմից ձեռք է բերվել 1517 թվականին չորս հազար ոսկե ֆլորինով: Այդ դիմանկարով ինքնակալը զարդարել էր... իր լողարանի սենյակը:

## ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ



## ՄԵԾ Եղեռն

90 տարի առաջ Օսմանյան Թուրքիայում սկսվեց արևմտահայության զանգվածային կոտորածը և շարունակվեց մի քանի տարի: Այն կազմակերպել էին թուրքական կառավարողները՝ ձգտելով ոչ միայն պահպանել Օսմանյան կայսրությունը և բռնությամբ ոչնչացնել կամ ձուլել հպատակ ժողովուրդներին, այլև ստեղծել համաթուրանական տերություն, որի մեջ կմտնեին բոլոր մահմեդականները:

1894-1896թ.թ.-ին Թուրքիայում կազմակերպվեց ավելի քան 300 հազար հայերի կոտորածը: 1909թ. Աղանայում և նրա շրջակայքում սպանվեցին 30 հազար հայեր:

Առաջին համաշխարհային պատերազմը արձակեց բարբարոսների ձեռքերը: 1915թ. թուրքական կառավարությունը հրահանգ ուղղեց նահանգապետերին, որտեղ գրված էր. «Թեև հայկական տարրի ոչնչացման հարցը վաղուց էր վճռված, հանգանանքները թույլ չեն տվել իրականացնել այդ սրբազն գործը: Ներկայումս, երբ բոլոր խոչընդոտները վերացված են և վրա է հասել մեր հայրենիքի՝ այդ վտանգավոր տարրից ազատելու ժամանակը, հանձնարարվում է չենթարկվել խղճի խայթին, ոչնչացնել բոլորին և ամեն կերպ ձգտել վերացնելու «Հայաստան» իսկ անունը Թուրքիայում»: Այդ քաղաքականության հիմքում դրված էին շարժառիթ - «պատճառներ», յուրատեսակ տնտեսական և քաղաքական նկատառումներ: Թուրք բռնակալ կառավարողները չեն հանդուրժում, որ Օսմանյան կայսրությունում հպատակ քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում և հայերը, հանդիսանում էին քաղաքակրթության, տնտեսական ու մշակութային առաջընթացի կրողները, որ նրանք չեն հաշտվում իրենց անլուր ճնշման հետ և մղում էին ազատագրական պայքար, որ քրիստոնյա հայերը «սեպի» նման խրվել էին այսպես կոչված «հսկամական համատարած գոտու» մեջ, ունեն ռուսական կողմնորոշում և խանգարում են իրենց համարութանական նկրտումների իրականացմանը:

1915թ. սկզբին գումարեցին գաղտնի խորհրդակցություն, որի ղեկավար՝ Թուրքիայի ներքին գործերի նախարարար Թալեաթ փաշան, կատաղի ատելությամբ ազդարարեց, որ անհրաժեշտ ոչինչ չխնայել և համատարած բռնագաղթի ու ջարդերի կազմակերպման հրաման արձակեց, որը պիտի իրագործվեր ապրիլի 24-ի արևածագից սկսած:

1915թ. ապրիլի 24-ին բանտ նետվեց հայ մտավորականների առաջին խումբը, կարճ ժամանակում այդ թիվը հասավ 800-ի, որոնց մեջ կային գրողներ, գիտնականներ, արվեստագետներ, մանկավարժներ, հրապարակախոսներ, դերասաններ, բժիշկներ, հոգևորականներ, հասարակական գործիչներ, այդ թվում՝ թուրքական մեջլիսի հայ երեսփոխաններ: Զոհվածների մեջ էին Գրիգոր Զոհրապը, Սիամանթոն, Դամիել Վարուժանը, Ռուբեն Սևակը, Ռուբեն Զարդարյանը և ուրիշներ: Նրանց բոլորին քշեցին Անատոլիայի խորքերը և զազանաբար սպանեցին: Զարդերը կազմակերպվում էին գաղտնի, ծածուկ ձևով: Զորահավաքի և ճանապարհաշինարարական աշխատանքների պատրվակով իշխանությունները հավաքեցին 15-52 տարեկան հայ տղամարդկանց, զինաթափ արեցին և առանձին-առանձին խմբերով կոտորեցին, չեն խնայում նույնիսկ օրորոցի մանուկներին:

Պատերազմն անակնկալի բերեց արևմտահայությանը. նա պատրաստ չէր ինքնապաշտպանության: Այնուամնենայնիվ, նա չէր կարող անմռունչ տանել թուրքական վայրագությունները և որտեղ հնարավոր էր՝ դիմեց անձնվեր գոյամարտի: Այդպիսի կրիվներ տեղի ունեցան Վանի նահանգի մի քանի վայրերում՝ Շատախում, Յայոց ձորում, Արճեշում, Թիմարում և այլուր:

Առավել նշանավոր էր Վանի ինքնապաշտպանությունը, որը տևեց 1915թ. ապրիլի 7-ից մինչև մայիսի 6-ը: Դյուցազնական էին Մուշի, Սասունի, Շապին Գարահիսարի, Մուսալեռան, Ուրֆայի հերոսամարտերը:

Օսմանյան կայսրության բոլոր հայաբնակ վայրերը դատարկվեցին, և Եթե 1914թ. այնտեղ ապրում էր մոտ 3 մլն հայ, ապա նրանցից ավելի քան 1,5 մլն բնաջնջվեց, իսկ մնացածը տառապելով գաղթեց աշխարհի տարբեր կողմեր:

Ցեղասպանությունը ծայրագույն հանցագործություն է մարդկության դեմ, հետևապես նրա հանցավորների վրա չի կարող տարածվել վաղեմության իրավունք:

1921թ. մարտի 15-ին Շարլոտենբուրգի Հարդենբերգ փողոցում ատրճանակից արձակված մեկ գնդակով սպանվել է Թալեաք փաշան, որ 3 անգամ պետությունների կողմից դատապարտված է եղել մահապատժի և 2 անգամ փախել: 3-րդ դատավճիռը ոչ մի պետության կողմից չէր, այլ մի ամբողջ ժողովրդի դատավճիռ էր, որ կատարել էր ուսանող Սոլոմոն Թեհլերյանը: Այն մարդը, որը չգիտեր, թե չպետք է սպանի, այլ գիտեր, որ պետք է սպանի բոլոր մարդակեր գազաններին, որը գիտեր պայքարել անմարդկային բոլոր սպանությունների դեմ, քանզի երդվել էր և ապացուցեց, որ հայը գիտե սրբազնորեն երդվել ու կատարել երդումը և, ով որ երդումը դրժուն է՝ իրավունք չունի հայ կոչվելու:

Գերմանիայի դատավորները երբեք անպարտ չին հոչակի Թեհլերյանին, Եթե վստահ չլինեին, որ նա աշխարհը փրկել է հայ ժողովրդի ամենամեծ ոճագործից՝ իր արյան կանչով:

Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հայ ժողովրդի չսպիացող վերքն է: Ապրիլի 24-ը դարձել է հայոց անմեղ զոհերի հիշատակի օրը, որն ամեն տարի նշվում է Մայր Հայաստանում և սփյուռքում: Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի հուշարձանը, որ կառուցվել է 1965-1967թ.-ին, դարձել է ամենայն հայոց սրբավայրը:

Ամեն տարի ապրիլի 24-ին յուրաքանչյուր հայ ծաղիկ է դնում Եղեռնի հուշարձանին:

Ըստ Հանրագիտակ օրացույցի, Երևան – 1990

451թ. մայիսի 26-ին՝ Ավարայրի ճակատամարտը:

1918թ. մայիսի 22-28՝ Սարդարապատի ճակատամարտը:

1918թ. մայիսի 28-ին՝ Քայսատանի Հանրապետության անկախությունը:

### Քայոց այբուբենի թվային արժեքները հետևյալն են՝

ա - 1	Ժ - 10	Ճ - 100	ռ - 1000
բ - 2	ի - 20	մ - 200	ս - 2000
գ - 3	լ - 30	յ - 300	վ - 3000
դ - 4	խ - 40	ն - 400	տ - 4000
ե - 5	օ - 50	շ - 500	ռ - 5000
զ - 6	կ - 60	ն - 600	ց - 6000
է - 7	հ - 70	չ - 700	ու - 7000
ը - 8	ձ - 80	պ - 800	փ - 8000
թ - 9	ղ - 90	ջ - 900	ք - 9000

^ բյուր -10000

**Վարժություն 135:** Առանձին սյունակներում գրեցե՛ք պարզ, ածանցավոր և բարդ թվականներ (հինգական):

**Վարժություն 136:** Բառերով գրեցե՛ք հետևյալ թվականները՝ որոշելով դրանց ուղղագրությունը:

18, 45, 56, 108, 10, 2457, 97, 846, 3954, 89, 120:

**Վարժություն 137:** Հետևյալ բացարձակ թվականներից կազմեցե՛ք բաշխական թվականներ -ական ածանցով՝ գրելով բառերով և թվանշաններով:

3, 45, 20, 100, 250, 500, 1000, 2500:

**Վարժություն 138:** Հետևյալ կոտորակային թվականները գրեցե՛ք բառերով:

$\frac{1}{8}$ ,  $\frac{1\frac{3}{8}}{8}$ ,  $\frac{5}{8}$ ,  $\frac{7}{8}$ :

**Վարժություն 139:** Հետևյալ բացարձակ թվականներից կազմեցե՛ք դասական թվականներ և դրանք գործածել նախադասության մեջ.

մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը, տաս, տասնմեկ, տասնչորս, քառասունութ, վաթսունհինգ, հարյուր, հազար:

**Վարժություն 140:** Հետևյալ արաբական թվերն արտահայտեցե՛ք հայկական այբուբենի տառերով.

1, 45, 856, 9467, 34, 9, 12, 1828, 1986, 543, 100, 525:

**Վարժություն 141:** Հետևյալ դասական թվականները գրեցե՛ք հռոմեական թվանշաններով:

5-րդ, 18-րդ, 45-րդ, 100-րդ, 10-րդ, 156-րդ, 87-րդ, 99-րդ:

**Վարժություն 142:** Հետևյալ բառակապակցությունները արտահայտեցե՛ք մեկ բառով:

Չորս գագաթ ունեցող-  
Երեք հարկ ունեցող-  
Չորս տարեկան-  
Հինգ հարկ ունեցող-  
Հազար տարի-  
Չորս ձայնից կազմված-  
Չորս անգամ ավելի-  
Չորս տողից բաղկացած-  
Ութ տող ունեցող-  
Որևէ բանի մեկ տասներորդ մասը-  
Երեք գույն ունեցող-  
Երեք նիշ ունեցող-

Երեք անգամ շատացնել-  
Երկուսի միջի տեղի ունեցող խոսակցություն-  
Երկու ամիս տևող-

**Վարժություն 143: Դուրս գրեցեք թվականները, արտահայտեցեք այբուբենի տառերով:**

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը՝ Մատենադարանը, հիմնադրվել է 1959-ի մարտի 3-ին:

«Ալմաստ» օպերայի բեմադրությամբ 1933թ. բացվել է Երևանի օպերային թատրոնը:

1868թ. Տիգրան Չուխաջյանը ավարտեց «Արշակ Բ» օպերան:

1922թ. հունվարի 25-ին ստեղծվեց առաջին պետքարոնը:

Հայկական առաջին հնչուն ֆիլմը՝ «Պեպոն», նկարահանվել է 1935թ.:

Երևանի պետական համալսարանը հիմնադրվել է 1919թ.:

Հայաստանի ԳԱ հիմնադրվել է 1943թ. նոյեմբերի 29-ին:

Հակոբ Մեղապարտը 1512թ. Վեճետիկում տպագրում է «Ուրբաթագիրք» անունով ժողովածուն:

Հայերեն գրավոր հուշարձաններով ավանդված են մոտ 11 հազար արմատ: Ինչպես գրաբարյան հուշարձաններով վկայված, այնպես էլ բարբառներում պահպանված հնդեվրոպական ծագում ունեցող բառարմատների ընդհանուր թիվն անցնում է 1200-ից:

Իրանական փոխառությունները հայերենում կազմում են 1411 բառ, որից հինգ պարսկերենին և պահլավերենին են վերաբերում 966, նորպարսկերենին՝ 445: Իրանական լեզուներից կատարված փոխառություններից ժամանակակից հայերենին են անցել մոտ 530 բառ:

Ասորական ազդեցությունը հայերենի վրա սկսվում է մ.թ.ա. 2-րդ դարից և շարունակվում է մինչև մ.թ. 5-6-րդ և հետագա դարերը:

Գրաբարի և միջին հայերենի կատարած 205 ասորական փոխառությունից գործածական պետք է համարել 95 բառ:

Գրաբարը հունարենից փոխառություններ է կատարել մ.թ. 3-4-րդ դարերից սկսած մինչև 10-11-րդ դարերը: 918 փոխառած բառերից գործածական պետք է համարել 130 բառ:

7-9-րդ դարերում և այնուհետև 12-16-րդ դարերենից փոխառած ավելի քան 700 բառից ժամանակակից հայերենում գործածական են 60-ը:

**Վարժություն 144: Տեքստում գործածված թվականները արտահայտեցեք տառերով:**

Հայ տպագրությունը կազմակերպվում է 1512թ.:

1621թ. Միլանում լույս է տեսնում Ֆրանչեսկո Ռիվոլայի «Հայերեն – լատիներեն բառարանը», որ պարունակում է շուրջ 10800 բառ և բառակապակցություն: Սույն բառարանը 1633թ. վերահրատարակվում է Փարիզում:

Նոր հայկագյան բառարանը կազմված է 2 հատորից, պարունակում է մոտ 51000 բառահոդված, լույս է տեսել Վենետիկում 1836-1837թք.

Ստ. Սալիհասյանի բառահատոր «Հայերեն բացատրական բառարանը» լույս է տեսել 1944-45 թթ. և պարունակում է մոտ 120000 բառ և դարձվածքային միավոր:

1969-1980 թթ. ընթացքում ԳԱԱ կողմից հրատարակվել է «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը», որը պարունակում է արդի հայերեն գրական լեզվի մոտ 140000 բառ և դարձվածքային միավոր:

Էղուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» լույս է տեսել 1976թ. և պարունակում է մոտ 135000 բառ և 11000 դարձվածքանական միավոր:

1967թ. լուս է տեսնում Ա. Սուլքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը», որը պարունակում է 83000 հոմանիշ բառ և դարձվածքային միավոր:

Հր.Աճառյանի «Հայերենի արմատական բառարանը» ընդգրկում է մոտ 11000 /10998/ բառարմատ, որից 2221 արմատ անվավեր է համարվում. մնացած 8775 արմատից ստուգաբանվում է 5095-ը, որից 927-ը բնիկ /հնդեվրոպական/, 4015-ը փոխառյալ, 155-ը բնածայնական, 3680՝դեռևս չստուգաբանված:

Հ.Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինարանական բառարանը» պարունակում է ժամանակակից հայ գրական լեզվի ավելի քան 152 բառ և տերմին:

**Վարժություն 145: Հետևյալ առածներում վերականգնեցնեք թվականները:**

... չափի՞ր, ... կտրի՞ր:

... խոսի՞ր, լսի՞ր:

... աղջիկը ... տղա արժե:

Մինչև չգա ետինը, չի հիշվի ... :

Գիտուն աղվեսը ... ուտքով է ընկնում թակարդը:

Հերոսը ... անգամ է մեռնում, վախկոտը` ...:

Գիտունին, ... անգետին ... :


**Իսկ գիտե՞ք, որ...**

Երևի բոլորդ էլ տեսել եք, որ իռլանդիայի գերբի վրա նկարված է մի կարմիր ձեռք: Դրա պատմությունը հետևյալն է՝ երեք հազար տարի առաջ Վիկինզների երկու առաջնորդներ՝ իրենց մարդկանցով, նավարկում էին դեպի Իռլանդիա: Նրանցից մեկը, որի անունը Յիրմոն Օ՛Նիլ էր, ասաց, որ Իռլանդիայի թագավոր կդառնա իրենցից նա, որի ձեռքը առաջինը կդիմքի իրլանդական հողին:

Վերջապես նրանք նոտեցան ծովեզերքին: Յիրմոն Օ՛Նիլի նավը մի փոքր եւ էր մյուսից: Երբ նավերն արդեն բոլորովի մոտ էին ցամաքին, Օ՛Նիլը կտրեց իր ձեռքը, նետեց դեպի ցամաք: Նրա ձեռքը առաջինը դիմավ իրլանդական հողին, և նա դարձավ Իռլանդիայի թագավոր: Այսպես է պատմում ավանդությունը:

Ահա թե ինչու Իռլանդիայի գերբի վրա ձեռք է նկարված:

## ԴԵՐԱՆՈՒՆ



## Ես և Նա (հատված)

### I

Վենեցիայում՝ ջրանցքների և գեղարվեստների այդ հրաշակերտ քաղաքում, մի հին ազնվական ընտանիքում ապրում էր ընտանիքի միակ զավակը՝ գեղեցիկ Զուլետտան: Այնքան էր գեղեցիկ նա, որ թվում էր, թե հողեղեն չէ, այլ մի հավերժահարս, որ դուրս է եկել ծովի փրփուրներից: Աչքերը կապույտ էին, ինչպես հտալիայի ջինջ երկինքը, հայացքը՝ զվարթ ու անհուն, ինչպես Աղրիատիկի հորիզոնները: Ուսկեգույն ծամերը սքանչելի գանգուրներով պսակում էին նրա փոքրիկ, սիրունիկ գլուխը: Երբ ժպտում էր (բայց ե՞րբ չէր ժպտում), նրա չընալ այտերի վրա մատնեհարներ էին գոյանում և փոքրիկ բերանի մեջ՝ վարդագույն շրթունքների տակ, շողշողում էին փղոսկրի պես սպիտակ ու ամուր մանրիկ ատամները: Միշտ զվարթ էր գարնան արևի պես, միշտ թրթռուն՝ թիթեռնիկի պես, միշտ չարաճի՝ կայտառ երեխայի պես: Երկու գույն էր սիրում՝ կարմիր ու սպիտակ, և նրա արդուզարդի ու կրծքի վրա միշտ անպակաս էին այդ երկու գույնի ծաղիկները՝ մեխակը ու շուշանը: Նա ինքը թարմ ու հոտավետ ծաղիկ էր՝ կարմիր կամ սպիտակ, նայած, թե ինչ գույնի հագուստ է հագնում՝ մեխակի պես կարմի՞ր, թե՞ շուշանի պես սպիտակ:

### II

Մի անգամ՝ գարնանային մի սքանչելի երեկո, որպիսին միայն Աղրիատիկի ափերումն էր լինում, երբ Զուլիետտան իր հոր դոյակի վերին հարկի մի փոքրիկ սենյակում գրաղված էր իր սպիտակ հագուստով և կրծքին մեխակի կարմիր ծաղիկն էր ամրացնում, որ գրսանքի դուրս գա Պոնտե Ռիալտոյի տակ Մեծ ջրանցքի վրա, դրսից ինչ-որ նվազածության ձայն լսեց: Մի հնուտ ձեռք սերենադ էր նվագում ջութակով: Զուլետտան վագեց դեպի բաց պատուհանը և ցած նայեց դեպի փողոց:

Նվագողը մի պատանի էր՝ հտալական լայնեզր գլխարկով: Այնքան մեղմանուշ, այնքան դյուրիչ էր նվազած եղանակը, որ Զուլիետտան կարծում էր, թե իր սրտի լարերի վրա են նվագում: Նա մեքենայաբար կիսով չափ դուրս իջավ պատուհանից և լսում էր ամենայն ուշադրությամբ: Իր ամբողջ եռթյամբ լսողություն դարձած՝ ագահորեն կլանում էր մարմինը փշաքաղող այն դյուրիչ ձայները, որ պատանի երաժիշտը հնչեցնում էր ջութակի լարերից, ինչպես աղբյուրի ակունքը դուրս է հոսեցնում իր քչքչան ականակիտ ջուրը՝ անբռնազբոսիկ ու սահուն: Շունչը պահել էր, որ ոչ մի հնչյուն չկորցնի: Սքանչացնան արցունքը գոհարի պես խաղում էր նրա աչքերի մեջ:

Վերջապես լրեցին ջութակի հնչյունները, և այդ հնչյունների հետ կարծես ամնե ինչ լուց բնության մեջ:

- Ո՞վ ես դու, նայի՛ր վերև, պատանի՝ մաեստրո, - կանչեց բարձրից Զուլիետտան:

Պատանի երաժիշտը նայեց վերև:

Պատանի արտիստը վերցրեց լայնեզր գլախարկը, երկայն մազերը գլխի մի շարժումով ետ գցեց ճակատից և նայեց վերև: Ի՞նչ հրաշալի աչքեր, բայց լուրջ ու խոհուն և քախճալի, ինչպես այն եղանակը, որ մի քիչ առաջ նվագում էր նա. Ի՞նչ գրավիչ դեմք, բայց գունատ ու տխուր, ինչպես մարմարի մի անդրի. Ի՞նչ բարձր ու հպարտ ճակատ, որի վրա փայլում էր ոչ երկրային մի վեհություն:

- Ի՞նչ է անունդ, - կանչեց Զուլիետտան:

- Անտոնիո:

- Անտոնիո, նվագիր ինձ համար դարձյալ մի բան:

Ու նորից հնչեցին լարերն առաջվանից ավելի փաղաքուշ ու դյութիչ, և Զուլիետտան, պատուհանին գամված, չէր հագենում լսելուց, մինչև որ լարերն իրենց վերջին սիրակեզ հառաջանքն արձակեցին ու մարեցին:

**Վարժություն 146:** Կազմեցե՛ք նախադասություններ ինչ-որ, ինչ որ դերանուններով, բացատրեցե՛ք նրանց կիրառությունների տարբերությունները:

**Վարժություն 147:** Անձնական առաջին և երկրորդ դեմքի դերանուններով և **իետ**, **պես**, **համար**, **հանձինս**, **հանձին**, **ի դեմս**, **հանդեպ** կապերով կազմեցե՛ք նախադասություններ: Որոշեցե՛ք հոլովառությունը:

**Վարժություն 148:** Գրեցե՛ք **ես**, **դու**, **նա** անձնական դերանունների հոգնակի թիվը, կազմեցե՛ք մեկական նախադասություն և որոշեցե՛ք դրանց պաշտոնը նախադասության մեջ:

**Վարժություն 149:** Կազմեցե՛ք երկուական նախադասություն՝ օգտագործելով այսպիսի, այդպիսի, այդպես, այնպես, այսքան, այդքան, այնքան, այստեղ, այդտեղ, այնտեղ դերանունները:

**Վարժություն 150:** Կազմեցե՛ք իրար և մինյանց փոխադարձ դերանուններով մեկական նախադասություններ:

**Վարժություն 151:** Շարունակեցե՛ք **ո՞վ** և **ի՞նչ** հարցերին պատասխանող բառերի շարքը և բացատրեցե՛ք այդ դերանունների իմաստները:

Ո՞վ - գիտնական, ֆիզիկոս, դերասան...

Ի՞նչ - գիտություն, ֆիզիկա, դեր...

**Վարժություն 152:** Ով, ինչ, որ հարցական-հարաբերական դերանուններով կազմեցե՛ք մեկական նախադասություն:

**Վարժություն 153:** Կազմեցե՛ք նախադասություններ՝ օգտագործելով ամեն, ամեն մի, բոլոր, յուրաքանչյուր, յուրաքանչյուրը, ողջ, ամբողջ, համայն որոշյալ դերանունները:

**Վարժություն 154:** Կազմեցե՛ք նախադասություններ՝ օգտագործելով **ինչ-որ**, **մեկը**, **մի քանի**, **մի քանիսը**, **ուրիշ**, **որոշ**, **որևէ**, **ինչ-ինչ**, **մեկն** ու **մեկը** անորոշ դերանունները:

**Վարժություն 155:** Ոչինչ, ոչ մի, ոչ ոք, ոչ մեկը ժխտական դերանունները օգտագործեցե՛ք նախադասությունների մեջ:

**Վարժություն 156:** Քարցական /ի՞նչ, ինչպիսի՞ն, ինչքա՞ն, ինչպե՞ս, քանի՞/ դերանունները նախադասությունների մեջ գործածեցե՛ք բացականչական երանգով:

**Իսկ գիտե՞ք, որ...**

ԱՄՆ-ում ստեղծվել են այնպիսի ինքնահոսներ, որոնք լցվում են ջրով, բայց գրում են... թանաքով: Թանաքի պահանանը ներկող նյութից է, որ լուծվում է ջրի մեջ և գունավորում: Այդ ներկը բավականացնում է երկու տարի:

## ԲԱՅ

### Գարեջուրը հայտնագործություն է կատարում

Պատմում են, որ այսպիս է եղել: Մի անգամ (դա պատահել է մեր դարասկզբին) գիմնազիաներից մեկի ֆիզիկայի ուսուցիչ Լորանը, նստած իր աշխատասենյակում, շուտ-շուտ երեսը սրբում էր թաշկինակով: Շատ շոգ էր, տոք. խմել էր ուզում և ցանկություն չուներ սկսել նավթի փորձերը, որ մտադրվել էր անցկացնել: Ուսուցիչը շարունակ նայում էր գարեջրի շատրւին, որոնք բերել էր հետը: Նա բացեց շատրւից մեկը և ձեռքը մեկնեց բաժակին, բայց փոշմանեց: Առջևում շատ ժամանակ կար, իսկ շատրւն ընդամենը երկուսն էին: Ավելի լավ է հետո խմի:

Լորանը լուցկին վառեց, ծխախոտը կպցրեց և ցրված շպրտեց... նավթով լցված դույլը: Դույլի մեջ ինչ-որ բան պայթեց, և վեր բարձրացավ ծխախառն կարմիր բոցը: Ուսուցիչն իրեն կորցրեց. նա լավ գիտեր, թե ինչ կարող է անել վառվող նավթը: Նա շատ անգամ էր վկա եղել նավթահորերի սարսափելի հրդեհների, որոնք համարյա ոչ մի անգամ չի հաջողվել հանգնել: Մոլեգին, ալեկոծվող նավթը չէր նահանջում ոչ ջրի, ոչ ավազի առջև:

Լորանը տեղից վեր թռավ, արագ շուրջը նայեց. ձեռքի տակ համապատասխան ոչինչ չկար: Արագ-արագ, առանց մտածելու սեղանի վրայից վերցրեց բաց շիշը և թափահարելով /որպեսզի շուտ լինի/ սկսեց գարեջուրը թափել վառվող նավթի վրա: Եվ պատահեց անսպասելին: Կրակը բոցկլտաց մեկ - երկու անգամ, ամորխածությամբ թաքնվեց դույլի մեջ և հանգավ: Ուսուցիչը թերահավատ նայեց դույլի մեջ: Կրակը կարծես չէր էլ եղել: Չեր երևում և նավթը: Դույլն ամբողջովին ծածկված էր գարեջրի թրթուն փրփուրով: Ճենց այդ փրփուրն էլ խեղդեց բոցը:

Մի քանի օր հետո ուսուցիչը հրշեց մաս ներկայացավ: Այնտեղ նրա պնդմամբ հրդեհը գարեջրով մարելու փորձեր կատարեցին: Մինչ փոսի մեջ նավթ կլցնեին ու կվառեին, պնդակազմ հրշեցները բակում դես ու դեն էին գլորում գարեջրի տակառը, որպեսզի ավելի լավ փրփորի: Երբ նավթը ուժեղ բոցավառվեց, տակառը փոսի մոտ գլորեցին և խցանը հանեցին: Փրփուրի օճագալար շիթը սահեց ներքև ու սկսեց հոսել դեպի վառվող նավթը: Բոցը հնազադորեն սկսեց նահանջել պղպջակներից և դիմադրեց միայն ոչ մեծ սև կղզյակի վրա: Սակայն ահա փրփուրը հասավ և այնտեղ, ձգվեց, կարծես լվաց կղզյակը, դրա հետ էլ բոցի վերջին լեզուները:

Յրդեհը մի քանի վայրկյանում հանգավ:

Իհարկե, արտակարգ ոչինչ չէր պատահել: Վառվող նավթի, բենզինի, կերոսինի դեմ պայքարելիս դժվարությունն այն է, որ ջուրը, որով սովորաբար հանգնում են կրակը, ծանր է վառվող հեղուկներից: Եվ ինչքան էլ ջուր լցնես, դրանք լողում են ջրի երեսին և շարունակում են այրվել: Զրի հետ նավթը կամ կերոսինը ավելի արագ են տարբեր կողմեր գնում, իրդեհն ավելի ու ավելի մեծ տարածություն է գրավում:

Իսկ ավա՞զը: Ընդհանրապես նույն արդյունքն է ստացվում, ինչ որ ջրի հետ ավազը ցած է իշնում, իսկ նավթը շարունակում է վառվել:

Երբ կերոսինը կամ նավթը քիչ է, ավելի լավ է կրակը հանգնել վերմակով, գորգով. ծածկել կրակը և արգելել օդի մուտքը: Իսկ առանց օդի հրդեհը չի կարող շարունակվել: Գարեջրի փրփուրը վերմակի դեր կատարեց: Ծածկեց նավթը, թույլ չտվեց օդ թափանցի, և կրակը հանգավ:

Ավելի ուշ Լորանը ստեղծեց կրակմարիչը, որը նույն սկզբունքով էր գործում:

**Վարժություն 157:** «Գարեջուրը հայտնագործություն է կատարում» բնագրից դուրս գրեցեք 15 բայ և կազմեցեք դրան դերբայական ձևերը:

**Վարժություն 158:** Դամառոտ պատմեցեք բնագիրը:

**Վարժություն 159:** Կազմեցեք հետևյալ բայերի հոմանիշը և հականիշը:

Վաճառել, ազգայնացնել, փաստել, գովաբանել, ընձեռել, կենտրոնացնել, տեղեկացնել, բարելավել, լուծարվել, արժեզրկել, սատարել, նվազեցնել, սնանկանալ, ազդել, գոհացնել, իջնել, ցրել, առաքել, նպաստել, աճել, խրախուսել, ծագել, կուտակել, սպառել:

Օրինակ՝ վաճառել – ծախսել - գնել

**Վարժություն 160:** Դետևյալ բայերով կազմեցեք նախադասություններ:

Տեղեկացնել, հաղորդվել, հրաժարվել, սնանկանալ, զգուշանալ, կրել, զբաղվել, տեղեկանալ, սեփականացնել, պատրաստվել:

**Վարժություն 161:** Կազմեցեք հետևյալ բայերի բազմապատկանի ձևերը:

Վազել, թռչել, դողալ, կապել, պոկել, տաշել, ծամել, ճաքել, պատռել, խաբել, ծախել, նստել, ծռել, քաշել, ցատկել, կտրել:

**Վարժություն 162:** Դետևյալ բայերին ավելացրեք համապատասխան լրացումներ:

Պարտավորեցնել, բավարարել, դավանել, համարվել, կաչել, հսկել, հնազանդվել, բախվել, ենթարկել, հիշեցնել, սատարել, սիրահարվել, տեղեկացնել, ավանդել, աճել, ուսումնասիրել, ղեկավարել, խոչընդոտել, ազդվել, ծանոթանալ, պաշտպանվել, խրախուսել, բորբոքվել, զարմանալ, խթանել, ստեղծվել:

**Վարժություն 163:** Դետևյալ առածներում լրացրեք բայական անդամները, որոշեցեք դրանց ժամանակները և եղանակները:

Կարկուտը ... տեղն է ... :

Օճի ... լեզվի ... :

Զուրը ... թռչվելուց ... :

Խոսք կա, որ մի փութ մեղրով ... :

Ամենալավ սովորությունը լեզուն ատամների հետև ... :

Ծածուկ բան չկա, որ ..., և գաղտնի բան ..., որ ի հայտ ... :

Յուրաքանչյուր ծառ իր պտղից ... :

Կաթի հետ ... հոգու հետ ... :

Անառվա անձրևին, ձմեռվա արևին ...

Տուն ...՝ հիմքը խոր ... :

Հացահատիկն ... հողում, տաղանդը՝ ... :

Բարու համբավը հեռվից ... :

Իր աչքի գերանը ..., ուրիշի աչքի մազն ... :

**Վարժություն 164:** Պատրաստեցեք հաղորդում հայտնի հայ մարզիկների, մարզական ակումբների մասին:

**Վարժություն 165:** Տեքստից դուրս գրեցեք ըղձական, պայմանական և հարկադրական եղանակներով գործածված բայերը:

### Ֆրագի առակը

Ոչ ոք ճրագ չի վառի և կարասի տակ չի թաքցնի կամ մահծի տակ չի դնի, այլ կդնի աշտանակի վրա, որպեսզի, ովքեր մտնեն, լույսը տեսնեն: Ծածուկ ոչինչ չկա, որ չհայտնվի, ոչ էլ գաղտնի բան, որ չինացվի և ի հայտ չգա: Այսուհետև զգույշ եղեք, թե ինչպես եք դուք լսում, որովհետև ով որ ունի, նրան կտրվի, իսկ ով որ չունի, և այն, ինչ որ նա կարծում է, թե ունի, կվերցվի նրանից:

«Այն ամենը ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես էլ դուք արեք նրանց»:

/Սարկոս Ե/

Քեզ ուրիշը թող գովի, ոչ թե քո բերանը:

Ճիմարին իր հիմարության համեմատ պատասխան տուր, որպեսզի ինքզինքը իմաստուն չկարծի:

Վաղվա համար մի՛ պարծեցիր, որովհետև չգիտես, թե օրը ինչ կծնի:

/Առակաց/

Անօրինություն գործողներին մի՛ նախանձիր, որովհետև նրանք խոտի պես շուտով պիտի կտրվեն ու կանաչ խոտի պես պիտի չորանան:

/Սաղմոս 36/

... այն չափով, որով չափում եք, նույն չափով պիտի չափվի ձեզ համար:

/Ղուկաս Զ/

**Վարժություն 166:** Բանաստեղծության մեջ կետերը լրացրե՛ք ըղձական եղանակով դրված բայերով:

ա/.... խորքերն անտառի,  
... մեռնող տերևների մեջ,  
Գլուխս ... մամռած մի քարի,  
Մի պահ ... աղաղակ ու վեճ:  
Բույն ... սրտիս մեջ փնտրող հավքին,  
Ննջած անտառի ականջը .....  
Չնչառությունը ... մեղմագին,  
Տերևների տակ խոր քնած գարնան:  
/Ղառնալ, լսել, գնալ, մոլորվել, մխրճվել, մոռանալ, տալ/:

բ/ ... չորան սարերում հեռու,  
..., ... վրանիս մոտով,

Քնքուշ ... հանկարծ իրարու:  
... աղբյուրն ու ետ ...,  
Թեթև, որպես վիթ, ... ձորից,  
Մի ջուր ... ինձ քո լի սափորից  
Ու վրանիս մոտ ... ... /Վ.Տերյան/:

**Վարժություն 167:** Կազմեցե՛ք նախադասություններ, որոնցում բայերը դրված լինեն ըղձական, ենթադրական, հարկադրական, հրամայական եղանակներով:

**Վարժություն 168:** Տրված բայերին համատասխան՝ պատասխանեցե՛ք հետևյալ հարցերին:

Ո՞ւմ, ի՞նչ(ը):

Կտակել, դավանել, բավարարել, հսկել, ղեկավարել, խրախուսել, մասնակցել, նվագել, ծանոթանալ, դավաճանել, պատիել, սատարել, սիրահարվել, շնորհակալություն հայտնել:

Ումի՞ց, ինչի՞ց

Խուսափել, ներողություն խնդրել, տառապել, զարմանալ, շնորհակալ լինել:

Ումո՞վ, ինչո՞վ

Համակվել, տարվել, հետաքրքրվել, կերակրվել:


**Վարժություն 169:** Դետևյալ գոյականներին ավելացրե՛ք բայական լրացումներ, որոնք պատասխեն ինչպիսի՞ հարցին և կազմեցե՛ք նախադասություններ:

Օրինակ՝ ապրանք - արտահանվող:

Ապրանք, գին, ծախս, շուկա, գործոն, առաջարկ, գործարք, հարկում, բանավեճ, համակարգ, գնաճ, աշխատանք, արժանապատվություն:

## Բայի անդեմ ձևեր

### Բայի անդեմ ձևերը



**Վարժություն 170: Բայերի հետևյալ շարքերը լրացրե՛ք մարզական օրինակներով.**

խոսել, գծել, բերել ...  
հազար, աղալ, հավատալ ...  
հիանալ, լիանալ, միանալ ...  
վախենալ, կամենալ.....  
փախչել, կորչել, դիպչել ...

**Վարժություն 171: Հետևյալ առած-ասացվածքներում գտե՛ք անորոշ դերբայները.**

Լավ է կանգնած մեռնել, քան ծնկաչոք ապրել / հայկական /:  
Մեռնելը հեշտ է, ապրելը՝ դժվար / հնդկական /:  
Ամենալավ սովորությունը լեզուն ատամների հետևք պահելն է / արաբական /:  
ճշմարտության լույսը հանգընել չես կարող / արաբական /:  
Ապրելով խաղաղության մեջ՝ պատերազմի մասին մի՛ մոռացիր / ճապոնական /:

**Վարժություն 172: Կազմեցե՛ք հետևյալ բայերի ենթակայական դերբայները և օգտագործեցե՛ք նախադասությունների մեջ տարբեր պաշտոններով:**

Յնարել, հանդիսանալ, որոտալ, գոռալ, հաղորդել, հակազդել, հանգընել, զգալ,  
լողալ, հնչել, հարստանալ, փայլել, սողալ, լողացնել, մեծացնել, մեօցնել, հիվանդանալ,  
առողջանալ:

**Վարժություն 173: Հետևյալ առած-ասացվածքներում գտե՛ք հարակատար դերբայները և որոշեցե՛ք նրանց պաշտոնները.**

Աչքի տեսածը հաստատ է, քան ականջի լսածը / հայկական /:  
Դառնություն չճաշակած՝ քաղցրության արժեքը չես հասկանա / հայկական /:  
Երբ հանողված չես, որ խոսքդ բանի տեղ կանցնի, լավ է չխոսես / հայկական /:  
Ժողովուրդը քնած առյուծ է, որ արթնացավ, ել չի քնի / հայկական /:  
Կաթի հետ մտածը հոգու հետ դուրս կգա / հայկական /:  
Չուրը չտեսած՝ ոտքերդ մի հանիր / հնդկական /:

**Վարժություն 174: Կազմեցե՛ք հետևյալ բայերի հարակատար դերբայները.**

ձգել, հալվել, գտնվել, եռալ, ջանալ, գոլորշիանալ, ունենալ, գոլորշիացնել,  
կարծրանալ, առաջանալ, առաջացնել, միանալ, միացնել, ավելանալ, ավելացնել, շողալ,  
կապուտել, քննարկել, շիկանալ, շիկացնել, մեծանալ, եռացնել, պարզել, որոշել, վնասվել,  
մոլորվել, մոլորեցնել, գտնել, դիտարկել, տեսնել, իմանալ, մոռացվել:

**Վարժություն 175: Կազմեցե՛ք արտահայտել, ավարտել, բարեել, ներարկել, պրատել,  
պայքարել բայերի համակատար դերբայները, դրանք օգտագործեցե՛ք նախադասությունների մեջ:**

**Վարժություն 176:** Քառյակից դուրս գրեցեք վաղակատար դերբայները, դրանցով կազմեցեք նախադասություններ.

Քանի՛ ձեռքից եմ վառվել,  
Վառվել ու հուր եմ դառել,  
Հուր եմ դառել՝ լուս տվել,  
Լուս տալով եմ սպառվել:

/ Հովհաննես Թունանյան /

**Վարժություն 177:** Դուրս գրեցեք բայերը, կազմեցեք վաղակատար դերբայներ.

**ՔԻՉ ԵՆՔ, ԲԱՅՑ ՀԱՅ ԵՆՔ**

Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում:

Մենք մեզ ո՛չ ոքից չենք գերադասում:  
Պարզապես մենք էլ պիտի ընդունենք,  
Որ մե՛նք, միայն մե՛նք Արարատ ունենք,  
Եվ որ այստեղ է՝ բարձրիկ Սևանում,  
Երկինքը իր ճիշտ պատճենը հանում:  
Պարզապես Դավիթն այստեղ է կռվել:  
Պարզապես Նարեկն այստեղ է գրվել:  
Պարզապես գիտենք ժայռից վանք կերտել,  
Քարից շինել ծուկ, և թռչուն՝ կավից,  
Ուսուցմա՛ն համար և աշակերտե՛լ  
Գեղեցիկի՛ ն,  
Բարու՛ ն,  
Վսեմի՛ ն,  
Լավի՛ ն...

Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում:

Մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում:  
Պարզապես մեր բախտն ուրիշ է եղել,-  
Պարզապես շատ ենք մենք արյուն հեղել.  
Պարզապես մենք մեր դարավոր կյանքում,  
Երբ եղել ենք շատ  
Ու եղել կանգուն,  
Դարձյա՛լ չենք ճնշել մեկ ուրիշ ազգի,  
Ո՛չ ոք չի տուժել զարկից մեր բազկի:  
Եթե գերել ենք՝  
Լոկ մեր գրքերով.  
Եթե տիրել ենք՝  
Լոկ մեր ձիրքերով...  
Պարզապես մահն էր մեզ սիրահարվել,  
Իսկ մենք ինքնակամ նրան չենք տրվել:  
Ու երբ ճարահատ մեր հողն ենք թողել՝

Ու՞ր էլ որ հասել, որտեղ էլ եղել,  
 Զանացել ենք մենք ամենքի՝ համար.  
 Շինել ենք կամուրջ,  
 Կապել ենք կամար,  
 Ամեն տեղ հերկել,  
 Հասցրել բերքեր,  
 Ամենքին տվել մի՛ տք, առա՛ ծ, երգե՛ ր՝  
 Պաշտպանել նրանց հոգևոր ցրտից,-  
 Ամեն տեղ թողել մեր աչքից՝ ցոլանք,  
 Մեր հոգուց՝ մասունք,  
 Եվ նշխար՝ սրտից...

Մենք քիչ ենք, այո՛, բայց կոչվում ենք հայ-  
 Գիտենք դեռ չանցած վերքերից տնքալ,  
 Բայց նոր խնդությանը ցնձալ ու հրճվել.  
 Գիտենք թշնանու կողը մխրճվել  
 Ու բարեկամին դառնալ աջակից.  
 Դուրս գալ մեզ արված բարության տակից՝  
 Մեկի փոխարեն տասն հատուցելով...  
 Յօգուտ արդարի և արեգակի  
 Գիտենք քվեարկել մեր կյանքով նաև...  
 Բայց թե կամենան մեզ բռնի վառել՝  
 Մենք գիտենք մխա՛ լ- և կրա՛կ մարել.  
 Իսկ եթե պետք է խավարը ցրել՝  
 Գիտենք մոխրանալ որպես վառ կերոն.  
 Եվ գիտենք նաև մեզ կրքոտ սիրել,  
 Բայց ուրիշներին մի՛ շտ էլ հարգելով...

Մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում,  
 Բայց մեզ էլ գիտենք-  
 Մեզ հա՛յ են ասում:  
 Եվ ինչու՞ պիտի չհպարտանանք...

Կա՛ նք: Պիտի լինե՛ք: Ու դեռ – շատանա՞նք:

/ Պարույր Սևակ /

**Վարժություն 178: Կազմեցե՛ք հետևյալ բայերի ապակատար դերբայները և դրանցից 10-ն օգտագործե՛ք նախադասությունների մեջ:**

Խորանալ, գալ, տաքացնել, հիշել, ելնել, դիաչել, հազնել, հիշեցնել, ցնձալ, ամրանալ, ավելացնել, խաղալ, հիշել, կրծատել, բերել, հասնել, մռնչալ, զարգացնել, հաղթել, դիաչել, ունենալ, ջարդոտել, ժպտալ, շրջապատել, մեծանալ, հարվածել, պարզել, հեռանալ, լսել, արտահայտվել:

## Հայոց մայրաքաղաքը գրկաբաց է ընդունում իր զավակներին

Ծերունազարդ, բայց հավերժ երիտասարդ մայրաքաղաք Երևանն իր գոյության ընթացքում ականատես է եղել բազում իրադարձությունների: Այստեղ իրենց ունակություններն են դրսնորել նաև օլիմպիական, բարի կամքի խաղերի, աշխարհի և Եվրոպայի բազմաթիվ հաղթողներ, մրցանակակիրներ...

Մեր իինավուրց մայրաքաղաքը մի առանձին սիրով է երազել դառնալ Հայրենիքում և Սփյուռքում բնակվող հայ մարզիկների համատեղ մրցելույթների ասպարեզ: Այդ նվիրական երազանքը իրականացվեց.

1999 թվականի օգոստոսի 28-ին Հրազդան մարզադաշտում տրվեց Համահայկական առաջին խաղերի մեկնարկը:

... Տոնականորեն զարդարված մայրաքաղաքը մի առանձին սիրով ու գրկաբաց ընդունեց Սփյուռքի իր երիտասարդ զավակներին՝ նրանց տեղավորելով հարմարավետ ու նորոգ հյուրանոցներում, իսկ մրցելույթները անցկացվեցին թարմ տեսք ստացած մարզական շինություններում ու իրապարակներում: Կանոնակարգված էր խաղերի մասնակիցների առօրյան: Մրցումների օրերին անխափան էին գործում բուժսպասարկման ծառայությունները, տրանսպորտը, փոստային, հեռախոսային, էլեկտրակապի միջոցները և այլն: Հարուստ էր էքսկուրսիոն և մշակութային ծրագիրը: Խաղերի ընթացքը պատշաճ ձևով լուսաբանելու համար հավատարմագրվել էին Հայաստանի և Սփյուռքի 190 լրագրողներ:

Մրցումների օրերին մրցասպարեզ ելան 1141 մարզիկներ, որոնք ներկայացնում էին աշխարհի 62 քաղաքներ:

Հաճելի է նկատել, որ խաղերի ծրագրով աթլետների մրցաշարն անցկացվեց հայոց ինագույն մայրաքաղաք Արտաշատում:

Խաղերի գլխավոր արդյունքը դարձավ Հայաստանի և Սփյուռքի մարզիկների միավորումն ու միաբանությունը, և նրանք բաժանվեցին 2001 թվականին Համահայկական երկրորդ խաղերին Վերստին Երևանում հանդիպելու բուրն ցանկությամբ:

/«Համայկական առաջին խաղեր», Մ.Իսպիրյան/

Վարժություն 179: Հայկական հետևյալ առած-ասացվածքներում գտնե՛ք Ժխտական դերբայները, որոշեցե՛ք դրանց կազմությունը, բացատրեցե՛ք առածների այլաբանական նշանակությունը.

Ամեն անգամ գետը գերան չի բերի:

Ամեն փայտ շերեփ չի լինի, ամեն սար՝ Մասիս:

Աչքն ինչքան բարձրանա, հոնքից վերև չի բարձրանա:

Գայլից վախեցողը ոչխար չի պահի:

Խնձորը իր ծառից հեռու չի ընկնի:

Ծառի տակ պառկելով՝ բերանդ տանձ չի ընկնի:

Մի ծաղկով գարուն չի գա:

Ոտքով ընկածը կբարձրանա, լեզվով ընկածը չի բարձրանա:

Զուրն ընկածը անձրևից չի վախենա:

Սարը սարին չի հանդիպի, մարդը մարդուն կհանդիպի:

Օձի կծածը կլավանա, լեզվի կծածը չի լավանա:

Օձն իր շապիկը կփոխի, բնավորությունը չի փոխի:

Վարժություն 180: Կազմեցե՛ք նվաճել, հաղթել, ավելանալ, ավելացնել, լողալ, պարտվել, հասնել բայերի Ժխտական դերբայները և դրանք օգտագործեցե՛ք նախադասությունների մեջ:

Վարժություն 181: Գտե՛ք դերբայները, որոշեցե՛ք դրանց տեսակը և բացատրեցե՛ք կազմությունը:

### Մոր ձեռքերը

Այս ձեռքերը՝ մո՞՞ր ձեռքերը,  
Հինավուրց ու նոր ձեռքերը...

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...  
Պսակվելիս ո՞նց են պարել այս ձեռքերը՝  
Ինչ նազանքով:  
Երազանքով:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...  
Լույսը մինչև լույս չեն մարել այս ձեռքերը,  
Առաջնեկն է երբ որ ծնվել,  
Նրա արդար կաթով սնվել:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...  
Չրկանք կրել, հոգս են տարել այս ձեռքերը  
Ծով լրությամբ,  
Համբերությամբ:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...  
Երկինք պարզված սյուն են դառել այս ձեռքերը,  
Որ չփլվի իր տան սյունը՝  
Որդին կրվից դառնա տունը:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը՝  
Մինչև տատի ձեռք են դառել այս ձեռքերը,


Այս ձեռքերը՝ ուժը հատած,  
Բայց թռան հետ նոր ուժ գտած...

Քարն են շրջել, սար են շարժել այս ձեռքերը...  
Ինչե՞ր, ինչե՞ր, ինչե՞ր չարժեն այս ձեռքերը՝  
Նուրբ ձեռքերը,  
Սուրբ ձեռքերը:

... Եկեք այսօր մենք համբուրենք որդիաբար  
Մեզ աշխարհում ծնած- սնած,  
Մեզ աշխարհում շահած- պահած,  
Մեզնից երբեք չկշտացած,  
Փոշի սրբող, լվացք անող,  
Անվերջ դատող, անվերջ բանող  
Այս ձեռքերը,  
Թող որ ճաքած ու կոշտացած,  
Բայց մեզ համար մետաքսի պես  
Խան ձեռքերը... /Պարույր Սևակ/

Վարժություն 182: Անգիր սովորեցե՛ք ոտանավորը: Գրեցե՛ք ստեղծագործական շարադրություն «Մայր հմ անուշ ու անգին» թեմայով:

## Բայի դիմավոր ձևեր



Վարժություն 183: Գտե՛ք բայի դիմավոր ձևերը և որոշեցե՛ք դրանց դեմքն ու թիվը:

Յինգ ամիս էր ընդամենը՝ Օդեսայում էի, չորրորդ անգամ փոխեցի բնակարան... Այս անգամ պիտի բնակվեի քաղաքի աղմկալի փողոցներից մեկում՝ հինգիարկանի մի տան երրորդ հարկում...

Յենց առաջին օրը ծանոթացա հարևաններիս հետ: Այդ ինձ համար նոր և բավական հետաքրքրական շրջան էր... Կենտրոնը կազմում էր տանտիրուհու դուստրը՝ շիկահեր, փղոսկրի պես փայլուն, մաքուր ատամներով և գեղեցիկ աչքերով Լուիզան: Նա երգում էր ուներ գունեղ ու անուշ ձայն, պատրաստվում էր բեմին նվիրվելու: Գիտեր նվագել դաշնամուր, երաժշտության դասեր էր տալիս, փող ժողովում, որ գնա իտալիա՝ ձայնը նշակելու:

Առաջին օրը անծանոթ շրջանում զգացի սովորական անհարմարություն, երկողորդ օրն ընտելացա, իսկ մի շաբաթ անցած՝ բավական բարեկամացաց բոլորի հետ: Մենք ճաշում էինք միևնույն սենյակում, միաժամանակ՝ միևնույն սեղանի մոտ... Երեկոյան ծիծաղ, երգ, նվագ, պար ու սրախոսությունների խառնվում էին միմյանց և ջերմացնում տարբեր ազգերի ու դավանությունների պատկանող մարդկանց բարեկամական նթնոլորտը:

Մի օր ճաշից հետո Լուիզան նստեց դաշնամուրի մոտ և սկսեց նվագել ինչ-որ վալս: Չելլինին գրկեց Լուկրեցիա Կաֆարելլիին ու սկսեց պարել: Բարձրացավ ընդհանուր ծիծաղ, որովհետև, իրավ որ, այդ մի զվարժալի գույզ էր...

Զվարճության այդ տաք միջոցին դռների մեջ նկարվեց ինձ համար մի անժանոք կերպարանք: Ես դիտեցի նրան... Դա այն երջանիկ դեմքերից էր, որոնք հենց առաջին հայացքով մարդու սրտում շարժում են համակրության զգացում...

/ Ըստ Ալ. Շիրվանզադեի /

**Վարժություն 184: Գտե՛ք բայերը, որոշեցե՛ք արտահայտած ժամանակը:**

Դու անհոգ նայեցիր իմ վրա  
Դու անցար քո խաղով  
կանացի.  
Ես քեզնից դառնացած  
հեռացա,  
Ես քեզնից հեռացա ու լացի...  
/Վ. Տերյան /

Թափառում ենք փողոցներում՝  
Ես քո սիրով, դու՝ ուրիշի,  
Այրվում ենք մենք  
հրդեհներում՝  
Ես քո սիրով, դու՝ ուրիշի:

Կարոտում ենք, խնդում,  
տիսրում՝  
Ես քո խոսքով, դու՝ ուրիշի,  
Սուզվում քաղցր երազներում՝  
Ես քո տեսքով, դու՝ ուրիշի:

Եհ, ի՞նչ արած, բախտը խռով  
Թող աշխարհում մեզ չհիշի,  
Միայն ապրենք մենք սիրելով՝  
Թեկուզ ես՝ քեզ, դու՝ ուրիշի...

/ Ս. Կապուտիկյան /

**Վարժություն 185: Գտե՛ք բայերը, որոշեցե՛ք դրանց եղանակը, ժամանակը, դեմքը և թիվը:**

Կարծում եմ՝ աշխարհում եղել է երկու քրիստոնյա. մեկը ինքը՝ քրիստոսը՝ հրեա, մյուսը՝ մայրս՝ հայ:

Մայրս միմիայն մի գիրք էր կարդում՝ Ավետարանը, և հավատարիմ նրա պատվիրաններին՝ անտերունչ աղքատներին էր օգնում, հորիցս գաղտնի բարերարություններ անում՝ սատար լինելով դժբախտներին, անօթևան որբերին, սովալլուկ ու կեղերված մարդկանց: Գիշեր-ցերեկ աղոթում էր՝ մագաղաթյա սրբապատկերները

սեղմելով լուսե երեսին, խոնարհվում Աստծո զորության առջև՝ մինչև ուղնուծութը համակված հոգեկան անդորրության:

Աղոթում էր հորս հոգու, երկվորյակ պանդուխտ եղբայրներիս, աշխարհի համար, և արցունքները գլորվում էին նարմարյա այտերով:

Անփարատելի թախիծն է ողողում էությունս, երբ հիշում եմ այն աղեկեզ արտասուրբները, որ կաթկել են մորս աչքերից իմ պատճառով, և չի դադարում մրմռացնող ողբն իմ որբացած հոգում:

Կոծում են մրրկաբեր հողմերը, և ցուրտ է աշխարհը. ճամփորդ է մայրս, գնում է ձուլվելու արևին՝ տաք, ոսկեզօծ...

Ու արևի բորբ միջուկից, թվում է, լսում եմ նրա քաղցրահնչյուն ձայնի քնքուշ ելեւջները. « Մանուկ իմ, տուր թախիծդ ինձ, ցնծա՛, գարուն իմ սրտի: Իմ եղնիկ թեթևասույր, սուրա՛ փրփրադեզ ալիքների վրայով: Ձերմագին է աշխարհը, իմ զավակ, իմ սե՛ր...»:

Թևածում է տիեզերական ցնծությունը՝ սփռելով ոսկեվառ արևի՝ մորս մազերն հիշեցնող շողերը՝ բարկ, ոսկեշող:

Արևն ինքը մայր է՝ խարտյաշ, ոսկեվարս, հակինթյա սրինգով, ոսկեհնչյուն ելեւջներով:

Խավարչտին գիշերն անեանում է, տարրալուծվում, ողջ դալարն է սարսռում, և ընպում են վարդերի բույրը՝ կենարար, արբեցնող, թանձր...

### / Ըստ Վ.Թոթովենցի/

Մեսրոպ Մաշտոցի անունը կրող պողոտայի՝ բարձունքում ավարտվող սարահարթի լանջին խոյանում է յուրօրինակ մի շինություն՝ նման միջնադարյան բերդ-ամրոցներին:

Խոսքը, ինքնըստինքյան հասկանալի է, աշխարհում հայտնի մեր Մատենադարանի մասին է, ուր ամփոփված են հայոց ազնվազարմության վկայագրերը՝ խորախորհուրդ մագաղաթները, ծաղկած մատյանները՝ զարդանախշված որդան կարմրով, դեղձան պես-պես նրբերանգներով, նրբաճաշակ կենդանագրերով, ալեվետ ծաղկանկարներով:

Յայ նորօրյա ճարտարապետության կարկառուն վարպետներից մեկը՝ Մարկ Գրիգորյանն է նախագծել շենքը և ստեղծել անըստգյուտ կոթող՝ կորնթարդ կամարներով ու որմնախորշերով:

Խորհուրդ կա Մատենադարանի ոիրքի ընտրության մեջ. այո՛, ազգային մեծությունների հետ առնչվելու համար մենք՝ սովորական մահկանացուներս, պիտի բարձրանանք հայացքներս հառած վեր՝ բերդանման տաճարի շքեղաշուր մուտքին:

Այնտեղ՝ բարձունքում, մեր անցյալն է վիշտը, ցնծությունը, հաղթանակներն ու պարտությունները, իսկ ավելի ճիշտ՝ հայկական անմեռ ոգին:

Ահա հաղթահարեցիր վերելքը և հասար սանդղահարթակին, որտեղ աշակերտներով շրջապատված՝ բազմած է ազգային հանճարը՝ աստվածընտրյալ Մեսրոպ Մաշտոցը:

Շենքի ճակատային պատի որմնախորշերում քերթողահայր Մովսես Խորենացին, մանրանկարիչ Թորոս Ռոսլինը, փիլիսոփա Գրիգոր Տաթևացին, մաթեմաթիկոս Անանիա Շիրակացին, առակագիր և օրենսգետ Մխիթար Գոշը, աշխարհի անարդարությունների դեմ ընբռստացած Ֆրիկը՝ միջնադարի մեծ գանգատավորը, ասես համրորեն բարբառում են մի մեծ խորհուրդ՝ « ճանաչել զիմաստութիւն և զիրատ, իմանալ զբանս հանճարոյ »:

Մատենադարանի սրահներում, մոռացած աշխարհը, առօրեական հոգսերո, անեանում ես՝ զգալով ազնվության, անբիծ, տաք զգացումների հորդումը երակներիդ մեջ:

### / Մամուլից /

## Օժանդակ բայի խոնարհումը և ուղղագրությունը

Վարժություն 186: Գտե՛ք ստորոգյալները, որոշեցե՛ք նրանց տեսակը /պարզ, բաղադրյալ/, բացատրեցե՛ք օժանդակ բայերի ուղղագրությունը:

«Յարգելի հայրենակի՞ց, բարեկա՞ն, թե՞ եղբայր: Չգիտեմ՝ ինչպես դիմեմ Զեզ...

Ո՞վ ես և ի՞նչն է հուզում ինձ: Օ՛, քիչ է, եթե ասեմ, որ ամերիկացի հայուիհ եմ, որը սիրում է Յայաստանը: Դա պանդիստության մեջ ապրող ամեն ճշմարիտ հայի և ամեն գիտակից հայուիհու պարտքն է:

... Ես այն ժամանակ յոթ տարեկան էի: Բայց կարծես երեկ էր դա ...

Այն ժամանակ չէի հասկանում, թե ինչու են մեզ սպանում: Այնքան գիտեի, որ հայ քրիստոնյաներ ենք, և դրա համար էլ կարող են մեզ սպանել: Թուրքերի սրից ընկավ մեր ողջ նահապետական ընտանիքը, ամբողջ գյուղը ...

Գիշերները փոքրիկ գազանների նման դուրս էինք գալիս մեր թաքստոցներից և թափառում էինք գյուղերում ուտելիք որոնելու, անցնում էինք մեր հարազատների դիակների միջով ... Ու՞ր էին շարժվում այդ հալածական մարդիկ, մայր ու մանուկ, ծեր ու պատանի, մի ողջ տեղահան ժողովուրդ, ինչու՞ էին բողել իրենց դաշտերն ու պարտեզները, թողել էին ցորենով լի իրենց ամբարներն ու մեռնում էին քաղցից՝ օտար ճամփաների վրա... Կորցնելով եղբօրս՝ ես զգացի ինձ ամբողջովին որը ու անպաշտպան... Մի՞թե Դուք իմ եղբայրը չեք... Եթե նույնիսկ Դուք իմ եղբայրը չեք, եթե միևնույն մայրը չի ծնել մեզ, Դուք այնուամենայնիվ, իմ եղբայրն եք: Իմ եղբայրն իմ ճակատագրի համար չէր կարող ավելին անել, քան Դուք եք արել: Թող բնությունը Զեզ երկար կյանք պարգևի, և թող ապրի մեր ժողովուրդը, մեր սիրելի Յայաստանը՝ բոլոր պանդուխտ հայերիս հույսի անմար փարոսը...

Թո՛ւյլ տվեք ստորագրել այսպես՝ Զեր քույր՝ Անահիտ»:

Աղջկան իր կողքին նստեցնելով՝ գեներալը վերցրեց գրիչն ու սկսեց գրել.

«Թանկագին քույրս: Զեր նամակը շատ հուզեց մեզ: Ես ծնվել եմ ոչ թե Թուրքահայաստանում, այլ Կովկասում և մինչև այսօր Անահիտ անունով քույր չունեի: Դուք կարող եք ինձ Զեր հարազատ եղբայրը համարել: Մեզ մի մայր չի ծնել, բայց ծնել է մեզ մի ժողովուրդ և օժտել ընդհանուր զգացմունքներով: Այսօրվանից ես, ուրեմն, քույր ունեմ հեռավոր օվկիանոսից այն կողմ և պարտք ունեմ նրա առաջ:


Զեր եղբայր՝ Յովիաննես»:

/ Ըստ Հր. Քոչարի /

Իսկ գիտե՞ք, որ...

Ոչ ոք չի հիշում, թե ով և երբ է բերել Բուդդայի հսկայական քարե արձանը Թախլանդի մայրաքաղաք Բանգկոկ: Այն տեղադրվել է Մենամ գետի ափին և ամեն օր նրա վեհության առջև խոնարհվել են հազարավոր հավատացյալների գլուխներ: Տասը տարի առաջ որոշվեց գետի այդ ափին կառուցել փայտամշակաման գործարան: Անհրաժեշտ էր արձանը շտապ տեղափոխել ուրիշ տեղ: Երբ արձանը հանվեց պատվանդանի վրայից, երևաց տարօրինակ փայլ: Որքան եղավ ականատեսների զարմանքը, երբ արձանի քարե երեսպատվածքը հանելուց հետո երևաց ոսկուց պատրաստված Բուդդայի արձանը: Մասնագետների կարծիքով արձանը 700 տարեկան է, կշռում է 5,5 տոննա, իսկ արժեքը կազմում է մոտ 45,5 միլիոն դոլար:

## ՄԱԿԲԱՅ



Վարժություն 187: Որոշեցեք, թե որ բառերին են լրացնում ընդգծված մակրայները և գործողության ինչ հատկանիշ են ցույց տալիս:

- 1.Մթնաձորում այժմ էլ թափուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եղել: 2.Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հալվում են ամպի ծվենները, պարսպի վրա երևում են մացառներ...և կիսով չափ հողի մեջ խրված պարիսպները: 3. Ապա բարձրանում է քարե արծիվը, կտուցը՝ կեռ թուր, մագիլները՝ սրածայր նիզակներ, փետուրները՝ որպես պողպատե զրահ: 4. Ե՛վ գյուղում, և բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ, տարիները նույն ծարի միանման տերևներն են: 5. Հնագետը մի անգամ էլ պտույտ արեց բերդի չորս կողմը... 6.Այս անգամ ամենից առաջ գնում էր երրորդ ձիավորը: 7.Կինը հաճախ բարձրացնում էր թեյանանի կափարիչը և նայում տաքացող ջրին: 8. Քետո ուրիշ օրեր եկան: 9. Կինը տեղից վեր կացավ, գլխի շորն արագ իջեցրեց ճակատին... 10.Սակայն բոլորն էլ իրենց դժվար մտքերի հետ էին, ձիերն էին համեմատում իրար, ուշի ուշով դիտում, որպեսզի որոշեն, թե ո՞րը նորից կվերադառնա այս ճանապարհով... 11.Մութ էր արդեմ, երբ վերադարձավ տուն: 13. Ոմանք գյուղեզյուղ շրջում էին մի կտոր հացի հոգսով: 14.Խաղաղությունը պղտորվում էր, երբ հանկարծ մի հառց էր ընկնում մեջտեղ:

/ Ըստ Ա. Բակունցի /

## Մակրայների կազմությունը և ուղղագրությունը

Վարժություն 188: Գտեք մակրայները, որոշեցեք դրանց կազմությունը և բացատրեցեք ուղղագրությունը:

- 1.Օրեցօր ավելի ու ավելի բորբոքվում էր նրա սրտի մեջ կատաղի ատելությունը դեպի յուր գերիշը: 2.Այդ հարվածներին չդիմացավ մանուկ սիրտը, մինչև, վերջապես, նրան հիվանդության մահման մեջ դրեց: 3.Նորից չեն սիրում, սիրում են կրկին: 4.Բանաստեղծներն են հասկացել դույզն-ինչ և թորովում են հնչյուններն անմահ: 5.Կովում էին նրանք հերոսաբար: 6.Անունը կտարածվեր բերներերան: 7.Որ քիչ-քիչ վերցնեք, չ' լինի: Այդպես շուտ կհոգնենք: 8.Դատարանը նրան լիովին արդարացրեց: 9.Նրա տխուր դեմքը սկսեց փոքր առ փոքր փայլել:

Վարժություն 189: Պարզ, բարդ և ածանցավոր մակրայներով կազմեցեք նախադասություններ:

Վարժություն 190: Գտնեք մակրայները, որոշեցեք դրանց տեսակը, պաշտոնը, կազմությունը և ուղղագրությունը:

## Սարն ի վեր

Դեպի վե՞ր, սարն ի վե՞ր...Անվերջ է ուղիս,  
Յոգնեցան բազուկներս՝ այս կռվում անզոր,  
Սպառեցավ և վերջին ուժն էլ ծնկներիս –  
Դեպի վե՞ր, սարն ի վե՞ր, քաջասիրտ զինվոր:

Ավելի կարծրանան թող այս սև ժայռեր,  
Ավելի թող սպառնա անդունդն ահավոր,  
Դեռ շունչ կա բերանումս, շարժվուն են ձեռքեր –  
Դեպի վե՞ր, սարն ի վե՞ր, ո՞վ արի զինվոր:

Դեռ հեռու է կատարն անամպ ու հստակ,  
Բայց եթե չհասնենք այնտեղ մենք այսօր,  
Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է հաղթանակ –  
Դեպի վե՞ր, սարն ի վե՞ր, անվեհեր զինվոր:

## / 3. Յովիաննիսյան /

1.Ինչու՞ է կյանքը հաճախ այնպիսի չար խաղեր խաղում, որ մտածելիս մարդու սրտի մեջ արյունն է պաղում: 2.Չափազանց անհանգստացնում է ինձ այդ լուրը: 3.Ծատ դարեր առաջ՝ իին Յայաստանում, Տորք - Անգեղ անվանք մի մարդ էր կենում: 4.Ու հավիտյան էլ մնացին քնած, Դավին անտեղյակ, ցավին անտարբեր: 5.Աշխատանքից հետզհետե դուրս էին գալիս արհեստավորները: 6.Ներմակ մեղմություն է փռում ձորերն ի վար... Այս առաջին ծյունի վարագույրը: 7.Քո կարոտը վաղուց ես երգել եմ: 8.Դու արդեն հեռացել ես, աշխարհում էլ չկաս դու, // Ու լրել է երգը քո արդեն հիմա: 9.Շուտով բոլորովին կմթնի, օջախի կրակը կիհանգչի: 10.Կանգնել եմ պայծառ, ու շուրջս հիմա Կարմիր գալիքի թևերն են շաչում: 11. Նա գնում էր դանդաղ, քայլում՝ գլխահակ: 12.Իղձեր ունեմ անհատնելի... Տանջանք, որ ինձ վեր է տանում....:

**Վարժություն 191: Յետևյալ մակրայները տեղաբաշխեցե՛ք առյուսակում և կազմեցե՛ք նախադասություններ:**

Դեմ հանդիման, վերջ ի վերջո, հուր-հավիտյան, արագորեն, գիտակցաբար, դանդաղ, համարյա, մասամբ, վերջերս, արդեն, երկրից երկիր, առավել, ամբողջովին, ավելի, ուշի ուշով, կամաց-կամաց, շուրջը, երբեմն, բոլորովին, այսուհետև, նախօրոք, ապա, մեջտեղ, վերև, ներքև, ժամանակ առ ժամանակ, նախապես, հետզհետե, իսկուն, քիչ-քիչ, տեղից տեղ, մոտ, միասին, կենտ-կենտ, դարձյալ, կրկնակի, այլուր, վար, վերջապես, գործնականորեն, դեմ որմաց, հեռու, նորից, ընդամենը, հազիվիազ:

## ՄԱԿՐԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տեղի մակրայ	Ժամանակի մակրայ	Զեկի մակրայ	Չափ ու քանակի մակրայ
-------------	-----------------	-------------	----------------------

**Վարժություն 192:** Հետևյալ մակրայակերտ ածանցներով կազմեցե՛ք մակրայներ՝ յուրաքանչյուրից 6 հատ: Կազմեցե՛ք նախադասություններ:

աբար, որեն, (ա)պես, ովկին, ակի:

**Վարժություն 193:** Հետևյալ մակրայների հետ գործածեցե՛ք բայեր՝ կազմելով նախադասություններ:

Դեմառդեմ, ամենուր, երկրից երկիր, ընդմիշտ, նախապես, առհավետ, մշտապես, հավիտյան, արագորեն, հապճեա, ազնվորեն, խորապես, խստիվ, արտաքուստ, բազմիցս, լիովին, վերստին, չափազանց:

**Վարժություն 194:** Տրված բայերի հետ գործածեցե՛ք մակրայներ՝

տեղի  
դիտել, տեղափոխվել, ցրվել, լսվել, թռչոտել, երևալ, հոսել,

ժամանակի  
մշակել, գիտակցել, ձեռնարկել, ավելանալ, մոռանալ, լրել, տիսրել, նայել,  
ձևի  
կարդալ, կռվել, որոշել, զայրանալ, օժանդակել, ուրախանալ, մոտենալ, շոյել:

Իսկ գիտե՞ք, որ...

Օդային սպորտի շրջանակներից դուրս մի թոիչք գործեցին ամերիկյան պարաշյուտիստներ Ոոդ Պեկը և Բոբ Ալենը Հոլիվուդից (Կալիֆոռնիայի նահանգ):

Չորս կիլոմետր երկու հարյուր վարսունյոթ մետր բարձրության վրա Պեկը ինքնաթիռից թռավ առանց պարաշյուտի: Նրա ետևից դուրս նետվեց նրա ընկերը՝ ձեռքին բռնած Պեկի պարաշյուտը: Օդում մանկրելուց հետո նրանք մոտեցան մինյանց: Ալենը հանձնեց պարաշյուտը Պեկին, և երբ վերջինս հագավ այն, պայմանավորված ազդանշանով հեռացան իրարից: Դրանից հետո յուրաքանչյուրը բացեց իր պարաշյուտը և բարեհաջող ցած իջավ: Պարաշյուտը հանձնելու ու կապելու արարողությունն իրականացվեց իջնելիս՝ ավելի քան մեկ կիլոմետրի վրա:

Պեկը թղթակիցներին հայտարարեց, որ ընկերոջ հետ ջանասիրաբար ու մանրակըրկիտ պատրաստվել էր այդ թոիչքին և մի քանի նախնական փորձեր կատարել:

- Այդպիսի թոիչքի հիմնական դժվարությունը,- ասաց Պեկը,- հաշվումների ճշտությունն է: Հարկավոր է, որ երկրորդ թռչողը իջնելիս առաջ չանցնի առաջին թռչողից: Այդ տարբերությունը վերացնելու համար Պեկն իր վրա ավագով լի մի պարկ էր ամրացրել:

# Կապեր և կապական բառեր

## Գիրք Ծաղկանց

/ հատված /

... Զորում սոսափեցին ուրիները, մտածեցին և կրկին սոսափեցին: Յետո պաղ գետի պես ձորավերևից հոսեց աշումը և զնաց ձորնիվայր: Սոսափին խառնվեց և մի ուրիշ սոսափ: Դա ջրաղացի մամռահոտ ջուրն էր: Բաց թողեց ջրաղացան Յակոբը ջուրը:

Սով էր համայն երկրում:

Յակոբը ուժենու տակ խորհուրդ արեց իր երիտասարդ որդու հետ.

- Գնա՛, Յուսիկ, Դամասկոս: Աղորիքները կանգնեցին: Գնա՛, ցորեն բեր՝ ցանենք, կենդանությունը չմարի:

Յուսիկի կապույտ աչքերը թախծալի ժպտացին: Նա կրկնեց.

- Կենդանությու՞ն:

Ու բերանքաց ժպիտով նայեց հորը:

- Ի՞նչ ես իհմար մտիկ տալիս: Խելքդ գլուխդ հավաքիր, երկիրը կործանվում է:

Յակոբը մտավ ջրաղաց, հանեց անկյունից մի ծաղկավոր խալաթ, իհնգ մետաքս թաշկինակ և կաշվե մատներով շոշափեց ու քսակից հանեց երեսուն դահեկան:

- Տասը բահ եմ շինել – նրա գինն է: Խալաթը ծախելով ճանապարհը կտրես, մի քիչ էլ կրանես, կրերես, գարնանք մի բան գցենք հողի բերանը: Կենդանությունը չմարի:

Յուսիկը նայում էր հոր աչքերին: Նա ինչ-որ խորը, սարսափելի բան է ասում:

Յուսիկը ճանապարհ ընկավ դեպի Դամասկոս:

Գնում է Յուսիկը՝ մի կապույտ, տրտմալի ժպիտ աչքերում: Յեռավոր կապույտը, հեռավոր հայրենիքի:

Յրաշեկ ճանապարհներ են կտրում երկիրը: Նրանք տանում են բուրալի հակեր՝ արմավի, ցորենի, սուրճի:

Գնում է Յուսիկը կարծես աշխարհի վրայով և մտածում է: Եվ յուրովի ժպտում է չարաճճիորեն.

- Ի՞նչ էր ասուն հայրը՝ «Կենդանությունը չմարի»: Ո՞վ, ի՞նչը կփրկի մարդուն: Յո՞դը, կիվեն: Ամիրա՞ն իր զորքերով: Նրա դեմ կանգնած են սելջուկների, թաթարների իշխանները, հեղեղ հեղեղի միջով գալիս են լափում, ջնջում իրար: Գուցե հարստությու՞նը, բայց տեսավ Յուսիկը, թե ինչպես մերկացան հարուստները, ոսկին գնաց, մնացին կմախքները: Ուրեմն ի՞նչը կպահի կենդանությունը, ո՞րն է վեմք կենդանության:

- Վե՞մը, - ահա թե ինչ է որոնում Յուսիկի միտքը:

- Ա՞յ, թե մարդ թռչու՞ն դառնար, փախցներ իր հետ ոսկին, հա՞ցը, զգեստը, կյանքը:

- Բայց ի՞նչ օգուտ, անգղերն ու արծիվները երկնքում կբզկտեին մարդուն և կիափշտակեին նրա բոլոր ինչքը:

Ոսկեփոշի քաղաքը հուրիրատում էր արևի լույսով: Մի հախուռն բազմություն եռում է այնտեղ: Յուսիկի աչքերը շլացան: Ահա մի կրակոտ երիտասարդ՝ բրոնզե ձեռքերն օդի մեջ, ծռում է մի հրացայտ սուր: Պողպատը ցնցվում է ու շիտակվում օծի պես: Նրան շրջապատել են պղնձե երիտասարդները: Նրանք ծիծաղում են սադաֆի ատամներով: Ուղտեր են չոքել չինարեների շուրջը, նրանց կողքին ցարուցրիվ հասկերն են ցորենի ու բյուր բարիքների:

Նստեց հոգնած՝ այդ հասկերի մոտ, մեջքը տվեց չինառու բնին: Արևը կիզում էր նրան, տորը խեղդում: Նայում էր շուկան շրջանակած տներին, մարդկանց. բոլորը խանձված են բարկ արևից: Կապուտակ ջրերի կոհակներ վետվետեցին Յուսիկի աչքերում: Նա անգամ զգաց նրանց սառցի շիթերը իր պապակ շուրթերին: Քուն է գալիս աչքերին:

Նայում է մշուշոտ հայացքով: Երկա՞ր էր նայում, քնե՞լ էր և զարթնել, չիր հիշում. նայեց և ահա տեսավ իր դեմ մի խառնված բազմություն, որ ծիծաղելով իրար ձեռքից առնում և բարակ մատներով կոպիտ բացուխուփ էին անում մի գիրք: Յուսիկը վեր կացավ՝ գրավվելով ինչ-որ ծանոթ բանով: Ի՞նչ է դա: Այո՛, այդ գրքի տեսքը: Նա տեսել է դրանցից: Մոտեցավ: Անզգույշ, կոշտ եղունգները քերում էին գրքի կողերը: Մի ուրիշ ձեռք խլեց գրքը, և ինքը սկսեց տնտղել նրա սեակաշի, արծաթ պատյանը: Յետո բացեց գիրքը և նայեց էջերին:

Գարուներ բացվեցին և մրգահաս աշուններ, երկինքներ սուտակ, բուրաս- տաններ, հրեղեն վարդեր, վագրեր ոսկեձույլ և ծաղիկներ՝ մանվածապատ, ջերմ, հափշտակված, հրճվալից: Յուսիկի աչքերում նկարվեցին իր լեռների, հովիտների մտերիմ գույները:

Ի՞նչ էր գրած այս գրքում, որ այդպես ջերմագին ծաղկազարդված էր: Գիրքը ծախում էին: Ծախողը մի արար զինվոր էր՝ բարեդեմ ու անհոգ: Նա ձեռք էր բերել այդ իրը արշավանքի ժամանակ և հիմարություն էր արել բերելու մինչև Դամասկոս... « Ինչի՞ն էր պետք »:

- Յը՝, ի՞նչ տամ,- բերանը ծիծաղով ծռում է մի ուրախ մարդ:

- Երեսուն դահեկան:

Գնորդը փոթկաց, և գիրքը թռավ, ընկավ գետին՝ փոշու մեջ: Սյուսները ոտներով խփեցին այս ու այն կողմ: Զինվորը ծիծաղեց, գնաց ծուլորեն վերցրեց գիրքը և բռնեց ձեռին: Զվարդանում է, որ ինքը ծախում է, նրանք էլ չեն առնում:

Յուսիկը մոտ գնաց և գիրքը շոշափեց: Տաք էր արծաթը նրա մատների մեջ: Բացեց գիրքը: Նայեց նրան թեթև, հանդարտ: Աչքեր երևացին ծաղիկների միջից: Մի գարնանային ինմաստություն, մի հարատև կենդանություն բուրեց նրա միջից: Գիրքը հանգիստ էր մի մարդու նման, որ գիտե կյանքի բոլոր օրենքները և կենդանության գաղտնիքը և չի վախենում մահից, սիրում է կյանքը և հավատով է ճակատագրի դեմ: Յուսիկը հեգելով կարդաց. « Զի աշխատանք սուրբ են »:

Յուսիկը հիշեց, հիմա միայն հիշեց իր գինեսեր ու զվարք Սարգիս ապուպապին, որի մասին ասել էին, որ մի առույգ որմնադիր էր եղել: Երգում էր՝ « բանելիս », երգում՝ աղետների օրերին և երբեք չեր ծերանում: Մի անգամ գործից վերադառնալով՝ նա տեսել էր, որ իր տունը կողոպտել էին, բայց Սարգիս ապուպապը քահ-քահ ծիծաղել էր.

- Չեռքս չեն գողացել:

Ամենանեղ օրերին նա միշտ ասելիս էր եղել. « Կաշխատենք - կապրենք »:

Այս էր ասել նաև նրա որդին և վերջին որդին՝ Յուսիկի հայրը: Եվ ասել էր հայրը, լսել էր սրա հայրը, և սա էլ լսել էր իր հորից, որ ամենամեծ բանն աշխարհում աշխատանքն է: « Աշխատանքը սուրբ է », - այսպես է գրված գրքում, ասելիս են եղել Յուսիկի պապերը՝ բոլորն աշխատավոր: Կրկին կարդաց.

- « Զի աշխատանք սուրբ են » :

- Ուրեմն սա այն գի՞րքն է ...

Յուսիկի աչքերը վառվում են, և միտքը կորչում հեռում ...

Նա հանեց իր դրամները և տվեց զինվորին: Սա վերցրեց գիրքը, աշխույժ խորեց Յուսիկի բուրը և ծիծաղելով գնաց: Ծիծաղեցին նրա հետևից մյուսները և զարմացած նայեցին Յուսիկին:

Սա երազում էր:

Մոտեցան ուրիշ օտար մարդիկ, նայեցին գրքին, Յուսիկին: Ու մինչ սա գիրքը դնում էր իր տոպրակը, մի ծանոթ ծայն սթափեցրեց նրան: Սողոմոնն էր, իր հայրենակիցը:

- Դու խելա՞ն ես, թե՞ հիմար: Փողդ տվիր գրքի՞ն:

- Յա՛, - կոտրած ժպիտով, փոքր-ինչ հիմար՝ նայում է Յուսիկը Սողոմոնին:

- Ապա գարնանը ի՞նչ ես ցանելու:

- Յուսիկը զարմացած նայում է, և աչքերում առկայժում է թախժալի մի շող:

Շփոթվա՞ծ է, թե՞ կատակ արեց:

- Հիմա գնա տուն, անխելք:

Կգնա տուն և սովը նստած կլինի այնտեղ: Մոխրագույն մի անդունդ է ընկղմում գիրքը: Ել ոչինչ չի երևում:

Ի՞նչ եղավ Յուսիկը, ինչպես վերապրեց սովը: Այսինքն՝ մահը:

Խե՞նթ, խե՞նթ Յուսիկ ...

Գրքի հիշատակարանում գրված է, թե ինչպես նա դրամը տվեց գրքի դիմաց ...

Երևի կարծելով, որ ցորենն անգամ կենդանություն չէ, որ անգամ նա չի փրկի իր կյանքը մահից:

\* \* \*

Յիշանդ երեխայի բարձի տակից /ահրելիորեն ծանր շարժվել, բայց անցել են կրկին դարեր/ կյանքի հուսով նայում է նա այն գիրքը: Ի՞նչ գիրք է, ոչ ոք չգիտե անգրագետ հողագործի այս ընտանիքում: Նրան գտել են մի ավերակ տան մոխրանոցում: Ասում են՝ բժշկում է ամեն հիշանդություն: Երեխան հոգու հիշանդություն ունի...

\* \* \*

Սև դարերի խորքից գալիս է մի գիրք: Խավարի միջին թափառող լույսի է նման՝ դողդողում է, բայց գալիս է. թե ինչ վտանգմեր է անցնում, չի տեսնում նա: Ոչ ձմեռ, ոչ խավար: Ոչ կրակն է այրում նրան, ոչ շոգը խեղդում: Յրա՛շքն է պահում նրան, թե՛ պատահմունքը: Բայց սերունդները խնամում են նրան, թաքցնում, փրկում և ավանդում նրան հետնորդներին, ձեռքեճեռք անցկացնում դարերի փորձանքներից, անցկացնում հուր, սուր, ջուր:

Ժպտում է գիրքը: Միամի՞տ է նա, անհո՞գ է նա, խորանա՞նկ է նա և գիտե՞ իր գործը կարգադրել: Թե՞ իմաստուն է, հայտնի է իրեն իր ճանապարհի գիրը:

Նման արևի լույսին, որ անհոգ խաղում է փրփրած ծովի կատաղի ալիքների վրա: Դեղնում են ալիքները, կապտում, փրփրալի ժայթքում, գոչում, բռնցքում արևի դեմ, բայց նա ժպտում է: Վտանգ չի իմանում նա, ատելություն չի դիպչում նրան, ալիք չի փշում նրան:

Յազար ձեռքեր պահել, շոյել, շոշափել են այս ծաղիկները՝ կյանքի գեղեցկությունը, հազար – հազար աչքեր նայել են նրանց հետևից սիրով ու թախիծով: Մոխրացել են հազար ձեռքեր, տենչալի աչքեր, և մնացել է այս ջերմ գիրքը:

\* \* \*

Բնաջնջվում է մի ողջ ժողովուրդ: Ոչ թե մի գիրք: Թնդանոթներն ահեղ վիճակում են, «նա կորած է» ... - ոչ, «նա փրկված է», «... հրա՛շք է, թե փրկվի...»:

\* \* \*

Մի կարմիր հողմ փոթորկալի թերթում է ոսկելույս թերթերը գրքի, որ ընկած մի մեծ ճանապարհի վրա՝ նայում էր նրան մտերմորեն: Նա փրկված է՝ իրեն միշտ փրկող ժողովրդի հետ:

Երկաթե գրադարաններում լռում են դարերը: Մի ալեհեր գլուխ հակված է պատմության անդունդը և խոր հովտում տեսնում է ծաղիկներ, ծաղիկներ, ծաղիկներ ...

**Վարժություն 195: Պատմեցե՛ք տեքստը:**

**Վարժություն 196: « Գիրք ծաղկանց » բնագրից իրենց կապվող բառերի հետ դուրս գրեցեք կապեր, որոշեցե՛ք նրանց տեսակը և պաշտոնը նախադասության մեջ:**

**Վարժություն 197: Դետևյալ կապերով և կապական բառերով կազմեցե՛ք նախադասություններ՝ ընդգծելով կապը և կապվող բառը, որոշեցե՛ք վերջինիս հոլովը:**

Դետո, չնայած, ինչպես, առաջ, մասին, պատճառով, մոտ, ներքև, տակ, հանդերձ:

**Վարժություն 198: Դետևյալ կապերի հետ գործածեցե՛ք գոյականներ և կազմեցե՛ք նախադասություններ:**

Դամար, հանուն, չնայած, շնորհիվ, փոխանակ, համաձայն, հեռու, հանդերձ, պես առաջ, մասին, պատճառով, փոխարեն, հանձինս:

**Վարժություն 199: Դետևյալ կապերը գործածեցե՛ք անձնական դերանունների հետ /1-ին և 2-րդ դեմքերի/ և կազմեցե՛ք նախդասություններ:**

Մոտ, վրա, պես, չափ, համար, հետ, նման:

**Վարժություն 200: Կազմեցե՛ք բառակապակցություններ՝ գործածելով փակագծերուն դրված բառերը:**

Դուք /նման/, ծնողներ /հանդերձ/, նրանք /զատ/, մենք /մոտ/, հանդեպ /հայրենիք/, հոգի /պես/, ձյուն /տակ/, առանց /քույր/, /մանկություն/ սկսած, ընդդեմ /զաղափար/, դու /չափ/:

**Իսկ գիտե՞ք, որ...**

Երկարակեցության ռեկորդը ճապոնիայում պատկանում է ձկնորս Նակամուրային: 1966թ. լրացավ նրա 114 տարին: Իրեն այցելած ժուռնալիստներին նա հայտարարեց. «Եթե ուզում եք երկար ապրել և միաժամանակ տեսնել այնքան լավ, ինչպես ես, խորհուրդ եմ տալիս սնվել ծովակաղամբով և հում ձկով: Իմ կյանքում ես երբեք ուրիշ ոչինչ չեմ կերել...»:

## Ծաղկապ

**Վարժություն 201: Դետևյալ նախադասությունները ամբողջացրե՛ք՝ ավելացնելով համապատասխան շաղկապները:**

Կեսգիշերից բավական անցել էր, ...

Ուղևորները գիտեին, ...

Բայց այդ էլ շուտով մոռացվում է, ...

Մարդը հոգով չի թունավորվում, ...

Գեղատեսիլ մի տեսարան բացվեց նրանց առջև, ...

Մայրերը ծածկեցին երեսները, ...

Նա փորձեց քնել, ...:

**Վարժություն 202: Տրված շաղկապներով կազմեցեք նախադասություններ:**

Որ, իենց որ, որովհետև, որպեսզի, բայց, իսկ, սակայն:

**Վարժություն 203: Ավարտեցեք նախադասությունները:**

Ոչ թե ..... , այլ, ..... :  
Թեև ..... , բայց ..... :  
Չնայած ..... , բայց ..... :  
Որովհետև ..... , ուստի ..... :  
Քանի որ ..... , ուստի ..... :  
Թեև ..... , այնուամենայնիվ ..... :  
Եթե ..... , ապա ..... :  
Ոչ միայն ..... , այլև ..... :

**Իսկ գիտե՞ք, որ...**

Ալժիրում Սիդի Բել Աբաս փոքրիկ քաղաքի մոտ գտնվում է թանաքի մի լիճ: Այդ լճի ջուրն իր մեջ պարունակում է այնպիսի նյութեր, ինչպիսիք կան թանաքի հյութի մեջ: Լճի ջրում ոչ մի կենդանի չկա: Զուրը պիտանի է միայն գրելու համար:

## **Վերաբերականներ**

**Վարժություն 204: Գտեք վերաբերականները և որոշեցեք դրանց տեսակը**

Սի՞թե վերջին պոետն եմ ես,  
Վերջին երգիչն իմ երկրի.  
Մա՞հն է արդյոք, թե նի՞նջը քեզ  
Պատել, պայծան Նախրի...

**/Վ. Տերյան/**

Չէ, չի լոել մեծ Շոթարի  
Երգի ձայնը կաթոգին...

**/Րուի. Թումանյան/**

Կարծես թե դարձել եմ ես տուն,  
Բոլորն առաջվանն է կրկին.  
Նորից դու հին տեղը նստում,  
Շարժում ես իլիկը մեր հին...

**/Վ. Տերյան/**

**Վարժություն 205:** Կազմեցե՛ք նախադասություններ՝ օգտագործելով հետևյալ վերաբերականները:

Անկասկած, իրոք, այո՛, ո՛չ, երևի, գուցե, թերևս, համարյա, բարեբախտաբար, ցավոք սրտի, նույնիսկ, անգամ, գոնե, միայն, միմիայն:

**Վարժություն 206:** Հետևյալ վերաբերականները խնդրավորեցե՛ք ըստ տեսակների՝ հաստատական, երկբայական, սահմանափակման, զիջական, զգայական:

Այսուամենայնիվ, իմիջայլոց, անգամ, գոնե, լոկ, իրավ, թերևս, գուցե, անշուշտ, կարծես, ցավոք, բարեբախտաբար, երևի, արդարև, հիրավի, միգուցե:

**Վարժություն 207:** Կազմեցե՛ք նախադասություններ՝ գործածելով հետևյալ վերաբերականները:

Անկասկած, գուցե, թերևս, ցավոք սրտի, բարեբախտաբար, անգամ, ասես, իրոք:

## Զայնարկություն

**Վարժություն 208:** Ընդգծե՛ք ձայնարկությունները և կետադրեցե՛ք:

Դասընկերներով որոշեցինք երկու օր անցկացնել անտառում: Օ ինչ ուրախություն, մեր ծնողները չառարկեցին:

Երեկոյան շուտ մտա անկողին, որ կարողանամ վաղ արթնանալ: Դեռ երազ էի տեսնում, երբ հանկարծ լսեցի հեռախոսի զանգը՝ զընգ: Արմենն էր.

- Վահ ա՛ տղա դեռ քնա՞ծ ես:
- Իա արդեն հավաքվել ե՞ք: Թուի քնած եմ մնացել: Յիմա գալիս եմ:

Տասը րոպէ հետո հասա ընկերներիս: Վրաններով, ուտելիքով բեռնավորված՝ ճանապարհ ընկանք:

Գյուղից նոր էինք դուրս եկել, երբ Աշոտը հանկարծ գոչեց.

- Վայ մոռացել ենք լուցեկի վերցնել:
- Էհեւ ստիպված ենք հետ դառնալ,- դժգոհեց Արամը:
- Պահ, մի՞թե կարծում եք, թե ես էլ ձեզ պես մոռացկու եմ, ասաց - Արմենը, գրպանից հանեց լուցեկին ու վառեց,- բաա:

Ուրախ-ուրախ մտանք անտառ, որը մեզ դիմավորեց իր անդուլ համերգով:

- Կաղ-կղա, կաղ-կղա, - լսվում էր ինչ-որ թռչունի միալար ձայնը:

Կըտ, կըտ, կըտ,- ծառի կեղևն էր փորում փայտփորիկը:

- Վաշ-վիշ, վաշ-վիշ, - աղմկում էր գետակը:
- Սըսս-սըսս, - կարծես բոլորին լրեցնում էին միմյանց քսվող տերևները:

- Յեյ,- բղավում էինք խնբով և լսում բազմապատկված արձագանքը՝ հեեյ:

Անտառում երկու հրաշալի օր անցկացնելուց հետո վերադարձանք տուն:

- Ա ի՞նչ լավ էր այնտեղ , - հաջորդ օրը ասում էինք միաբերան:

**Վարժություն 209:** Կազմեցե՛ք նախադասություններ, որոնցում ձայնարկություններն արտահայտեն ուրախություն, զարմանք, ափսոսանք:


Իսկ գիտե՞ք, որ...

Ավատրիական Կլագենֆուրտ քաղաքի փողոցներից մեկում զբունում էր կրկեսի ժամանակաշրջանը:

Հայտնի են նաև ուրիշ դեպքեր: Պատահել է, երբ փողերը վախեցել են և փախել են ծովային խոզ կամ ոզնի նկատելիս:

## ՇԱՐԱՐՅՈՒԹՈՒԹՅՈՒՆ

### Նախադասություն, տեսակները Նախադասության անդամներ



Վարժություն: 210 ա. Տեքստից դուրս գրեցե՛ք պարզ և բարդ նախադասությունները:  
բ. Ընդգծեցե՛ք նախադասության գլխավոր և երկրորդական անդամները՝ ենթական, ստորոգյալը և լրացումները

Արան ուշքի եկավ: Փառահեղ մի վրանում էր գտնվում: Նրա մահճակալի մոտ՝ փոքրիկ աթոռակի վրա, տրտմաթավ դեմքով նստած էր Շամիրամը: Արան նայում էր նրան ու մտածում, որ նա թեև այժմ էլ գեղեցիկ է ու թովչական, բայց արդեն այն դիցակերպ չէ, որին ինքը հանդիպել էր տարիներ առաջ՝ Նավասարդյան օրերին: Նա Շամիրամի չքնաղ դեմքին նայում ու հիանում էր, ինչպես կիհանար հրաշակերտ մի արձանի նայելով: Շամիրամը զգում էր Արայի հայացքի սառնությունը, զգում նրա անտարբերությունն իր հանդեա ու վրդովվում էր: Մի՞թե մարդ կարող էր այդքան համար ու անկոտրում լինել, այդքան անզգա՝ գեղեցկության ու անկեղծ սիրո հանդեա: Վերջապես Շամիրամի համբերությունը սպառվեց, ու նա, լոռւթյունը խզելով, ասաց.

- Ինչու՞ չես խոսում, Արա՛, ինչու՞ քո ձայնին ինձ կարոտ ես թողնում:

Արան լուր էր:

/ Ըստ Ա. Ղուկասյանի/

### **Վարժություն 211: Լրացրեք Ենթակաները:**

.... հայ նոր գրականության հիմնադիրն է:  
.... Հայաստանի Հանրապետության ամենաբարձր լեռն է:  
.... «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության հեղինակն է:  
.... տարվա ամենահաճելի եղանակն է ինձ համար:  
.... ինձ շատ է հուզում:  
.... զարգացնում է մարդուն:  
.... իմ հիմնական զբաղմունքն է:

### **Վարժություն 212: Լրացրեք տրված նախադասություններում բաց թողնված պարզ ստորոգյալները:**

Հայաստանը .... անճանաչելիորեն:  
Սայաթ-Նովան .... երեք լեզուներով  
Մենք .... հանուն միավորման:  
Հասմիկը .... Յովիաննես Թումանյանի «Լոռեցի Սաքոն»:

### **Վարժություն 213: Կազմեցեք նախադասություններ՝ տրված հարադրական բայերը գործածելով որպես ստորոգյալ:**

Թույլ տուր, մայր մտնել, երես թեքել, հաշվի առնել, գլուխ տալ, իրար անցնել:


### **Վարժություն 214: Տեքստից առանձին այունակներով դուրս գրեցեք պարզ և բաղադրյալ ստորոգյալներն իրենց Ենթականերով: Ընդգծեք ստորոգյալները: Ո՞ր խոսքի մասերով են արտահայտված ստորոգելիները:**

Սառը, լուսնկա երեկո էր: Ծովը հանդարտ էր, մթնոլորտը՝ խոնավ. միայն եզերքի թերև ալիքները, շփվելով ավագուտ ափերին, տարածում էին մեղմիկ շառաչյուն: Մերը ընդ մերը լսվում էին շոգեշարժ նավակների սուլոցները, որոնք, սուր նետերի պես օդը ճեղքելով, տարածվում էին հանդիպակաց լեռներում:

**Իսկ գիտե՞ք, որ...**

Ինչո՞ւ մենք ծոծրակով զգում ենք մարդու ներկայությունը կամ հայացքը: Այս հարցը երկար ժամանակ հանելուկ էր: Վերջին տարիներին գիտնականները գտել են դրա լուծումը: Ենթադրվում է, որ այդ գործում դեր ունի կոնանման գեղձը, որը գտնվում է ուղեղի ծոծրակային մասում: Կարծիք կա, որ կոնանման գեղձը երրորդ աչքի չաճած մնացորդն է: Գիտնականները գալիս են այն համոզման, որ այդ գեղձը հեռազգայնության օրգաններից մեկն է և գոյություն ունի մարդու և ողնաշարավոր կենդանիների մեջ:

## Նախադասության տեսակներն ըստ երանգի



Վարժություն 215: Գեղարվեստական գրականությունից դուրս գրեցեք պատմողական, հարցական, իրամայական և բացականչական նախադասություններ:

Վարժություն 216: Կարդացեք բնագիրը և որոշեցեք նախադասությունների տեսակներն ըստ երանգի:

Մի արևկեզ օր՝ հետմիջօրեին, մեղմօրոր, թափանցիկ մի քամի, բարձունքներից վար սահելով, փովեց ծաղկափթիթ արմավենու՝ Նեղոսի պաղպաջուն ջրերով ողողված ոտքերի տակ:

- Իմ իրաշագեղ թագուիի, - մեղմորեն շնկշնկաց նա, - ես՝ աշխարհի ըմբռստ ոգիս, սիրում եմ քեզ:Երբ հորիզոններից հորիզոններ էի անցնում, տեսա քաղցրաբույր, չնաշխարհիկ պատկերդ, և սիրտս մարեց: Բաց գողտրիկ գոգդ և ընդունիր երկրպագուիդ:

- Դու ո՞վ ես, որ քեզ սիրեմ, ամբարիշտ քամի, - արհամարհանքով պատասխանեց արմավենին: - Մի՞քե նա չես, որ գիշեր-ցերեկ, առավոտից իրիրկուն անընդիատ վայում է անայի ուղիների վրա: Դու հեղիեղուկ ես, աղքատ, ճրագներ ես հանգցնում և փոշոտուն թավշյա խոտը զմրուխտ: Գնա՛, չքվի՛ր:

- Մի՛ վախենար, իմ դշխուիի, որովհետև երբ սիրում եմ, աշխարհի ամենահեզ, ամենաբարի ոգին եմ դառնում: Իմ օդեղեն քնքուշ թևերով դրախտի բուրմունքներն եմ ցանուցիր անում աշխարհից աշխարհ, սրտահույզ քնարի նուրբ լարերն եմ թրթացնում, աղբյուրների ցոլցլուն մարգարիտների մեջ լալիս ու քրքջում: Արծիվների սրաթոհչ թևերն են շարժում և առյուծների բաշերը հյուսում: Սիրի՛ր ինձ, և թող համբուրեմ սիրատարակ շրթունքներդ:


Արմավենին անդրդվելի էր:

Տեսնելով նրա ճյուղերի քամահրալից շարժումը՝ քամին՝ արդեն կատաղի և սանձակոտոր, պոկեց հողից արմավենուն և սեղմելով մրրկահույզ սրտին՝ տարավ հեռու՝ - հեռու՝ դեպի տոքակեզ անպատճերը, ուղղաբերձ լեռնաշղթաները, շառագույն հորիզոնները:

## Իսկ գիտե՞ք, որ...

Նվեցարական ժամացույցի մի գործարան թողարկել է զարթեցուցիչի նոր տեսակ, որը երրորդ զանգից հետո քնկուտի երեսին ցայտում է հեղուկի շիթեր: Զարթեցուցիչը կարելի է լիցքավորել նաև լիմոնադով, օժանելիքով կամ հասարակ ջրով:

## Նախադասության անդամների կապակցման եղանակները



Սևանը՝ մեր լեռնային գեղեցկուհին, Յայաստանի Յանրապետության ամենամեծ լիճն է:

Նա բակում աճեցնում է իր սիրած ծաղիկները:

Դու Աշոտի՝ հետ գնացիր գրադարան:

Բոլորս մասնակցեցինք բարեգործական միջոցառմանը:

**ԽՄԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ. Կապակցման միջոցները (որոշակի հոլովով կամ կապով կազմված լրացում)**

**Վարժություն 218: Կազմեցեք նախադասություններ՝ հետևյալ բայերը գործածելով որպես լրացյալ:**

Ծանոթանալ (ո՞ւմ, ի՞նչի՞ն)  
հիանալ (ումո՞վ)  
զարդարել (ո՞ւմ, ի՞նչը)  
ձանձրանալ (ումի՞ց, ի՞նչի՞ց)  
հաղթահարել (ի՞նչը)  
խրախուսել (ո՞ւմ, ի՞նչը)  
նվիրվել (ո՞ւմ, ի՞նչի՞ն)  
հանդիպել (ո՞ւմ, ի՞նչի՞ն)  
ստանալ (ի՞նչ)

**Իսկ գիտե՞ք, որ...**

Դուք իհարկե, լսել եք ֆրանսիական թագավոր Պիափին Կարճահասակի մասին: Նրա բարձրությունը մեկ մետր երեսունյոթ սմ էր: Սակայն դա չէր խանգարում, որ մարտերի ժամանակ նա գերազանց կերպով օգտվեր իր սրից: Պիափինի սրի երկարությունը մեկ մետր ութսուն սմ էր:

### **Առողության և նրա քերականական միջոցների մասին**



**Վարժություն 219: Տրված առդրական կապակցությունները գործածեցեք նախադասությունների մեջ:**

Հաճելի տեսարան, գործել գիտակցորեն, սիրել մայրաբար, նախօրոք պատրաստել, հնձած արտ:

**Վարժություն 221: Որոշեցեք համաձայնությամբ կապված անդամները. բացատրեցեք համաձայնությունը:**

Բարակ հովը մեղմիկ սվավում էր խոզանների վրայով, ծղրիդները... ոիթմիկ ծղրտուն էին, անտեսանելի հավերը հնձած արտերի մեջ անուշ ճքճթուն էին, իսկ ոչխարները մնչում էին անհուն բարությամբ:

Հովը բերում էր գյուղերից ու ճանապարհներից շների ընդհատվող հաշոցները...

Այս բոլոր ձայները ձուլվում էին մի անհատակ լռության մեջ, որը ինքնին մի ներդաշնակություն էր... Եվ այս տարերային լռությունը երգ էր դարձել իմ հոգում: Ես պառկել էի մեջքիս, գլուխս ձեռներիս վրա դրած, և նայում էի երկնքին:

/ Ըստ Ավ. Իսահակյանի/

**Իսկ գիտե՞ք, որ...**

Աշխարհի ամենամեծ պատկերասրահը Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժն է: Այդ թանգարանի բոլոր 322 դահլիճները դիտելու համար, որոնցում կան մոտ 3 միլիոն արվեստի ստեղծագործություններ, պետք է անցնել շուրջ 25 կիլոմետր ճանապարհ:

## **Նախադասության տրոհվող անդամների (բացահայտիչ, հետադաս որոշիչ, հատկացուցիչ) կետադրությունը**

**Վարժություն 222: Կետադրեցեք ինքնուրույն, ընդգծեցեք բացահայտիչները և բացատրեցեք տեսակը:**

1. Ատոմը զգում էր, որ ինքը որպես զինվոր պիտի ենթարկվի հրամանատարին:
2. Վերևում բլուրների լանջերին շուրջանակի կանգնած էին հակառակորդ բանակները, բարձր ժայռին՝ թագավորը Սավուրը, որ պատրաստվում էր դիտելու կրիվը:
3. Ուրախության աղաղակ բարձրացավ, երբ դրսում երևացին օրվա անձնագոհ հերոսները Չուպրովը Ռասուլը և Կարապետը:
4. Հյուրերի գալուց քիչ անց կեսօրին սկսվեց տոնախմբությունը:
5. Թվում է՝ նժույգը հպարտ էր, որ մեջքին կրում էր հայոց աշխարհի պարծանքին Դավիթ Բեկին:
6. Իբրև կին նա ազնվական էր այս բառի խոր իմաստով, որպես իշխնուիկ փառատենչ ու մեծամիտ:

**Վարություն 223: Կետադրեցեք տրոհվող որոշիչները:**

1. Զաղաքի սակավամարդ նրբանցքներից մեկով քայլում էր մի երիտասարդ ուսերից վար թափվող դարչնագույն զգեստով մուգ շականակագույն մույկերով:
2. Դեմ դիմաց կանգնած էր մի տղամարդ ծանոթ ժամանակի ճերմակ փոշուց սպիտակած մազերով:
3. Մարզպետունու առջև կանգնած էր Սմբատ թագավորի հարազատ եղբայրը պարթև հասակով գեղեցիկ դեմքով քաջալանջ և հաստաբազուկ:
4. Ահա բարձրանում է քարե արծիվը կտուցը կեռ թուր մագիլները սրածայր փետուրները պողպատե զրահ:
5. Կրկին երևում են բարդիների կատարները բարձր օրորուն:
6. Որտե՞ղ էր տեսել նա նման մի դեմք բարձր սպիտակ ճակատով մանուշակագույն աչքերով:

#### **Վարժություն 224: Կետադրեցեք տրոհվող հատկացուցիչները:**

1. Բազմության հետաքրքրությունից վառվող աչքերում երևաց զարմանքի արտահայտություն:

2. Հանկարծ լսվեց հայոց զորքերի կայծակի որոտ հիշեցնող ձայնը, և Մարզպետունու գմբերը հորդառատ հեղեղի պես թափվեցին հագարացիների սարսափից գլուխները կորցրած զինվորների վրա:

3. Մի բան, որ սկզբից և զարմացրեց Շահյանին, դա Եվայի հասարակ չքից կարված ոչ պարահանդեսային հագուստն էր, որ նրան գրեթե աննկատելի էր դարձնում դահլիճում հավաքված օրիորդների աչք շլացնող միջավայրում:

4. Տարոնի միայն այդ հարթավայրին բնորոշ ջինջ առավոտներից մեկը:

5. Ցավում էր Փակստոս մատենագիրը, որ դժգոհ էր Պապի եկեղեցու դեմ գործած վարմունքներից:

6. Յուր ու բոց էր թափվում Վանի հրդեհից խուճապահար բնակիչների գլխին:

#### **Վարժություն 225: Տրված բառերը գործածեցեք փոքրիկ շարադրության մեջ որպես որոշիչներ:**

Լուսաթաթախ, մեղմօրոր, խորհրդավոր, ադամանդափայլ, ծիրանավառ, սաղարթախիտ, լուրթ:

#### **Վարժություն 226: Ընգծված բառերի մոտ գրեցեք նրանց իմաստը պարզաբանող մեկից ավելի համադաս բացահայտիչներ: Նշանակեցեք կետադրությունը և բացատրեցեք:**

Իմ սիրելի բանաստեղծների ... ստեղծագործությունները ինձ հոգեկան մեծ բավականություն են պատճառում:

Մեր դաշտերում աճում են տարրեր տեսակի ծաղկներ... :

Իմ սիրած գրքերը... պահում եմ հատուկ խնամքով:

Ես պատրաստ եմ ամեն ինչ անել իմ ընկերների... համար:

**Իսկ գիտե՞ք, որ...**

Տարիներ առաջ Մոսկվայի դինամոյականները Ստոկհոլմում խաղում էին Շվեդիայի «Նորչեպինգ» լավագույն ֆուտբոլային թիմի հետ: Դաշտի տերերը, չոհմանալով արագությանը, խաղը տանուլ տվեցին մեկուկես հաշվով:

- Սովետական ֆուտբոլիստները ինչ-որ կախարդական հարեր էին ընդունում,- հայտարարեցին շվեդացիները:

Պարզվեց, որ «կախարդական հարեր» սովորական շաքարի կտորներ են եղել: Մարզիկները գիտեն դրա հրաշագործ ուժը: Խիստ հոգնածության կամ քաղցի ժամանակ բավական է ուտել մի քանի կտոր շաքար, և ուժերը կվերականգնվեն:

Արշավների կամ մրցումների դուրս գալիս չնոռանաք ձեզ հետ շաքար վերցնել:

## Դերբայական դարձված. կետադրությունը

Վարժություն 227: Կետադրեցեք ինքնուրույն և որոշեցեք դերբայների տեսակները:

1. Աննան գոհ իր արդուզարդից և հպարտ կեցվածք ընդունելով մտավ դահլիճ:
2. Յարավային մեղմ սյուքը շոյեց երտասարդի վառվող այտերը, և նա սթափվեց պղտորված աչքերը ուղղելով ինչ-որ անորոշ տարածության:
3. Յայ երգերի մեջ ամբարված դարավոր թախիօր ողբն ու մրմուռը կուտակվել էին Կոմիտասի տանջալլուկ հոգում պոռթկալու իբրև նոր աղոթք նոր «Տե՛ր, ողորմյա»:
4. Մրրիկի ժամանակ մեջք մեջքի տված միմյանց զորավիզ լինելով նրանք պայքարում էին տարերքի դեմ աշխատելով ճյուղերով սատար լինել մեկմեկու:
5. Ի սկզբանե լինելով հեղիեղուկ ու ամբարիշտ Աստծո ստեղծած էակները մարդիկ չլսեցին նրան և խարվելով օձից կերան կենաց ծառի արգելված պտուղը:
6. Յաղթելով առյուծին Սմբատ Բագրատունին անուշադիր ամբոխի գոռում-գոչունին պայքարից ու լարումից հոգնած նստեց իր սպանած առյուծի դիակի վրա շունչ քաշելու և փոքր-ինչ հանգստանալու:

Վարժություն 227: Կետադրեցեք, դերբայական դարձվածը դարձեք նախադաս, միջադաս և վերջադաս:

Եվան ձանձրացած ... :

Զանձրացած իր ....:

Վարժություն 228: Փոփոխեցեք դերբայական դարձվածի շարադասությունը երկու ձևով:

1. Զարմանալի բնությունը ստիպում է մարդուն տառապելով ապրել՝ ծածուկ պահելով ապրելու իմաստն ու նպատակը:
2. Բնավորությամբ անհանգիստ լինելով՝ Անդրանիկը չեր կարողանում որևէ գործի ամուր կպչել:
3. Մոլեգին ծովը, ջարդուփշուր անելով ալիքները, շարունակում էր ճակատամարտել:
4. Խոտի դեզի վրա պառկած՝ նա շարունակ երկնքին էր նայում:
5. Անցնելով իինավուրց կամրջի վրայով՝ մենք նոտեցանք վեհաշուք եկեղեցուն:
6. Լեռնաշխարհի վրա արևի վաղորդյան ճառագայթների ներքո մշուշն աստիճանաբար անէացավ՝ տարրալուծվելով օդեղեն բարձունքներում:

Վարժություն 229: Տրված դերբայներով կազմեցեք դերբայական դարձվածներ և դրանք գործածեցեք նախադասությունների մեջ:

Ունկնդրելու, դիտելով, մարզվելիս, հանգստանալու, հիացած, բացատրելիս, պարտվելով:

**Իսկ գիտե՞ք, որ...**

Աշխարհում ամենաթանկ կինոնկարը «Կլեոպատրան» է: Այդ ֆիլմի վրա ծախսվել է 42 միլիոն դոլար՝ ծգտելով հանդիսատեսներին շլացնել փղերի, ռազմիկների առատությամբ, թագավորական գեղեցկուհու հագուստների շքեղությամբ:  
Կլեոպատրայի դերը կատարում է Էլիզաբեթ Թեյլորը:

## **Բազմակի անդամներ, կոչական, կետադրությունը**

**Վարժություն 230: Կետադրեցեք ինքնուրույն:**

1. Երիտասարդը նայում էր անթարթ ազահ աչքերով և մարդկային ոչ մի ստվեր չէր տեսնում ոչ սյունազարդ ճեմելիքում ոչ երկար սանդուղքի վրա, ու պալատը նրան թվում էր լրկած ու ամայի:

2. Շուշանիկը մերթ կարմրում էր մերթ գունատվում մերթ ուզում էր քայլերն արագացնել և շուտ տուն հասնել:

3. Բնությունը ոչինչ չէր խնայել այդ սիգապանծ մարդում՝ ոչ հմայք ոչ ուժ ոչ տոկունություն ոչ կորով ոչ խելք:

4. Միայն խնդրում են ներեք նրանց՝ իմ խեղճ իմ անբան հայրենակիցներին:

5. Երգեց խինորվ ավյունով կրակով:

6. Կոմիտասը ցուց տվեց աշխարհին մեր ազգային երգը՝ մաքրված ինքնուրույն և անաղարտ:

**Վարժություն 231: Ավարտեցեք նախդասությունները:**

Ոչ թե ... ..., այլ ... :

Ոչ միայն ... ..., այլև ... :

Թեև ... ..., բայց ... ... :

Քանի որ ... ..., ուստի ... ... :

Եթե ... ..., ապա ... ... :

Որովհետև ... ..., ուստի ... ... :

Չնայած ... ..., բայց ... ... :

Թեև ... ..., այնուամենայնիվ ... ... :

**Վարժություն 232: Կետադրեցեք ինքնուրույն, ընդգծեցեք կոչականները, բացատրեցեք դրանց շարադասությունը:**

1. Մարզպետունի իշխանը դարձավ Ամրամին

Լսիր Ամրամ Մարզպետունի նախարարները միշտ հպարտ են եղել, բայց նրանց ժառանգը գերադասում է հայրենասիրությունը:

2. Լավ հայր սուրբ պատասխան թղթի մեջ դու ճառեցիր, թե այս հավատից մեզ չեն կարող խախտել ոչ մարդիկ ոչ հրեշտակներ:

3. Դու երբվանի՞ց գիտես ինձ ծերունի:

4. Յը՞ բարեկամս ասածներս կատարվեցին:

5. Մերուժան վերջ տուր քո չարագործություններին:

**Վարժություն 233: Տրված բառերն ու կապակցությունները նախդասությունների մեջ տարբեր շարադասությամբ գործածեցեք որպես կոչականներ և կետադրեցեք:**

Հայոց լեզու, հարազատ հայրենիք, գարուն, իմ սիրելի ընկեր, գիրք, մտերիմներ:

**Վարժություն 234:** Գրեցե՛ք նամակ՝ գործածելով կոչական բառեր՝ առանց լրացումների և լրացումներով։ Բացատրեցե՛ք կետադրությունը։

**Վարժություն 235:** Ընդգծեցե՛ք կոչականներն իրենց լրացումներով։ Բացատրեցե՛ք դրանց կետադրությունը և լրացումների շարադասությունը։

Դու պիտի ծաղկե՛ս, երկի՛ր Յայաստան,  
Քո ոգով, ոճով և բարձրագլուխ...

**/Ավ. Իսահակյան/**

Յե՛յ, պարոննե՛ր, ականջ արեք  
Թափառական աշուղին,  
Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տըղերք.  
Լա՛վ ուշ դըրեք իմ խաղին։

**/Բ. Թումանյան/**

Իսկ գիտե՞ք, որ...

Մինչև 17-րդ դարի կեսերը Վենետիկում կախաղան էր սպասվում նրանց, ովքեր կփորձեին տարածել հայելի պատրաստելու գաղտնիքը։ Յայելու արտադրությունը Վենետիկի մենաշնորհ էր։

### **Մեջբերվող ուղղակի խոսք. շարադասությունը, կետադրությունը**

**Վարժություն 236:** Կարդացե՛ք համապատասխան հնչերանգով։ Որոշեցե՛ք մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսքերը։ Բացատրեցե՛ք դրանց կետադրությունը, շարադասությունը։

Ա. – Ի՞նչ պիտի անենք այժմ,- սրտատրով հարցրեց թագուհին։

- Ոչինչ, - անհոգ եղանակով պատասխանեց թագավորը,- եթե արաբացիք կփորձեն մոտենալ մեր կղզուն, մենք կջարդենք նրանց լաստերը և իրենց էլ ջրի հատակը կխորասուցենք։

- Բայց ի՞նչ ուժով. մենք այստեղ ընդամենը հարյուր զինվոր ունենք,- հարցրեց թագուհին երկյուղագին։

- Յարյուրն էլ միաբա՞ն,- հարեց թագավորը.- ով որ ազգի հացն է ուտում, ազգի համար էլ կարող է կրվել։

**/Սուրացան/**

Բ. Մնում էր ժամերով, զանգատվում էր, թե տանջվում է անքնությունից... Յարցնում էր, թե արտասահմանի հետ առհասարակ փոստային ազատ հաղորդակցություն կա՞՝, թե՞ ոչ։ /Ն.- Դ./

Պահակին հարցրեց, թե ովքեր են եկվորները, ինչ են փնտրում բերդի ավերակներում: /Ա. Բ./

Նայրը հրամայեց, որ յուր ամենալավ վրաններից մեկը հատկացնեն Սամվելին և այնտեղ պատրաստեն նրա անկողինը: /Ռաֆֆի/

### Վարժություն 237: Որոշեցե՛ք հեղինակային խոսքը և մեջբերվող խոսքը: Կետադրե՛ք, բացատրեցե՛ք կետադրությունը:

Ա. Ղազար Փարպեցին ասել է խոհեմ իմաստությամբ կարելի է հաղթել մեծ զորությանը:

Մարդու ստեղծած հրաշալիքներից մեծագույնը գիրքը գրել է Մաքսիմ Գորկին իր մեջ մարմնավորում է աշխարհի լյանքի մասին բոլոր գիտելիքները:

Լեզուն կարելի է համեմատել անտառի իսկ ոճը առանձին ծառի հետ գրել է Շիրվանզադեն:

Բ. Աբաս թագավորն իմացավ որ ծերունի իշխանը օրըստօրե տկարանում է ուստի դիմեց նրա մոտ իմանալու համար թե ուր կկամենար որ մահվանից հետո յուր մարմինն ամփոփեին:

Ին երդումն արգելում է ինձ թաղվել Գառնիում ասաց իշխանը թաղեցե՛ք իմ հայրենիքի որ անկյունում որ կկամենաք:

Կցանկանայի քո մարմինը տանել Բագարան և թաղել Բագրատունյաց պայազատների դամբարանում ասաց թագավորը:

### Վարժություն 238: Ուղղակի խոսքը դարձրե՛ք անուղղակի:

1. Տեսնելով տնօրենին՝ քարտուղարը հարցրեց.

- Ինչո՞ւ եք մնում քաղաքում. չէ՞ որ այստեղ մնալով՝ Դուք վտանգի եք ենթարկվում:

2. - Այսօրվա Զեր վարմունքն ու ձևերը միանգամայն ազնվականի են,- ասաց տանտերը Սուլրենին,- և դրանք զարմացնում են ինձ ու իմ հյուրերին:

3. Նա ավելացրեց՝ ասելով.

- Ես միայն զգուշացնում եմ, սպարապե՛տ, մնացածը որոշի՛ր դու ինք:

4. Դասից հետո կարդացի դեկավարության հայտարարությունը, որտեղ գրված էր. «Զեզ՝ ուսանողներիդ համար մենք ստեղծել ենք բոլոր հնարավոր պայմանները, որ դուք այստեղ որևէ դժվարություն չունենաք»:

5. «Դուրյանի տիխորության շարժիչը նույն իր անձն է, ինս՝ ուրիշները,- գրում է Վարուժանը և ապա ավելացնում,- Դուրյանը ողբում է իր ժպտալ չկարողանալուց, ես ողբում եմ գութիցս և բարկությունիցս»:

### Վարժություն 239: Անուղղակի խոսքը դարձրե՛ք ուղղակի:

1. Բագրատունին գորավարների հայտնեց, որ շտապեն օգնություն հասցնել իրեն, որովհետև ինքը որոշել է իր հեծելազորով հետապնդել փախչողներին:

2. Ծանր մտորումների մեջ էր իշխանը, թե ինքը ինչ անի, ում դիմի, որ իրեն հասկանան ու օգնեն:

3. Եկավ դերվիշը, արձանացավ Սֆինքսի առջև և ասաց, որ եկել է նրա մոտ, որպեսզի հարցում անի և իմանա, թե ինչ է երջանկությունը:

4. Գևորգ իշխանը ասաց տիրուհուն, որ նա իրենց թույլ տա ընդառաջ գնալ հարյուրապետին, և չսպասելով պատասխանի՝ վեր կացավ գահավորակից:

5. Մի առիթով՝ Պարույր Սևակը գրել է, որ ինքը «Վերնագիրը վերջում» -ը համարում է իր բոլոր գրածների մեջ հազվագյուտներից մեկը:

**Վարժություն 240: Տեքստից որոշեցնեք նախադասություններն ըստ կառուցվածքի, պատմեցնեք բնագիրը:**

### **Մեղրը կենցաղում և սպորտսմենների օրաբաժնում**

1955թ. հոկտեմբերի մի ամսագրի համարներից մեկում Լոյդ Փրսիվալի հոդվածում շատ լավ լուսաբանված է գյուղաբնակների կողմից մեղրի ռացիոնալ օգտագործման հարցը: Ես կուգենայի մեջբերել այդ հոդվածից, քանի որ ներկայումս դպրոցներում և քոլեջներում շատ մեծ ուշադրություն է հատկացվում սպորտին:

Սպորտային խմբերի մարզիչները մշտապես փնտրում են նոր միջոցներ, որոնք կօգնեին և փորձված սպորտսմեններին, և նորեկներին՝ պահպանելու և էլ ավելի զարգացնելու իրենց օրգանիզմի ուժերը, տոկունությունն ու եռանդը:

1951թ.-ից սպորտային քոլեջներում սիստեմատիկ անց էին կացվում սպորտսմեններին սմնորի մեջ մեղրի նշանակությունը որոշող էքսպերիմենտներ: Սովորության և լավ տարածվածության պատճառով մենք ևս օգտագործում էինք այն որպես առողջ սնունդ: Օրգանիզմը ակտիվացնող, ինտենսիվ մարզումներից հետո ուժերի վերականգնումը խթանող, ֆիզիկական մեծ ծանրաբեռնվածության դեպքում օրգանիզմը ակտիվ վիճակում պահելուն նպաստող սննդամթերքների հետազոտման ընթացքում առաջացավ կենդանի հետաքրքրություն՝ հայտնաբերելու այնպիսի սննդարար կերակուրներ և ընպելիքներ, որոնք կարելի կլիմեր առավելագույնս օգտագործել վերը նշված նպատակներով:

Մթերքների՝ մեր կողմից անցկացված փորձառնան արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ

1) մեղրը ըստ հնարավոր օբյեկտիվ գնահատանքի, գերազանց էներգետիկ սննդամթերք է՝ անհրաժեշտ ֆիզիկական մեծ ծանրաբեռնվածությունից առաջ լիցքավորելու, առավելագույն ակտիվության դեպքում օրգանիզմի լարվածությունը պահպանելու և ծայրահեղ լարվածությունից հետո էներգիայի արագ վերականգնման համար:

2) Շնորհիվ իր բարձր կալորիականության՝ մեղրը նույնիսկ փոքր չափերով կարող է էներգիայի աղբյուր համարվել:

3) Այն սիրված է սպորտսմենների կողմից իր համային որակի պատճառով:

4) Յուրաքանչյուր սպորտսմեն կարող է օգտագործել միջին հաշվով ավելի մեծ քանակությամբ մեղր, քան փորձարկմանը ենթարկված ուրիշ էներգետիկ սննդամթերք կամ ընպելիք:

Որպես հետևանք վերը ասվածին՝ մենք առաջարկում ենք մեղրը՝ որպես լիցքավորող միջոց ֆիզիկական մեծ ծանրաբեռնվածությունից առաջ, որպես կերակրատեսակ օրգանիզմի առավելագույն ակտիվության շրջանում, երբ օրգանիզմը ֆիզիկական մեծ ծանրաբեռնվածություն կրելուց հետո հյուծված է ամենօրյա օգտագործման համար, առանձնապես նախաճաշի ժամանակ բարելավելու օրգանիզմի առօրյա էներգետիկ պահանջները:

Սպորտսմենի տոկունության քննությունը ցույց տվեց, որ առավելագույն արդյունք ապահովում է 2 ճաշի գրաւ մեղրի ընդունումը մրցումներից կես ժամ առաջ: Մրցումների ժամանակ մեղրով լրացուցիչ կերակրելու դեպքում սպորտսմենների մոտ գրանցվում են ավելի բարձր ցուցանիշներ: Կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ մեղրը օգտագործելու դեպքում ուսանողները ավելի լավ են յուրացնում ուսումնական նյութը, որովհետև մեղրը նպաստում է պարապունքների ժամանակ ծախսված էներգիայի վերականգնմանը:

4 տարվա ընթացքում իսկ սպորտային քոլեջներում մարզիկների վրա մեղրի ազդեցության մասսայական փորձարկման հետևանքով արված եզրակացությունների համաձայն՝ մեղրը իրենից ներկայացնում է ֆիզիկական մեծ ծանրաբեռնվածություն, հետո ուժերի վերականգնմանը նպաստող գերազանց էներգետիկ սննդամթերք: Մեղրը կարելի է վստահորեն առաջարկել նրանց, ովքեր զբաղվում են սպորտով և բոլոր նրանց, ովքեր ցանկանում են լինել ակտիվ և աշխատունակ անբողջ օրվա ընթացքում:

### Ի՞սկ գիտեք, որ...

Յունարեն «գիմնոս» բառը նշանակում է մերկ, մերկացած: Յին Յունասատանում ատլետները օլիմպիական խաղերում հանդես էին գալիս մերկ վիճակում: Այն հատուկ դպրոցները, որտեղ երիտասարդ հելենները պարապում էին մարմնամարզություն, կոչվում էին գիմնասիաներ: Այդ պատճառով էլ հետագայում ֆիզիկական վարժությունները սկսեցին կոչել գիմնաստիկական:

## Գործնական գրություններ

### Դիմումի նմուշ

Ֆիզիկական կուլտուրայի հայկական  
պետական ինստիտուտի ծանրամարտի,  
բռնցկանարտի և սուսերամարտի ամբիոնի  
վարիչ պրոֆեսոր Գ.Ն. Ազիզյանին  
Նույն ինստիտուտի մարզամանկա-  
վարժական ֆակուլտետի 1-ին կուրսի 4-րդ  
խմբի ուսանող Տրդատ Կիրակոսյանից

#### Դիմում

Բացակայությունների պատճառով առաջին կիսամյակում զրկվել  
եմ կրթաթոշակից: 2-րդ կիսամյակում չունեմ ոչ մի բացակայություն:  
Խնդրում եմ վերականգնել կրթաթոշակս: Խոստանում եմ  
չբացակայել և բարձրացնել առաջադիմությունս:

Դիմող՝ /ստորագրություն/ S. Կիրակոսյան

06.05.05

## *Լիազորագրի նմուշ*

### **Լիազորագիր**

Ես՝ մարզամանկավարժական ֆակուլտետի փրկարարական գործ բաժնի, 2-րդ կուրսի ավագ Հակոբ Պետրոսի Հովհաննիսյանս, լիազորում եմ նույն կուրսի ուսանող Գրիգոր Դավթյանին՝ ինստիտուտի գանձ-արկղից ստանալու մայիս ամսվա կրթաթոշակը:

/ստորագրություն/ Հ. Հովհաննիսյան

05.06.05

\*Ստորագրությունը պետք է հաստատվի դեկանատի կամ կագրերի բաժնի կողմից:

## *Ստացականի նմուշ*

### **Ստացական**

Ես՝ Գուրգեն Ավետիքի Հարությունյանս (անձնագրի տվյալները՝ ԱԲ 05716681), Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի գրադարանի վարիչ Ն. Հակոբյանից ստացա 30/երեսուն/ օրինակ Ռուսաց լեզվի ձեռնարկ:

/ստորագրություն/ Գ. Հարությունյան

05.06.05.

## **Երաշխավորագրի նմուշ**

### **Երաշխավորագիր**

Արմեն Մանուկյանը սովորում է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում: Ուսումնառության տարիների ընթացքում ցուցաբերել է օրինակելի վարք և լավ առաջադիմություն:

Նկատի ունենալով Արմեն Մանուկյանի ընդունակությունները և կայուն, հաստատակամ բնավորությունը և այն հանգանանքը, որ նա տիրապետում է մի քանի սպորտաձևի, ամբիոնը Երաշխավորում է նրան աշխատելու Երևանի թիվ 291 դպրոցում որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ:

Ամբիոնի վարիչ /ստորագրություն/ Գ. Հակոբյան

05.06.05.

## **Բնութագրի նմուշ**

### **Բնութագիր**

Մուշեղ Աշոտի Մելիքյանը /ծնված 1987թ. Երևանում՝ ծառայողի ընտանիքում/ 2004թ. ընդունվել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի կիրառական մարզաձևերի ամբիոնի փրկարարական գործ բաժինը:

Ուսումնառության տարիների ընթացքում իրեն դրսևորել է որպես օրինակելի ուսանող: Նա աշխատանքը և պրատող է, չի բավարարվում ինացածով և ձգտում է հարստացնել գիտելիքները: Ընկերասիրության, ճշտակատարության, աշխատասիրության և մարդկային անբասիր խառնվածքի շնորհիվ Մուշեղ Մելիքյանը վայելում է համակուրսեցիների, դասխոսների հարգանքը և համակրանքը:

Ամբիոնի վարիչ՝ /ստորագրություն/ Գ. Հակոբյան  
Ուսխորհրդի նախագահ՝ /ստորագրություն/ Գ. Շովիաննիսյան

## Ինքնակենսգրության օրինակ

### Ինքնակենսագրություն

Ես՝ Ռուբեն Արտակի Օհանյանս, ծնվել եմ 1979թ. Երևանում՝ մտավորականի ընտանիքում: Հայրս՝ Արտակ Օհանյանը աշխատում է ՀՀ ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Մայրս՝ Ծովինար Օհանյանը ուսուցչուհի է Երևանի թիվ 19 միջնակարգ դպրոցում: Քույրս և եղբայրս դպրոցականներ են:

1986թ. ընդունվել և 1996թ. ավերտել եմ մայրաքաղաքի թիվ 71 միջնակարգ դպրոցը: Ուսումնառության տարիներին սովորել եմ բավարար առաջադիմությամբ, հատուկ հետաքրքրություն եմ ցուցաբերել հումանիտար առարկաների և ֆիզիկական կուլտուրայի նկատմամբ: Զուգահեռ պարապել եմ Օլիմպիադական հերթափոխի ֆուտբոլի մարզադպրոցում: Մասնակցել եմ Ֆրանսիայում կայացած պատանիների սպարտակիադային 1992թ., որտեղ թիմը գրավել է 2-րդ տեղը:

Սիրում եմ իմ մասնագիտությունը:

/ստորագրություն/ Ռ. Օհանյան

05.06.05.

## *Դիմումի նմուշ*

Ֆիզիկական կուլտուրայի հայկական  
պետական ինստիտուտի ռեկտոր,  
պրոֆեսոր պարոն Վ.Բ. Առաքելյանին  
մարզառողջարարական ֆակուլտետի  
1-ին կուրսի 4-րդ խմբի ուսանող Կարեն  
Սարգսի Մինասյանից

### **Դիմում**

2005 թվականի փետրվարին Եվրոպայում կայացած մրցաշարում գրավել եմ  
առաջին տեղը և պարզեցնելու արտասահման մեկնելու տասնօրյա ուղեգրով:  
Խնդրում եմ մեկնումս թույլատրել և բացակայությունս համարել հարգելի:

Դիմում՝/ստորագրություն/ Կ.Մինասյան

05.06.05.

## Կարդացեք մեծերի նամակները

### **Չարլի Չապլինի նամակը դստերը (կրծատումներով)**

Դստրիկս,

Չինա գիշեր է: Ծննդյան գիշեր: Ին փոքրիկ ամրոցի բոլոր անգեն պահապանները քնել են: Քնած են և եղբայրու ու քույրու: Նույնիսկ մայրու արդեն քնել է: Ես քիչ մնաց արբնացնեի այդ նիրինու թռչնակներին, մինչև կհասնեի իմ այս աղոտ լուսավորված սենյակը:

Ինչքան հեռու են քեզանից, բայց թող կուրանան աչքերս, թե քո պատկերը թեկուզ մի ակնբարթ հեռանում է աչքիս առաջից: Նա այնտեղ է՝ իմ սեղանին, այստեղ՝ իմ սրտի մեջ: Այդտեղ՝ հեքիաթային Փարիզում, դու պարուն ես փառահեղ թատրոնի բեմահարթակի վրա... Գեղեցկուիհի՝ եղիր և պարիր, անստու եղիր ու փայլիր, բայց եթե հանդիսատեսի ցնծությունն ու շնորհակալության խոսքերն արբեցնեն քեզ, եթե գլուխու պտույտ գա քեզ ընծայված ծաղիկների բույրից, ապա քաշվիր մի անկյուն և կարդա՛ իմ նամակը, ունկնդիր եղիր հորդ ձայնին:

Գիտե՞ս, թե քանի գիշեր են անցկացնել քո մահճակալի մոտ, երբ դու փոքր էիր, քեզ հեքիաթներ էի պատմում և քնած գեղեցկուիհու, և մշտարթուն վիշապի մասին... Ես տեսնում էի քո ապագան, քո այսօրը, ես տեսնում էի բեմահարթակի վրա խաղացող մի աղջկա, երկնքում ճախրող մի փերու:

...Պարիր:.... Այդ պարերն ու ծափահարությունների որոտը քեզ երկինք կհանեն: Բարձրացիր: Բարձրացիր այնտեղ, աղջկիս, բայց և վերադարձիր երկիր. դու պետք է տեսնես՝ ինչպես են ապրում մարդիկ, ինչպես են ապրում այն ծայրամասերի փողոցի պարուիհիները. նրանք պարուն են ցրտից ու սովից դողալով: Ես այնպիսին են եղել, ինչպիսին նրանք են, Զերալդինա:... Ես շատ հեքիաթներ են պատմել քեզ այն երկար գիշերներին, բայց իմը՝ իմ հեքիաթը, չեմ պատմել: Իսկ դա նույնպես հետաքրքիր է: Հեքիաթ՝ քաղցած ծաղրածուի մասին, որ ապրուն ու երգուն էր Լոնդոնի աղքատ թաղամասերուն, իսկ ապա... ողորմածություն հայցուն...

Ահա նա՝ իմ հեքիաթը: Ես գիտեմ՝ ինչ քան է սովը, ինչ է անօթևան լինելը: Դեռ ավելին, ես ճաշակել եմ ստորացնող մորմոքը այն թափառական ծաղրածուի, որի կրծքի տակ փորորկում էր հպարտության մի ամբողջ օվկիանոս, և այդ հպարտությունը մեռցնում էին նետած դրամները...

Ավելի լավ է խոսենք քո մասին:

Քո անվանը, Զերալդինա, հետևում է իմը՝ Չապլին: Այդ անունով ես ավելի քան քառասուն տարի ծիծաղեցրել եմ մարդկանց: Բայց ես ավելի լաց եմ եղել, քան նրանք ծիծաղել են: Զերալդինա, այն աշխարհում, որ ապրում ես դու, միայն պարերն ու երաժշտությունը չեմ, որ գոյություն ունեն... Կեսգիշերին, երբ դու դուրս ես գալիս մեծ դահլիճից, կարող ես նոռանալ քո հարուստ երկրպագուներին, բայց մի՛ նոռանա այն տաքսու վարորդին, որը քեզ տուն է տանում, հարցրու նրա կնոջ մասին... Եվ եթե նրանք փող չունեն երեխայի համար շապիկներ գնելու, փող դիր նրա ձեռքը: Ես կարգադրել եմ, որպեսզի քանկում վճարեն քո այդորինակ ծախսերը: ... Ժամանակ առ ժամանակ օգտվիր մետրոյից կամ շրջիր ավտոբուսով և ավելի հաճախ քայլիր, դիտիր քաղաքը: Զննիր մարդկանց, նայիր այրիներին և որբերին և գոնե օրը մեկ անգամ ասա՛ ինքդ քեզ. «Ես այնպիսին եմ, ինչպիսին նրանք»: Այո՛, դու հենց այնպիսին ես, ինչպիսին նրանք են, դստրիկս: Եվ նույնիսկ ավելի պակաս: Արվեստը, նախքան սովորաբար կոտրում է նրա

ոտքերը: Եվ եթե գա այն պահը, երբ դու քեզ վեր զգաս հասարակությունից, անմիջապես թո՞ղ բեմը: Նստի՞ր առաջին իսկ պատահած տաքսին և գնա՞ Փարիզի արվարձանները:

Դրանք ինձ շատ լավ ծանոթ են: Դու այնտեղ կտեսնես շատ պարուիհների, այնպիսին-ներին, ինչպիսին դու ես, նույնիսկ ավելի գեղեցիկների, ավելի նազելիների, ավելի հպարտների, քան դու ես: Քո բատրոնի լուսարձակների կուրացուցիչ լույսերն այնտեղ չկան: Նրանց լուսարձակը լուսինն է:

Նայիր, ուշադիր նայիր: Չի՞ թվում քեզ արդյոք, որ նրանք քեզանից լավ են ապրում: Խոստովանիր, աղջիկս: Միշտ էլ կգտվի մեկը, որ քեզնից լավ կպարի և քեզնից լավ կխա-ղա: Եվ հիշիր, Չարլիի ընտանիքում չի եղել այնքան անտաշ մեկը, որ հայիոյեր կառա-պանին կամ ծաղրեր Սենայի ափին նստած աղքատին:

... Այս նամակի հետ քեզ ուղարկում են չլրացված դրամական չեկ, որպեսզի դու կարողանաս ծախսել այնքան, որքան ցանկանում ես: Բայց երբ ծախսես երկու ֆրանկ, մի՛ մոռանա հիշեցնել քեզ, որ երրորդը քոնը չէ և պետք է պատկանի այն անծանոթին, որն ունի դրա կարիքը: Իսկ դու կգտնես այդպիսի մեկին: Ես խոսում են փողի մասին, որովհետև գիտեմ նրա դիվային ուժը: Գիտես ես շատ ժամանակ են անցկացրել կրկեսում և միշտ երկյուղ են զգացել լարախաղացների համար: Բայց պետք է քեզ, աղջիկս, ասեմ մի ճշմարտություն. մարդիկ գետնի վրա ավելի անհաստատ են, քան լարախաղացները՝ երերուն լարի վրա: Գուցե կարող է պատահել՝ այս գիշեր քեզ կուրացնի մի թանկագին աղամանի փայլը. հենց դա էլ կլինի քո անհուսալի պարանը, և քո անկումն անխուսա-փելի է:

... Ուզում են հավատալ, որ ծննդյան այս գիշերը հրաշալիքների գիշեր է: Ես կցանկա-նայի, որ հրաշք կատարվեր, որ դու իսկապես հասկանայիր այն բոլորը, ինչ ցանկացա ասել քեզ:

... Ես հրեշտակ չեմ եղել, բայց որքան կարողացել են, ձգտել են մարդ լինել:

Փորձիր և դու:

Յանբուրում են քեզ:

Չարլի

## Ժորժ Սանդի նամակը Ալֆրեդ դը Մյուսեին

(Կրօծատումներով)

12 նայիսի 1834թ.

Ոչ, սիրելին, այս վերջին նամակը մի՛ համարիր վերջին ծեռքսեղմումը քեզ սիրող կնոջ. դա քո քրոջ ողջագուրանքն է: Այդ զգացումը այնքան մաքուր է, այնքան գեղեցիկ, այնքան քննուշ, որ երբեւ չէի ուզենա կորցնել: Թող հիշողություններն իմ մասին երեք չխամրեցնեն քո ուրախությունը: Սիրված ու երջանիկ եղիր: Սրտիդ գաղտնարանում պահիր իմ սերը, տխուր օրերն հիշիր, որ միսիթարվես:

Մնաս բարով, չեմ ուզում լքել քեզ ու չեմ ուզում նորից քեզ հետ լինել: Ոչի՞նչ, ոչի՞նչ չեմ ուզում: Յինա ծնկաչոք եմ, բոլորովին ջարդված. թող այլս ինձ ոչինչ չասեն: Ուզում եմ գրկել հողն ու արտասվել: Չեմ սիրում քեզ այլս ու սիրում են հավերժ: Այլս քեզ չեմ սիրում, բայց և առանց քեզ չեմ կարող: Թվում է, թե միայն երկնային ամպրոպը կամոքի ինձ՝ ոչնչացնելով...

Մնաս բարով, մեկնի՛ր կամ մնա՛, միայն թե մի՛ ասա, որ չես տառապում: Միայն դա բավական է, որ ավելի տառապեմ...

## Գործնական նամակ

1915, 7- 21 Պետերբուրգ\*

Մեծարգո՛ Ալեքսեյ Սարսիմովիչ,

Մոտ օրերս պատրաստ կլինի Սունդուկյանի «Պեպոյի» թարգմանությունը: Բարի եղեք հայտնել ինձ, թե ինչպես վարվեմ: Թարգմանությունն ուղարկեմ Զե՞զ, թե՞ զամ (ինչպես պայմանավորվել էինք, եթե չեք մոռացել այդ): Դուք մտադիր եղեք այժմ և թե՞ ձեռնամուխ լինել թարգմանությանը: Եթե իմ ներկայությունն անհրաժեշտ համարեք, ես կարող եմ զալ շաբաթ օրը՝ հետո բերելով արդեն պատրաստ ձեռագիրը («Պեպոյի» բառացի թարգմանության): Բանաստեղծներից մնում է թարգմանել մի քանի գործեր, որոնք չեն մտել նրանց բանաստեղծությունների գրքերի մեջ և ցրված են զանազան պարբերական հրատարակություններում: Այդ գործերը կը ներեմ և կներկայացնեմ թարգմանիչներին:

Ժողովածուի վերաբերյալ մնացած բոլոր հարցերի մասին անձամբ կհայտնեմ Զեզ:

Վահան Տերյան

\* Տրվում է որոշ կրծատումներով և խմբագրումով:

## Կապակցված խոսք

### Աշնանային գույներ

#### ԲԱՌԱԾԱՐՔ:

Գեղանկարիչ, գույների համակարգ, անշրջանակ կտավ, վրձնել, ձորալանջ, անտառ, նրբորեն, քանուն ավար դառնալ, կախարդական, օրեցօր, խամրել, գունաբափվել, տերևաթափ:

### Իմ երազանքը

#### ԲԱՌԱԾԱՐՔ:

Մանկության հեքիաթներ, դպրոցական տարիներ, գեղարվեստական գրքեր, զանազան հետաքրքրություններ, հրապուրվել, աստիճանաբար, հերոս, բուռն ձգտում, նպատակ դնել իրականացնան ճանապարհին:

### Երևանում

#### ԲԱՌԱԾԱՐՔ:

Զբոսաշրջիկներ, հիացմունքով դիտել, բազմերանգ տուֆ, օպերային թատրոնի շենք, հայակական զարդաքանդակներ, խաղող, նուռ, ճարտարապետ, հանճարեղ նախագիծ, օղակաձև զբոսայգի, ցայտաղբյուրներ, եղեռնի հուշակորող, ազատարտիկների շիրիմներ:

## Կարոտ

### ԲԱՌԱԾԱՐՔ:

Հեռավոր ափեր, հարազատներ, մերթընդմերթ, ընդհատված, նամակագրություն, տառապած հող, ձգտում, երազի թևերով, հայրենաբաղծություն, բնօրիան, տագնապել, վերադարձ, ցանկալի, հանգրվան:

## Հրաժեշտ դպրոցին

### ԲԱՌԱԾԱՐՔ:

Մաշտոցյան այբուբեն, սիրելի ուսուցիչ, համադասարանցիներ, արձակուրդներ, աստիճանաբար, ծնողական ժողով, կողմնորոշվել, քնություններ, հուզումնալից իրավիճակ, վերջին զանգ, ծրագրեր:

## Լեռներ հայրենի

### ԲԱՌԱԾԱՐՔ:

Լուսաբացի զովություն, կապտալուրթ երկինք, ծյունածերմակ գագաթներ, հիանալ, անտառածածկ լանջ, անձրևել, ծիածան, գեղեցկանալ, դարեդար, պատմության վկա, հավերժության խորհուրդ:

## Մեր նախահայրերը

### ԲԱՌԱԾԱՐՔ:

Հայկական լեռնաշխարհ, բնօրիան, անհիշելի ժամանակներ, բարբարոս հարևաններ, դարեդար, հավիտենական գոյամարտ, արժանապատվություն, ազգային ոգի, ինքնատիպ նշակույթ, հարատևել:

## Անձրև

### ԲԱՌԱԾԱՐՔ:

Երկարատև, անձրև, տաղտկալի օր, սևագորշ երկինք, պղտոր ջրեր, անձրևանոցներով մարդիկ, միջօրե, փողոց, եռուզեռ, արև, կենդանություն, զարթոնք ապրել, երրորդ օր:

## Ծովափիին

### ԲԱՌԱԾԱՐՔ:

Անդորր ծով, ոսկեծուկի կոհակներ, արևի դեղձան ճառագայթներ, մեղմ սյուք, միջօրե, անակնկալ, մռայլ թուխապեր, մթագնել, սաստկացող քամի, մրրկածեծ հողմ, մոլեգին հորձանք, ափամերձ ժայռեր, բնության տարերք:

## Արշավ

**ԲԱՌԱԾԱՐՔ:** Վաղորդյան, չանեացած, ուղևորվել, ոսկեշող աշուն, անդորր, առավոտ, թռչունների զվարք ճռվողյուն, տերևների սոսափ, սաղարթախիտ անտառ, փշոտ մասրենի, դժվարին վերելք, հասուն հատապտուղ, լի զամբյուղ, բարձր տրամադրություն:

## Ծոգ ամառ

**ԲԱՌԱԾԱՐՔ:** Ավարտական երեկո, կարճատև հանգիստ, հուլիսյան արև, մեկնել, ձորնիվար, գետակ, գողտրիկ անկյուն, պատրաստվել, երազանք, մասնագիտություն ընտրել, նպատակին ձգտել, քննություններ:

## Ցայտաղբյուրներ

**ԲԱՌԱԾԱՐՔ:** Ծարավը կոտրել, քաղցրահամ ջուր, վեր ցայտել, խոնարհվել, Հայաստան, ամենուր, քարտաշ-վարպետ, մեսրոպատառ, մակագրություն, աղբյուր-հուշարձան, օրինություն, կյանքի ինաստ, խաչքար:

## Աշնանային գույներ

**ԲԱՌԱԾԱՐՔ:** Գեղանկարիչ, գույների համակարգ, անշրջանակ կտավ, վրձնել, ձորալանջ, անտառ, նրբորեն, քամուն ավար դառնալ, կախարդական, օրեցօր, խամրել, գունարփիվել, տերևաթափ:

## Ցուցահանդես

**ԲԱՌԱԾԱՐՔ:** Մանկական ցուցահանդես, վառ գույներ, ինքնատիպ մտածողություն, ջրաներկ, յուղաներկ, մատիտանկար, իրական և մտացածին կերպարներ, հեքիաթների հերոսներ, խոստումնալից ապագա, շնորհալի երեխաներ, մարդկանցով լեցուն ցուցասրահներ, հետաքրքրություն:

## Երկրաշարժ

**ԲԱՌԱԾԱՐՔ:** Ղեկտեմբերյան ցուրտ օր, ահօելի ցնցում, սարսափած մարդիկ, երջանիկ անգիտության մեջ, լեփ-լեցուն փողոցներ ու բակեր, խարույկներ, տագնապալի լուրեր, հեռուստաէկրան, բժշկական անձնակազմ, օդանավակայան, պատգարակներ, մայրուղիներ, խճողում, ցնցող ողբերգություն:

## **Ծովանկարիչը**

### **ԲԱՌԱԾԱՐՔ:**

Աշխարհահռչակ ծովանկարիչ, Յովիաննես Այվազովսկի, ալեծուի ծով, խաղաղ ծով, բազմերանգ, լուսնկա գիշեր, իններորդ ալիք, ահեղ մրրիկ, կոտրված կայմ, նավարեկյալներ, դեղնասև երկինք, անհողղող կամք, կույր տարերք:

## **Մատենադարանում**

### **ԲԱՌԱԾԱՐՔ:**

Անձեռակերտ հուշարձաններ, վկայություն, վարպետներ, ծաղկողներ, արծաթակազմ, գրքեր, մատյաններ, գրչություն, խոյակ, գմբեթարդ, ղողանջող զանգեր, հինավուրց, սերնդեսերունդ, աչքի լույսի պես պահպանել, արփիափայլ, մանրանկարչություն:

## **Գառնիի պաշարումը**

### **ԲԱՌԱԾԱՐՔ:**

Պաշարել, թշնամիներ, լռություն, կյանքը եռալ, նախապատրաստվել, հարձակում, հայոց զորք, անասելի, գլխավոր դարպաններ, հանկարծակի գալ, խուճապ, զարհուրելի կոտորած, փախուստի դիմել, հաղթական մուտք:

## **Սպասում**

### **ԲԱՌԱԾԱՐՔ:**

Խավարչտին գիշեր, խորախորհուրդ լռություն, անձուկ ձորակ, հայոց զորքեր, լարված սպասում, նոսրացող խավար, արևի վախվորած ճառագայթներ, հանկարծակի հարձակում, թշնամու խուճապահար փախուստ, զենք ու զինամթերք, լիարժեք հաղթանակ:

## **Անակնկալ հանդիպում**

### **ԲԱՌԱԾԱՐՔ:**

Մանկության ընկեր, տարիներ հետո, հանկարծ, նշանավոր մարդ, բազմամարդ դահլիճ, մեծատուն, միջոցառման ավարտ, վերհուշ, քննարկում, երջանիկ պահ: